



Ա. Գ. Ի. Ն.

Լ. Կ. Ն.
Թ. ՏԱՐԻ 1970 ՄԱՅԻՍ
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 5

باکین
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد ارثين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
Dr. A. KAZANDJIAN

բւգիւն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԴՐԱՆԱԿՆՈՒԹՅԱՆ
 ԵՒ ԱՐՈՒԾՄՅՈՒ

ԱՄՈՁ ԽՐԵԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԵԱԳԻՐ
 Պ. ՄԱՊՅԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԴԱՄՆԵՐ
 Յ. ԳԵՂԱՐԳԻ
 Տ. ՈՍԿՈՒՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Ն. ՊԱՐԹԵՒԵԱՆ
 Ժ. ԱԹԱՐԵԱՆ
 ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆՊԱՄՆԵՐԵՆ
 † ԵՒ. ՊՕՏԱՋԵԱՆ

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Յ. ԳԵՂԱՐԳԻ
- Ն. ՊԵՇԻԿՔԱՆՆԵԱՆ
- Ն. ԶԱՐԻՆՈՒՏԵԱՆ
- ԱՐՄԱՆՏ
- Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
- Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ
- Յ. ՓԱՓԱՋԵԱՆ
- Ս. ՍԱՐԳԻՍԵԱՆ
- Ռ. ԳԱՌՕՂԵ
- Շ. ՇԱՀՆՈՒՐ
- Վ. ԴԱՒԹԵԱՆ
- Բ. ԵՂԻԱՅԵԱՆ
- Լ. ՄԻՐՏՉԵԱՆ
-
- ՆՇՄԱՐՆԵՐ

Խմբագրութեան հասցէ

G. SASSOUNI
 Rue Sélim Boustani,
 Beyrouth-Liban

Հեռագրային թիւ 296898

Բազմը

ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՅԱՐԻ, ԹԻՒ 5

ՄԱՐԹԻՍ 1970

ՊԷՔՐՈՒՔ

3. ԳԵՂԱՐԴ

ՈՐՈՆՈՒՄ

Քանի՜ անգամ ես գիս ծընայ, սպանեցի ես գիս նորէն,
Քանի՜ անգամ նետուեցայ վիհ; բարձրացայ լեռ ես հեալէն,
Խաւարէն լոյս, լոյսէն խաւար քանի՜ անգամ գրեաց հոգիս,
Ծով ու ցամաք վարժորկեցան, — դեռ անվախեան կ'երբայ ուղիս:

Քանի՜ անգամ մըտայ կրկէս, անանձնացայ հիւզրս նորէն,
Քանի՜ անգամ վերցուցի սուր; խաչը ցալաց սըրտիս խորէն,
Ժըպիտ սըլի, արցունք առի, քանի՜ անգամ մըխաց հոգիս,
Վիշտրս մտցած՝ սէ՛ր երգեցի, — դեռ ծիածան չունի ուղիս:

Քանի՜ անգամ աշխարհ մըտայ, երագեցի վանքը հեռուէն,
Քանի՜ անգամ իբրեւ իշխան կամ բեռնակիր անցայ մայթէն,
Վերցուցի բեռ, ցա՛նն ուրիշին քանի՜ անգամ վըտիտ ուսիս,
Իջայ գահէն, որ մա՛րդ գտնեմ, — դեռ օթեւան չունի ուղիս:

Քանի՜ անգամ փախայ ինձմէ, իմ մորթիս մէջ մըտայ նորէն,
Քանի՜ անգամ աստղ բռնեցի, մոխիր դարձաւ արքս բոցէն,
Բաժակ զարկի՜ քարի դըպար, փըշըրուեցաւ, աւա՛ղ, հոգիս,
Գիւնիմ մտցայ՝ ջո՛ւր փնտռեցի, — անապատէն կ'անցնի ուղիս:

Քանի՜ անգամ, քանի անգամ շրիթեցի գիս շուքիս հետ,
Քանի՜ անգամ փորձեցի գո՛ւր տեսնել դէմէն իմ երանաւէտ,
Լաւ է սակայն, որ անվախեան խաւարէն լոյս սուրայ հոգիս...
Կը դառնամ շո՛ղ թէ ար մը հոգ, երբոր օր մը նանչնա՛մ ես գիս:

75

(ԳԵՂԱՐԴԻ ՄԱՐԹԻՍԻՆ) ՀԱՏՈՐԵՆ)

ԱՆՄԵՂՈՒԹԻՒՆ

Թաց է ու սպազում մայքը փողոցին...

Անճրեւը փռչրեց երգն իր լուսառէջ,

Ջայրոյթը բիրեղ...

Լուսինը դեղին

— Սառնաշունչ երկնի այդ հարսը անմեղ —

Փախաւ ամպերէն ու կախեց ինքզինք

Դողդոջ ծառերու սաղարթներուն մէջ:

Ամայութիւնն է ընկերը մութին...

Պատերը լուս են, լուս են հող ու քար.

Կը հեկեկայ լուկ ջրդռնն ըզգայուն

Տաւը սրտայոյզ սա՛ շունին անտուն,

Որ անցած պահուն — ո՞ր մեղքին ծամար —

Լանէ մ'աննուպայ ծեծ կերաւ սաստիկ

Ու մայքին կու լայ մորմոճն իր լըռիկ...

Որքա՛ն կը սիրեմ լուսինը դեղին

Եւ շունն այս անտէր...

Անճրեւ գիշերուան

Փողոցն ամայի, հողմակո՛ծ, խաւա՛ր,

Թող իջնեն մարդիկ՝ մերկ ու անպաշտպան

— Թերեւս սրբաման մինչեւ արշալոյս —

Քայց, տե՛ս, կը մարեն տակաւ լամբ ու լոյս,

Ու կը կծկտին վար ու մանիշակ

Վերմակներու տակ...

Լուսինն եմ դեղին,

Եւ շունն եմ անտուն

Կը մընան մայքին, ծառին հեկեկուն...

Յ. ԳԵՂԱՄԴ

156-2000

Նախ. Բ
ԿԻ Ա

digitised by A.R.A.R.@

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Մ Ա Յ Ր Ե Ն Ի

Մայի՛ս... ծաղկանց ամիս, դարնան ամիս, ամիս ամենազեղ, ան-
հուն երկնակապոյտի:

Մայիսը ամիսն է մանաւանդ Մարիամ Աստուածածնի:

Ու Մայիս եզաւ նաեւ ամիսը մայրերուն:

Աստուածամայրը անթաւամ շուշան ծաղիկն է:

Ամէն մայրիկ ալ մասամբ Մարիամ, իսկ հայ մայրիկները շատ բան
աւելի:

Մայիսը, Աստուածամայր Մարիամը ու մայրերը բուրաստաններ են:

Մայրի՛կ... բառին մէջ կայ մատան մը, որ կը պատմէ Հեքիաթա-
կան Հոգածութիւն, անսպառ սէր, անվերջ զոհողութիւն, նուիրում, զուր-
գուրանք, բոյորանուէր բարութիւն:

Մայրանա՛լ... արարչանալ տաղնապալից կրանութեամբ: Մայրանալ
կը նշանակէ հասնիլ նուիրական նպատակին, ծիածանուիլ երգիներանդ
բերկրութեամբ, բայց բարսիւն, զողալ անզաղար:

Մայրութիւնը տեւական տուայտանք է: Ձի երբ դաւակը բախտաւոր
է, մայրիկը կը զոգայ երկիրէն, որ չեւէ յանկարծ խաւարի ստաղը իր
զաւկին: Իսկ երբ որդին ճախորդութեան մէջ է, մայրը կը տառապի սաստ-
կորէն: Երկու պարագային ալ մօր մը հոգին կը դողդոջէ: Մօր մը սիրտը
սկիհի մը նման կարկառուած է պատուանդանի մը կամ խաչուութեան մը
առջեւ, միշտ յուզումով առի:

Այսպէս է մօր մը կեանքը՝ անուշ ու դառն եւ անտանելի ու ասնելի:

Հաւած է — ռիւբիններու համար ապրում կեանք մը միայն տեւելու
է արժանի: Կա՞յ կեանք մը առաւելապէս ուրիշներուն համար ապրող, քան
որդենուէր մօր կեանքը, նման ժողովրդանուէրիսը ու տքնողինը յանուն
մարդկութեան:

Մայրութիւնը մահուան մերձեցում է ու վերադարձ: Մօր մը բերնին
ու հոգւոյն մէջ կը մնան մահուան համը եւ բոյրը կեանքին: Մայրութիւնը
մեռնելով ապրիլ է, ու անմահանալ է դաւակներով, վերապրիլ է իր դուստ-
րերով, մանկանալ, պատանենալ, երիտասարդանալ է:

Երեք տեսակ կոչում կայ կենաց մէջ, երեք իմաստ, երեք նպատակ —
Միլի, շիմնի, ասեղծել: Առաջին կոչումը մենայնորէն է մայրերուն: Միւս—

Ն.Ն.Ն.

նկրուն մէջ ալ, մեծ մաս ունին մայրերը, որոնց քնարական գործունէութիւնը բաղմաւար է, որոնց գործօն ներկայութիւնը կը բանի, անդրազոյն եւս, մահէ հաջն ալ, նման յիշատակներով յորդուն, յուզումնալից համանրապի:

* *

Մայր մը ու մանուկ մը գրկին մէջ... Լոյս ի լուսոյ... (Ամէն ոք երկինքէն նառագայթ մը ունի իր մէջ, առաւել կամ նուազ նաճանջ մը, որ կը թրթռայ իր մէջ: Սակայն, մայրերուն ու մանուկներուն շողերը իջած են արթայութենէն):

Մայր մը ու մանուկ մը գրկին մէջ... Ի՞նչ նկար, ի՞նչ ներդաշնակութիւն... Նառագարբն ու մարմնաքանձ քեղեղի մը իր մէջ:.. Յօրինումի գրլուստ-գործոց մըն է այս պարզ ու պայծառ պատկերը: Ի՞նչ տեսիլ հարազատութեան: Ձուարթուն մը գոգը հրեշտակի: Ողկոյց մը լուսահատիկ խաղող՝ խորանի մը մէջ: Եւ վերջապէս, Յիսուս Մանուկը՝ Մայր Մարիամի թուերուն մէջ:

Մայրը մանուկին համար սէր է ու սնունդ: Մօրկանը լիզուն լուսերդ է: Մօջը բուրանոց, բոյն, բնակարան զուարթնոց: Մայրը մ'ըր որ դտնուի, կը վերածուի վայրը պարսկզի:

Հապա ի՞նչ է մանուկը մօրկանը համար. ամբողջ աշխարհն է, արքայութիւնն ալ միասին: Մանուկը մանրանկար երկիրն ու երկինքն է:

Աստուած հրեշտակներուն յանձնած էր մանուկներուն պահպանութիւնը. հրեշտակները սակայն, տեսնելով մայրերուն անհուն գործովը, սկզբան անհէլ երբեմն միայն: Իսկ իրական մայրերը ոչ ոքի կը վստահին իրենց հոգեհատորներուն հոգածութիւնը:

Մանուկ մը ամբողջական որբ է այն ժամանակ, երբ կորսնցուցած է իր մայրիկը: Միայն ի հօրէ որբերն են, որոնք ամբողջովին դժբախտ չեն: Երբ հայրիկը մեռնի՝ յաճախ հայրական սէրն ալ հետը կը թաղուի, մասնաւանդ վերամուսնութեան մը պարագային: Ու հարագատ հայրը կը դառնայ հեռաւոր եւ անհոգ հօրեղբայր:

(Ո՞վ կրնայ խորաշփեւլ անգարձ մեկնող մայրիկին մորմազը, երբ կը թողու իր ետին անշտփահասներ...):

Մայրը միեակ, նոյնիսկ աղքատ, կը հասնի իր գուշակներուն ի հօրէ որբ, կը հոգայ ոչ միայն մարմնական, այլեւ մտային սնունդն ալ, նոյնիսկ հոգեկանը: Յանձն կ'առնէ կատարել ամէն գործ, ամէնէն դժուարներն ու դժնդակները, որովհետեւ համակ նուիրական սէր է իր ձաղուկներուն համար:

Մայր մը այնքան յորդ է սիրով ու ներողամտութեամբ՝ որ վախճալու չեն իրենները անոր ճղովքէն: Մայր մը չ'անիծեր սրտանց, սակայն խուսափելու է այդ շանթերէն: Ընդհակառակն, արժանանալու է մօր օրհնութեան, որ է հրաշարար:

Ձուակ մը իր մօր կողմէ կառավարուած բնակարանին բնակիչն է երջանկագոյն:

Մայրիկին բնակած հիւղակն անգամ պալատն է դուկին:

Մարդ ո՛ւր որ ալ ըլլալ, ի՞նչ որ ալ ընէ, իրեն գրահ ունենալու է մայրական բարեմաղթութիւնը:

Մարդ երկու անգամ գալու էր աշխարհ, լիովին կարենալ դնուատելու համար իր մայրը:

Մարդու մը ի՞նչ ըլլալը լուսավէս հասկնալու համար, դիտնալու է, թէ ան ի՞նչ վերաբերում է ունեցած իր մօրկանը հանդէպ:

Ամէն մայր մի՛ծ է իր սիրով ու սրբութեամբ: Բայց մեծագոյններն են ա՛յն մայրերը, որոնք մայր են իրենցմէ չծնածներուն համար ալ, որոնք իրենց հարազատներուն չափ կը սիրեն իրենց խնամքին վստահուած փոքրիկները:

Մեր մայրերն են մեր ազգը պահպանողներն ու տեւականացնողները: Առաջին ուսուցչուհիներն են, որոնք կաթին հետ կու տան մայրենի լեզուն, հայերէնը, որ ոգին է հայութեան: Անկարելի է հայութիւնը արտասահմանի մէջ, առանց հայերէնի:

Պորթ մայր մը, որ կատարեալ մայր կ'ըլլայ որբերու, մայրութիւնը գերազանցողն է: Այդ կարգի մայր մը վսեմէն ալ վեր է:

Մայր մը ու մանուկ մը գրկին մէջ...

Մայր Հայաստանը գրկին մէջ Հայոց թագաւորն ապագայ...

Մայր թագուհին գրկին մէջ Իշխանուհի...

Լուսիզէն զանձարանին զողը գանձ մը աստուածառաք:

Մօր գրկը... Մրդաստանն է մարդկային պտուղներուն:

(Բուն մայրիքը բազմազուակներն են: Միամօր զակի մը պատճառով ինչ տխուր է յանախ: Զաւակ մը առնուազն եղբայր մը կամ քոյր մը ունենալու է, իր օգտին համար ու բախտաւորութեան լայնութեան համար ծնողներուն):

Եթէ մեր ամբողջ աշխարհն յանձնուի պատրաստուած, ողջամիտ, գերընտիր մայրերուն, երկիրը եղեմ կ'ըլլայ խաղաղութեան, ազատութեան ու սիրոյ:

Կարելի է ունենալ անձնագոր հղբայր, անձնուէր ընկեր, բարեկամ օրինակելի եւ տեղար տանտիկին: Երբ մահը խլէ մէկն ու մէկը անոնցմէ, յոյս կայ փոխարինելու, որքան ալ դժուար ըլլայ: Միայն մայրն է անփոխարինելի:

Քոյր մը իր եղբոր համար քրիստոնեայ քոյր է, երբ կէս մայր է: Կին մը իր ամուսինին համար կատարեալ կին է, երբ մասամբ սիրուհի, մասամբ աղջիկ, մասամբ քոյր ըլլայէ դատ, մանաւանդ մասամբ ալ մայր է:

Մայր մը մազազաթէ սուրբ գիւրջ մըն է, նկարներով նուիրումի:

Մայր մը կարծէք անթութեան շուշանազարդ աստիճաններէն կը բարձրանայ դէպի սրբութիւն: Կարծէք աշխարհ եկող անառակը իր մօրը բիծերը իր մէջ առնելով՝ զայն վերածած է հակի մը մաքրելի:

Իրական մայր մը իր զուակներէն կը նախընտրէ ա՛ն, որ ձախողած է, որ է տեսակ մը սկար, որ անառակ է, որ անբաակ է:

Այո՛, իրական մայրը իր զուակներէն ամէնէն աւելի կը սիրէ ա՛ն, որ իր հոգածութեան կարօտ է, ըլլալով տկար, տղեղ, տխուր, տրուպ, քանդի իրական մայրը վեհանմն է, վսեմ է:



Երբ ունենանք ցաւ անտանելի, վիշտ անկրեւի, երբ սաստիկ տաղանաւը մեր մարմինն անցած է հոգիին ու անոր լոյսը խաւարած, կամ երբ մեր հոգիէն անցած է մարմնոյն ու դայն տապալած, երբ ցերեկը դիշեր կը թուի, իսկ գիշերը՝ խորխորատ, երբ մեզի կը թուի, թէ սպառած են իւղերը ճրագներուն մէջ յոյսի, երբ մեզի կը թուի, թէ զուտները փակուած են մեր առջեւ ու կրպուած դաժանօրէն, երբ ամէն մէկ ծանօթի միայն կրնակը կը տեսնենք մեր մենութեան տանջարանին մէջ, յայնժամ, իբրեւ հուսկ ապաւեն, ի խորոց սրտի կ'ազազակենք:

— Ատուա՞ծ...

ու

— Մայրի՞կ...

Եւ ճառագայթ մը կը մտնէ մեր մէջ, եւ կը դգանք, որ հոգի մը կը յածի մեր շրջագիծին մէջ, հոգի մը անբարբառ, բայց խօսուն, հոգի մը անգոյ, սակայն դգուող, գթառատ, քաջալերող:

(Մեր ըսածին անհազորդ պիտի մնան անո՞նք՝ որոնք մեծ տառապանքը կրելու անբախտութիւնն ու միաժամանակ բախտաւորութիւնը շէն ճանչցած, շէն նաչակած):

«Ատուա՞ծ»-ը անբաւ բացազանշուծիւն է, որ հագիւ կը հասնի Հաստիշին, Հակասակ հրեղէն հրթիւ ըլլալուն, բայց «մայրի՞կ» աղաղակելով կը գիմենք հրաշագործ հասցէի: Կը մանկանանք, ազատուելով տարիքին տաղտուկներէն: Եւ մայրիկը կու գայ, երբ կանչուած է հոգիին բովանդակութեամբ, մարմնին ողջ մասնիկներով: Մայրիկը կու գայ, փոյթ չէ թէ շատ շատոնց մեկնած ըլլայ մենէ: Կու գայ ներկայութեամբ անտեսանելի, սակայն գոյութեամբ զուշակելի:

Մայրիկը կու գայ, զրկուած Ատուածմէ:

Ամէն ոք կը յիշէ Ատուածն ու իր մայրիկը՝ ճգնաժամի ընթացքին:

(Ճանչցայ կին մը, որուն հայրը եղած էր չեխ, մայրը՝ հայուհի: Ամուսինը, նոյնպէս մահացած, դերման էր, ու անոր աղաղականներուն մէջ կային զանազան ազգութիւններու պատկանողներ: Այդ կինը իր արմենուհի մայրիկը կանուխ կորսնցուցած ըլլալով, մեծցած էր օտարներու խնամքով: Կ'ըսէր, թէ ինքզինքը կապուած չէր զգար, ոչ մէկ մասնաւոր ազգի: Ու կ'աւելցնէր. — «Ես ալ չեմ գիտեր, թէ ո՞ր մէկ ժողովուրդին կը պատկանիմ»: Կը խօսէր սահուն կերպով Փրանսերէն, մասնաւորապէս երկար ապրած ըլլալով Ֆրանսա: Այդ կինը ծանրապէս հիւանդացաւ ու ենթարկուեցաւ վլտանգաւոր գործողութեան: Յոյսը փրկութեան իջած էր նուազագոյնի, գիտութեան մարդոց համար, սակայն վերապրեցաւ: Երբ իրեն այցելեցի, հիւանդանոց, արդէն լաւ ճամբու մէջ էր: Հարցուցի. — «Երբ ձեզ բարձրացուցին գործողութեան սեղանին վրայ, ի՞նչ մտածեցիք ու մանաւանդ ո՞ր լեզուով մտածեցիք»: Նախ ժպտեցաւ, ապա արցունքներ կախուեցան աչքերէն, ու պատասխանեց. — «Հայերէն, «Մայրի՞կ»... ըսի...»: — «Ուրեմն Հայ էք, ա՛յ փարատած է մշուշը անորշուծեան: Ձեր մէջ թաղուած Հայութիւնը յարութիւն է առած: Մահուան վրանդը յայտնած է ձեր ազգային ինքնութիւնը»):

Ազգութեան կնիքը նախ մայրերը կը դրոշմեն խորը մեր հոգիին: Ապա, հայ դպրոցները:

Վեց անգամ ճաշակած եմ հարուածները վիրաբուժական նշորակի :
Մեծ, ծանր ու անյոյս զործողութենէն առաջ, ամիսներով, տիւ եւ
գիշեր փարեցայ Աստուծոյ անհուն լոյսին եւ յուսացի լուստեսութեամբ,
զարմացնելով այցելուներս :

Մէկ անգամ միայն, հիւանդանոց մտնելէն քանի մը օր ետքը, երբ
վիրաբուժը, շրջապատուած բժիշկներով, օգնականներով եւ ուսանողներով,
կը քննէր ստամոքսիս շոգանկարները, կարեւոր կասկած մը ունենալով՝
կանչել տուաւ ռատիոլոգը, որ ան դիտէ ու դատէ շոգանկարներս : Եւ ան
դիտելէ ետքը, լոյսին բռնած, կուպիտ անկեղծութեամբ մը բացաղանչեց,
զէմքը թթուեցուցած. — «Ա՛յ, ա՛յ, ա՛յ...» : Նոյն բացաղանչութիւնը
միւս շոգանկարներուս մասին, եւ ապա, փոփառքով խօսակցութիւն մը,
զիտական սպայակոյտին մէջ. ահա այդ անգամ միայն տապալեցու լուս-
տեսութեանս շէնը, ու մարեցան աշտանակները յոյսի :

Սպայակոյտը հեռացաւ, դիս ձգելով աւերակներու մէջ :
Իսկ անկողնիս մէջ պառկած պէրպէք ավրիկեցին, կուսած ուժէն
ինչ, ըսաւ .

— Յոյսն ալ, անյուսութիւնն ալ անօգուտ է : Մէքուպ, որ թարգ-
մանի ճակատագիր :

Հիւանդապահապետը հեռուէն տեղեակ անցուղարձին, մերձեցաւ ու
ջանաց աւերուած շէնքիս կտորներով շինել հիւղակ մը յոյսի :

Հաւաքեցի հաւատքէս բեկորներ ու փարեցայ Աստուծամօք : Համ-
բուրեցի զաղտոնօրէն՝ պատկերը Ս. Կոյսին, ինչպէս կ'ընէի սմէն օր, երբ
տակաւին տունն էի : Այդ պատկերը դատած էի գետնէն, կոխտուած, ու պա-
հած էի : Անկէ կը խնդրէի, որ մեռած մայրիկս հասցնէ ինծի : Ու մայրս կու
զար երկնքի ու երկրի բարիքներով օղողել զիս, վերականգնելով տարակոյ-
սով տատանող տունը հաւատքիս, յոյսիս, լուստեսութեանս :

Մեր ժողովուրդը մայրերուն հանգէպ իր արդար գնահատութիւնը
կ'արտայայտէ հետեւեալ խօսքով .

— Հօր մահը տուն չի քանդեր. մօր մահն է, որ տուն կը քանդէ :

Որովհետեւ մայրն է բնութեան բարոյական հիմը : Եւ մայրը ըլլալով
տան վէմը ու ոգին, է՛ նաեւ հաւաքականութեան հիմնաքարը : Մայրութիւնը
արուեստ ու գիտութիւն ըլլալէ զառ, է՛ նաեւ նախաինձութեան բնատուր
ու բարբարի մայրն է լեզուին, մեր մեծաքանչիին մանկապարտիզպանը ու
հրեշտակը հովանի : Մայրն է պարիկը՝ պահպան մեր բարքերուն, բարե-
մասնութեանց, ու պահակը մեր տոհմական գանձարանին :

Բայց բաւական չէ մայր ըլլալ, պէտք է մայր մնալ ու մեծնալ իբրեւ
մայր :

Մայրութիւնը իբրեւ սէր տառապալից՝ անսահմանութիւն է : Բայց
հայ մայրիկին սէրն ու սուգը եւ տառապանքին տատակները անհուն մը կը
լեցնեն : Ամէնէն աւելի կոկծալի նահատակութիւններով նախազործուած
մարտիրոսուհին է :

Հայ մայրիկը յաճախ եղաւ քանի՜ մը անգամ Մարիամ, նոյնիսկ աւելի՛ կրնայ կողտորէ խաշը իր ժողովուրդին: Ի՞նչպէս դիմացաւ մարմնասպէս ու ի՞նչպէս դիմացաւ հոգեպէս...

Քանի՛-քանի՛ անգամ խաշեալներու ներքեւ ինքն ալ գետնին վրայ խաշուեցաւ ու մորմոքեցաւ եւ մարեցաւ:

Փայտոյ, թիթեղոյ, լաթոյ միշտ տուն շինեց: շարունակելու համար տանտիրները:

Միշտ սեւ հագաւ, բայց սարճեց հարսանիք, յանուն յաւերժութեան հայ արգիին:

Անկարող եմ երեւակայել մայրական զէ՛մք մը քաղցրորէն ցաւապին աւելի, մազազաթ ու միւտոն աւելի, նշխար ու նկանակ աւելի եւ առաւել, տեսիլ բարութեան, քան Հայ մայրիկներուն զէ՛մքը սրբնի: Մարիամը խաշին տակ, վշտաբեռ վերջալոյսով Գողգոթայի:

(Յաճախ աշակերտուէինքրու իրրեւ շարադրութեան նիւթ տուած եմ իրենց մայրիկը: Անոնցմէ շատեր իրենց մայրը նմանցուցած են Աստուածամօր):

Հայ մայրիկը մասունք մը Մասիս է, մասունք մը Մարաթուկ, մասունք մը Մեղրապետ, մասունք մը Արմենիա:

Վերջապէս, ամէն մէկ Հայ մայրիկ՝ Մայր Հայաստան է:

**

Երիցս գծրախա է ա՛յն Հայրդիին, որ չէ ճանչցած, չէ վայելած իր մայրիկը:

Բայց տասն անգամ թշուառական է ա՛յն Հայրդիին, որ չէ արժանացած իր մօր օրհնութեան:

Հայ մայրիկները թող չլիպացնեն իրենց գաւակները: Թող դաւակները չլիպացնեն իրենց մայրիկները:

Երանի՛ մայրասէրներուն, քանզի անոնցն է հոգեկան հաճօքներուն հատընտիրները:

Երանի՛ մայրասէրներուն, քանզի անոնք սիրելիները պիտի ըլլան Աստուծոյ:

**

Կարելի՞ է խօսիլ մայրերու մասին ընդհանրապէս, հայ մայրերու համար մասնաւորապէս եւ՛ ըսել սեփական մայրիկին հանդէպ, շունենալով արտայայտութեան:

Ի՞նչ շարժարարին մաքառումներով է որ դիւ մեծցուց Հայ մայրիկս:

Ի՞նչքան խութեբու, խոչընդոտներու յաղթահարեց: զիս գնելու համար իր ծոցէն աւելի, հայութեան լուսեղէն գողին մէջ:

Հողիս դանձանակ ըրաւ ու ջանաց ամէն օր հայկական լուսարումայ մը նեակել անոր մէջ:

Ինք միս մինակը մաքառեցաւ քառասուն դեւերու զէ՛մ, յանուն գաւակին՝ հայութեան:

Ի՞նչպէս կրնայի պինքը՝ գնահատել, երբ էի տղայ: Ի՞նչպէս կրնայի պինքը գնահատել, երբ էի սպասանի: Ի՞նչպէս կրնայի պինքը գնահատել խօլաթեւ երիտասարդութեանս:

Բիւղանդացիի հայութիւնը նոխացուցին մեր եղբայրները դաւառացի: Անոնց հետ յարաբերուելով, հաղորդուելով է որ դարձայ բաւական հայ:

Երբ հեռացայ մայրիկէս, գէպքերու բերումով, երթալով օտար աշխարհներ, կամաւոր տարադրութեամբ, քանի մը տարի ետքն ալ մայրիկս հեռացաւ յաւիտենապէս:

Միակ ու մեծ մխիթարութիւնս ան եղաւ, որ հեռանալէս ետքը, ի դին վտանգաւոր զոհողութիւններու (չարթուան կէսը դրեթէ անօթի մեալով), քանի մը տարի զինքը հոգացի կըցածէս աւելի, արժանանալով իր օրհնութեան թուղթիւրուն:

Մեռաւ մայրիկս, նրբ պիտի պատրաստուէի զինքը քովս բերիլ, ինչպէս բերած էի փոքր եղբայրս, որ կը տառապէր հեռաւոր աշխարհի մը մէջ: Անկէ ի վեր կը փնտռեմ զինքը, ափսոսանքով կըրակէ:

Կը խոստովանիմ, որ այս յառաջացած տարիքիս, երբեմն կ'երապեմ... իրր թէ մայրիկս քովս է ու զինքը երջանկացուցած եմ...

Ան հիմա՛ ըլլալու էր քովս, քանզի հիմա՛ պիտի վայելէր ամբողջական գորովս ու գնահատութիւնս:

Հաւատացէ՛ք, ես պիտի շուտէի, իրեն պիտի կերցնէի...

Ձիւքը կունակս անէի ու տանէի տեղէ տեղ, ո՛ւր որ փափաքէր, հակառակ քալելու անկարողութեանս: Գարձեմ'լ հաւատացէք, որ կապոյտ աշքերով ու կապոյտ հոգիով, մագաղաթէ մեծ մատեն մայրիկս կըրել կ'ուզէի որ ըլլար իմ միակ անունայն համբաւս, հաճոյքս ու հանդիսսս:

Հիմա՛ է, որ ամբողջովին կ'ըմբռնեմ զինքը ու իմ քննադատութիւններս վերածուած են գնահատանքի: Կը քննադատէի անպատեւի մարտիրոսութեան մը հանդուրժելը: Արդ, հիացումով կը խոնարհիմ իր նահատակութեան առջեւ: Հիմա՛ է, որ կը ճանչնամ իր քրիստոնէութեան քանակն ու որակը:

Եւ հիմա, մեր նոր մայրիկներուն կ'ըսեմ.

— Որքան կընաք Հոգեկան դէմքով նմանեցէք ձեր մայրիկներուն ու մեծ մայրիկներուն:

Ընծայեցէք Հայութեան սրբօրէն արեցեալ Հայորդիներ ու հայուհիներ:

Վերածեցէք Հայութիւնը հացի, գինիի, նաեւ երգի ու նուազի, եւ կաթեցուցէք զանոնք ձեր ձագուկներուն քերին, ականջներուն, մաքին ու սրտին մէջ, մինչեւ որ տեսնէք յորդումը հոգիներուն: Հայերն այնպէս արեցուցէք, որ ալ չսթափին ու միշտ պահեն կերութումին, կայթատօսին ջերմութիւնը, ըստ այնմ գործելով:

Թող ձեզմով շարունակուի ու ստուարանայ շարքը Հայութեան եւ շարունակութիւնը միշտ ըլլայ շարունակելի:

Նմանեցէք մեր հին մայրիկներուն, քանզի անոնք էին, յանուն Հայութեան, կուրծք ու կեանք տուողները դարերու դաւերուն, դժոխքներուն, պահպանելով մեր մեծաքանչ ըստը, լեզուն, եւ ինչ որ հայկական էր: Գիտեմ որ զուք ալ ունիք ձեր դժուարութիւնները դիւական, դիտեմ, որ յաճախ պերճ կեանքի մէջ պայքարը աւելի դժուարին է, քան տոկայր տառապանքի մէջ: Գիտեմ որ հայութիւնը կը հալի հարստութեան, բարեկեցիկ կենցաղի մէջ, սակայն, զուք ալ դիմադրեցէք նոր սատանաներուն, ձեր կարգին շարունակելու համար հայութիւնը, որ գերբնախր սրբութիւններէն մէկն է աշխարհի:

Ըրէջ որ մեր վերջալոյսներուն յաջորդեն նոր արչալոյսներ, մին քան զմիւսը շողոթենի :

Այս է ձեր կատարելիք հրաչքը, օտարութեան մէջ. Մնունդ տալ Քաջաբնորու, Նորայրներու, Փիրայրներու, Հրայրներու : Տակաւին ծնունդ տալ ծիրանածին Վահագններու, հրազարդ Վարդաններու, սպիտակաբարձ Վահագններու եւ վարդեւառ Աստղիկներու :

Եղէջ ծնանող, շինարար եւ ստեղծագործող, որպէսզի դալոց դարերուն յիշեն ձեզ իբրեւ գորովալի եւ դովական փառասուն տիկնայք, ինչպէս որ կը յիշուին հայոց աշխարհի փափկասուն տիկիները, իբրեւ տիպարներ յարքաշութեան :

Եւ թող ապագայ Գողթան Գնարները գեղգեղեն ձեր յաւերժութիւնը, ո՛վ մեր իմաստուն աղջիկներն ու քոյրերը Հայկական Նաւակատիքին :

Հայ նոր մայրիկներ, համատարած աղէտի, օտարութեան տարիներուն, եղէջ ընդհանրական օրհնութիւնն ու փրկութիւնը՝ շանձուկերով յեցուն ովկիանոսներուն մէջ ընկլուզած խեղդուող խումբերուն :

Եւ Երկնաւոր Հայրն ալ ձեզ ու ձեր պտուղները օրհնէ, ինչպէս կ'օրհնէ աւետարան արտերուն ատոք բարութիւնը, անցնելով ցորեաններուն ոսկեծովերուն վրայէն :

* *

Տէր իմ Աստուած, ո՛վ անհուն Հայր Երկնաւոր, մեր վերջին օրը, մեր հուսկ ժամուն, յաւիտենական բաժանման պահուն դռնէ, մեր մայրիկը մեր մօտ դրկէ, որ մեր ցաւերը ցնդին, որ մեր խաչը խաղաղի, ու մոնաւանդ, նամանաւանդ մեր վատահակ, վատափառ վախը չքանայ խորախաւար զընտանէն ու ցեխանալէն, եւ Մահը մեղմանայ, մեզրանա՛յ մեր մօրկանը թեւերուն մէջ թեթեւցած, ու փոխանցումը վերածուի մողական մեղեդիի, նրազարաններով զուարթնոց : Ու մահանանք մեր պարտաւորիչ պարտութեան մէջ, նման քաջի :

Առաքեա՛ մեզ՝ մայրիկը մեր, ո՛վ Դատաւոր արդարներու եւ մեղաւորաց, պարտասածներու եւ պարտեալներու, սպանուածներու եւ սպառնածներու, տեսակ տեսակ տառապելայներու :

Մեր մայրիկին յանձնէ մեզ. ան է, որ մեզ բերաւ աշխարհ, ան թո՛ղ տանի մեզ աշխարհէն յաւիտենապէս, մեզ ծրարած, ծածկած լուսութեան մէջ ու խորհուրդի :

* *

Ամէն մէկ մարեմական մայր օժտուած է գերբնական զօրքով, կարեւնալ դիմադրելու համար ցաւերու, վիշտերու եւ կորուստներու : Հակառակ այդ զօրութեան, մայրիկները կու լան, քանզի Սիրտ են ամբողջովին : Յիսուս անգամ լացաւ խաչին վրայ, դիտնալով հանդերձ, որ երեք օրէն պիտի ըլլայ յարուցեալ :

Ամէն մարդ կը կարօտի իր մայրիկին, Օրօրոցէն մինչեւ Օրհաս... :

Վիլմամալը

Ն. Գ.



Հ Ո Ղ Տ Ո Ւ Է Ք . . .

Ոչ քա խօսքերը՝ երկնային մանանայի փաղցրութեամբ,
 Ոչ քա աչքերը՝ եղնիկի աչքերի տխրութեամբ,
 Ոչ քա հայեացքը՝ աշնան արեւի բարութեամբ,
 Ոչ քա ձեռքերը՝ եղնիկի թեւի մաքրութեամբ,
 Եւ ոչ աշխարհը՝ իր ողջ էութեամբ,
 Անբաւ պերճանքով աւ հարստութեամբ,
 Կարող են մեղմել անդոհը հոգուս . . .

Երակներիս մէջ ահա, արեան տեղ,
 Կարօտն է եռում կրակաշուրթ,
 Ու խանձում է ծառը հոգուս այս անապատում.
 Արմատները ճշում են՝ հո՛ղ.
 Արմատները կանչում են՝ ջո՛ւր,
 Ականջները խուլ են սակայն, խո՛ւլ
 Եւ հոգիները՝ ամուլ . . .
 Ու խանձում է տակաւ ծառը հոգուս այս անապատում:

Համբերութիւնս դաւանանում է ինձ
 Ու վստահութիւնս փանդում ոտքիս տակ.
 Թպրտում է թռչունը վանդակում
 Ու մռնչում է հոգիս այս ձողերի յետեւից.—
 — Հո՛ղ տուէ՛ք մեզ, ազատ հող,
 Վրան կանգնելու եւ ցանկու այս Հունտը,
 Ու մե՛նք . . . մե՛նք կը ցնցենք երկրագումտը . . .

Թեւ Հրան

ԱՐՄԱՆՏ

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԻՈՒՏԵԱՆ

ՄԱՀՈՒԱՆ ԿԱՄՈՒՐՋԸ

(Վ Է Պ)

Գ Ի Ր Ք Ե Ր Ր Ո Ր Դ
ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ԱՓԵՐԸ

ԳԼՈՒԽ Դ.

Կը լսեմ Մահուան ծիծաղը տերևներու սօսափունին հետ: Ձեմ ուզեր ձեռքերս պղծել զաւսմաններու արիւնքովը: Հանդիստ ձգելու է օձերը իրենց բոյնին մէջ: Բայց ուրեմն, ես ինչո՞ւ բաժնըսեցայ մահուան բաղուկներէն:

Ահա Արէշի տուները իրենց կեղծ խղաղութեամբ շրջապատուած: Ձապէլ հոս կը սպասէ ինծի: Վահան, Թորգոմ եւ հազարաւոր մերկ դիակներ կը սպասեն ինծի:

Ձինուորներ կ'երթնեն կրկնաբարձիքի երկայնքին: Մտահոգ կ'երեւին, անոնք ալ կը սպասեն բանի մը: Աւանց նշմարուելու՝ կը ժօտենամ տուներուն: Գիտեմ ճշգրտօրէն, թէ ուր կ'երթամ: Ահաւասիկ փոքրիկ հրապարակ մը: Կը դառնամ ակիտ գտնուող առաջին փողոցը: Փոշեթախի ծառերու շուքին, չկայ նոյնիսկ կենդանի շուն մը: Ամայութիւնը կ'ողորայ զոց փեղկերուն ետեւը: Մըզմաւանջը կը ծանրանայ ուսերուս վրայ

եւ լուսթեան սեւ թռչունը կը դառնայ ականջներուս շուրջը:

Կանգ կ'առնեմ ցանկապատի մը տուջեւ: Կը հրեմ երկաթէ դուռը: Աւաղը կը խշրտայ ոտքերուս տակ, բայց հաջկ չի տար պահապան շունը: Պարտէզը հողեփարքի մէջ է, լքուած բորոտի մը պէս: Դեղնած խտերու վրայ, կուտակուած է նոր փոքուած հողի դէզ մը: Բահը եւ բրինձը կը հանգչին քովը: Կը խղճամ այս դատարկ գերեզմանին վրայ: Մեռելները պէտք ունին մեր հոգածութեան, անոնք պէտք է ննջեն իրենց սիրեցեալներուն ձօտերը:

Կը քարձրանամ մուտքի աստիճաններէն վեր: Կը գտնուիմ նրբանցքին մէջ: Ոչ ոք կու գայ դիմաւորելու զիս: Ահա ուրիշ աստիճաններ, որ կը հրաւիրեն զիս: Կը դանուիմ վերի յարկի պատշգոտի մին վրայ: Դուռ մը կը բացուի ճիշդ դէմս եւ մարդ մը ժպտելով ներս կը հըրաւիրէ զիս: Ինծի երկարած ձեռքը կը մնայ անկախ: Ձիբար կը ճանչնանք:

— Ամէն բանէ տեղեակ եմ, — կ'ը-



սեմ իրեն, առանց մայնս բարձրացնելու, — չեմ ուզեր որ արդարանալ փորձես: Քեզի պէս դաւաճան մը իրաւունք չունի՛ արդարանալու:

Կը տժգունի յանկարծ: Ժպտը կը խնդրուի անձկութեան պրկուժին մէջ: Գրպանիս մէջ կը զգամ ատրճանակին ծանրութիւնը, հաւաքուած ինքն իր վըրայ թունաւոր օժի մը պէս եւ պատրաստ դուրս ժայթքելու:

— Միքայէ՛լ, — կ'ըսէ ան, — մենք երբե՛ք բարեկամներ չենք եղած, բայց տարիներ անցուցած ենք միասին նոյն դասարանի նստարաններուն վրայ: Բոլոր բնկերներս կը հեռանային ինձմէ, բոլոր հայերը կը զգուշանային իմ ընտանիքին հետ յարաբերելէ: Միւս հայերէն ո՛չ աւելի լաւ, ո՛չ ալ աւելի վատ էինք:

— Միւսները, բոլոր անոնք, որոնց հոգին ծախեցիք, բոլոր անոնք, զորս բնատ նետել տուիք, շարշարել տուիք, ճակտին քրտինքը կողոպտեցիք, մարտիտաներ դարձան, մինչ զուգ՝ միշտ մնացիք դաւաճան:

— Լաւ դիտես, որ, ըլլա՛յ մեզմով, ըլլայ առանց մեզի, անոնք նոյն ճակատագրին պիտի ենթարկուէին: Մենք ալ, շատերուն պէս, պայքարեցանք վերստընու համար, բայց մեր ձեւով:

— Գիտե՛ս ինչպէս մեռաւ Թորվոմը, Տէր Գէորգին տղան, ի՛նչպէս մեռան հաղարաւոր երիտասարդներ: Գիտե՛ս ինչպէս մեռաւ եղբայրդ՝ Վահանը: Ոչխարի մը պէս մորթուեցաւ՝ մեր զարհուրած աչքերուն առջեւ, ուրիշ հարիւրաւոր երիտասարդներու հետ:

Գլուխը կը հակի: Տժգունութիւնը կը շեշտուի:

— Մենք չէինք դիտեր: Ձէինք դիտեր, որ այսպէս պիտի ըլլար:

— Հիմա դիտես: Ես կրնայի ջեղի ներել, եթէ տակաւին ողջ ըլլայի: Ողջ մարդը ստիպուած է ներելու, որպէսզի անարդարութիւն չըրժէ: Բայց անոնք, որ ինձի պէս տառապեցան ու մեռան, ձեզի պէսներուն վատութեան պատճառաւ, նոյնիսկ կիթէ կարենային, պիտի

չուզէին ներել, որովհետեւ ձայն չունին այլեւս: Ես եմ անոնց ձայնը:

— Գիտես որ պահակադուհակը անզուգար կը շրջին ճամբաներուն վրայ: Եթէ զիս սպաննես, քեզ կը ձերբակալեն. եւ լաւ դիտես ինչ կ'ըլլայ վախճանը:

— Ի՞նչ կեանքս ո՛չ մէկ կարելորութիւն ունի: Եկած եմ առաքելութիւն մը կատարելու: Վրէժի գործիքն եմ միայն: Կայ տակաւին մեծ յանցաւորը, հայրդ: Ո՛ւր կը գտնուի ներկայիս:

— Հայրս առեւտրով կը զբաղի: Կը շրջի մօտակայ դիւղերուն մէջ, երբեմն կ'երթայ մինչեւ Էրզրում:

— Ինչո՞ւ կը շրջի մօտակայ դիւղերուն մէջ: Արդեօք տակաւին լրտեսուելիք ու ծախուելիք դժբախտներ կան:

Ձի պատասխաններ: Նայուածքս խիստ է՝ դաշոյնի մը պողպատէ շեղբին պէս: Ձեռքս կը պրկուի ատրճանակիս կոթին վրայ, որ կը սպասէ զբպանիս մէջ հլու դահլճի մը պէս: Արշակ կը հասկընայ միտքս ու քանի մը քայլ կը նահանջէ: Կը վախնայ մեռնելէ:

— Այս շրջաններուն մէջ, հայեր չկան այլեւս: Որո՞նց լրտեսելու կ'երթայ հայրդ, ըսէ՛, որո՞նց:

— Ատենէ մը ի վեր, Փետտայական խուժեր կ'արշաւեն մինչեւ դիմացի լեռները: Ուրիշ խուժեր ալ կը կազմուին հոս ու հոն: Կը յարձակին զինուորական կայաններու վրայ, օգնութեան կը հասնին աքտորուող հայ կարաւաններուն...

— Եւ այդ քաջերը կը պատժեն ձեզի պէս դաւաճանները, այդպէս չէ՞: Այդ պատճառաւ հայրդ կը վախնայ մահէն եւ եւ ամէն ջանք կը թափէ գտնելու համար անոնց թաքտոցը: Հանգիստ քուն կը քնանայ միայն, երբ անոնց դիակները կախուած տեսնէ Էրզրումի հրապարակին վրայ:

— Մենք ալ ապրելու իրաւունք ունինք:

— Եւ դաւաճանելու եւ յափշտակելու: Դուն մանաւանդ, որ օգտուելով կացութեանէն, ինձմէ խլիցիր նշանածս, Ջայէլը:

— Ես՝ Չապէլը չիւնցի քեզմէ: Օւրինաւորապէս ձեռքը խնդրեցի եւ օրինաւորապէս պահուեցանք: Քեզ մեռած կը կարծէինք: Չապէլին կը մնար ամուսնանալ կա՛մ հետս կամ թուրքի մը հետ: Ախ նախընտրեց:

Այս խօսքերը իր ճակատագիրը կը կնքեն: Արդէն ասորճանակիս խողովակը ուղղուած է իր կուրծքին: Կը շուարի, կը կաթնի պատին:

— Այս բոլորը ինձի համար կենաց կամ մահու խաղ մըն էր:

— Ըսէ՛ մահուան խաղ... .

Պայթիւն մը կը լսուի սենեակին մէջ: Արշակ դեպին կը փուռի մըմնջելով:

— Չապէ՛լ, չես գիտեր, որքա՛ն սիրեցի քեզ... լաւ է որ կը մեռնիմ ձեռքովդ...

Արշակին աչքերը յառած են դրան կողմը: Հոն կ'ուզուէ նայուածք...

Առանձին շեմ սենեակին մէջ:



Կը քայլեմ հսկայ եւ անծանօթ քաղաքի մը փողոցներուն մէջ, ուր կ'երթեւեկէ խուռներամ բաղմութիւն մը: Եւ այդ ամբոխին մէջ, որ կը լեցնէ հրապարակները եւ պողոտաները, կը փնտռեմ մէկը: Վաճառատուներուն ճակատները եւ ցուցափեղկերը կը լուսաւորուին երկվայրկեանի մը համար, եւ, այդ երկվայրկեանին մէջ, ամբոխը, մէկ շարժումով յառաջ կ'ընթանայ ու դիս կը տանի հետը:

Չեմ յաջողիր գտնել անունը այն անձին, որ եկած եմ փնտռելու այս քաղաքի փողոցներուն մէջ: Ա՛յր է, թէ կին. չեմ գիտեր: Կը գննեմ դէմքերը բոլոր անոնց, որոնց կը հանդիպիմ, յուսալով հոն գտնել ծանօթութեան նշան մը. բայց այս անձերը դէմք չունին, ու մանք գլուխ ալ չունին:

Երբեմն կը մղուիմ մինչեւ մայթերը, փարթամօրէն դարդարուած վաճառատուներուն մօտ: Յուցափեղկերուն վրայ, դարակներուն, տուփերուն, սրնատակներուն եւ պարկերուն մէջ կայ նոյն

ապրանքը՝ ամբողջական ոսկոր, կոտորտուած ոսկոր, մանրուած ոսկոր: Դարաններու վրայ, շարուած են դանկեր զանազան մեծութեամբ, ամէն տեսակէ եւ ամէն քսակի համար: Ողորկ ճակատներու վրայ փակցուած պիտակներ կը կրեն հետեւեալ մակագրութիւնները. — Հայ մանուկի դանկ, Հայ կնոջ դանկ, Հայ պատուի դանկ, Հայ կղերականի դանկ, Հայ մտաւորականի դանկ: Պարկերուն վրայ կը կարգամ. «Հայու սպորմեր, հուստուած Ռուս իւլ Այնի շրջաններէն եւ Տէր Զօրի անապատներէն: Գիմերը կը տարբերին ճայած ապրանքի տեսակիմ եւ արակիմ»:

Ամբոխը կը հոսի միշտ ճամբուն վրայ, անհետանալու համար հսկայ շէնքի մը դուռնէն ներս, ուր մահը կ'ընկուցէ զայն իր սեւ երախին մէջ: Իւրաքանչիւր ոք կը ջանայ հասնիլ միւսներէն առաջ, կրցածին չափ սուղի ծախելու համար իր միսը, դանկը, ոսկորները եւ արիւնը:

Եւ յանկարծ կը դգամ, որ տարբեր եմ այս ամբոխէն, որ կ'երթայ մահուան կեր դառնալու: Կը զգամ, որ Հաստիս կ'աճի եւ մկաններս կը զօրանան, բայց նոյն ասեմ տկար եմ ու անկարող, հացի պատառի մը պէս, որ կը լողայ ոնգնղջիւրի մը ստամոքսին մէջ: Յարդի չիւղ մըն եմ մարդկային այս Հոսանքին մէջ, որ կ'ընթանայ մութին ու լուսին կոտորթովը: Հակառակ ուժիս ու վստահութեանս, կը շղթայուիմ այդ անտարբերութենէն, որ կը ծորի շէնքերու պատերէն: Ոչ ոք կ'ուզէ ճանչնալ դիս: Բոլորը կը կարծեն, թէ ես իրենցմէ չեմ:

Չեռքս կը բարձրացնեմ՝ պոռայով անուս: Ափիս մէջ տպուած է կարմիր բիծ մը: Եւ բոլոր ոճրազործները, մարդասպանները, հայրասպանները, եղբայրասպանները, գահիճները եւ մանուկ ջարդողները, որոնք կը նային մահուան շէնքին դուռնէն ու պատուհաններէն, երես կը դարձնեն ինձմէ, տեսնելով իրենց դատապարտութեան նշանը:

Սակայն դերեզմանային լուութենէն կը ծնի շշուկ մը, որուն ալիքները կուզան զարնուիլ յիշողութեանս պարիսպ-

ներուն: Եւ կամաց-կամաց շարունակեալ յայնքանքը կը խտանան ու կը դառնան խորունկ մահազանգ մը, կը յստականան վերջապէս, կազմելու համար տնունի մը վանկերը: Եւ զանգակներու որոտումին մէջ, կը վերելան անունը անոր, զոր կը փրկարուեմ: Այլեւս դերին չեմ ամբոխին: Կը ճեղքեմ բրտորէն մարդկային զանգուածը եւ կը հասնիմ առջին դիմը: Այսպէս կը քայլեմ յաւիտենականութիւն մը, այն նախազարուժում, որ շուտով պիտի հանդիպիմ անոր, ճիշդ այն տեղը, ուր ինք խոստացած է ինձի սպասել:

Վաճառատուններուն ճակատները և ցուցափեղկերը չեն ճաճանչեր այլևս, ափսոսանքով երկնակամարներու պէս և չեն ցուցադրեր իրենց անդրաշնորհներն կատարողները: Սակայն մարդկային մակընթացութիւնը կը շարունակէ յառաջանալ դէպի ունայնութեան ափերը, ստուծ ու անդգայ մարմնիս քսուելով: Գիտեմ որ ամբողջ մարդկութիւնը պիտի շարունակէ զիս ազատագրել անտեսանելի շղթաներէն, որոնք զիս ճակատագրին կը կապեն, ինչպէս Պրոմէթէոս մը կոպկաւոր սպառաժներուն:

Կը փնտռեմ անունը սիրած կնոջս, մինչ ամբոխէն բարձրացող ժխորին մէջէն, սկանջիս կը զարնէ միայն անունը այդ դաւաճանին, զոր փշրեցի բուռնցքիս մէջ:

Այն տունն կնոջական ձայն մը կը փսփոսայ ականջիս.

— Բա՛ց ձեռքդ, որպէսզի ջնջեմ արեան բիծը, որովհետեւ դուն չէիր Արշակը՝ սպաննողը:

Կը բռնէ ձեռքէս ու զիս կը տանի կողմնակի փողոց մը: Կանգ կ'առնէ սիւնի մը կախուած ցուակին տակ: Կը դառնամ իր կողմը ու կը ճանչնամ Զապէլը: Իր մաղերուն ծայրի փունջը կը քսէ ափիս և արիան բիծը կ'անհետանայ ամբողջովին:

— Բայց Արշակ մեռաւ, — կ'ըսեմ Զապէլին և ես սպաննեցի զինքը:

— Եկուր և սե՛ս, — կը պատասխանէ:

Կը քայլեմ, առանց բառ մը փոխանակելու, լսատերներով լուսաւորուած մայիլին վրայ: Լուսթիւնը կը թրթռայ պողպատէ լարի մը պէս: Հրապարակի մը կեդրոնը անկուած աւազանը կը նմանի դամբարանի մը: Հիմա կը քայլեմ լայն փողոցի մը մէջ: Ամայութիւնը մեզ կը շնչապատէ՝ իր արտոյրէ պարիսպներով:

Երկաթէ բաց դռնէ մը կը մտնենք: Աւազը կը խշրտայ մեր քայլերուն տակ: Կը մտնենք տան մէջ, կը բարձրանանք երկուր աստիճան մը: Կանգ կ'առնենք առաջին յարկի պատշգամին վրայ: Մեր դիմացը կայ բաց դուռ մը: Սենեակին կեդրոնը, սախաղամածին վրայ զետեղուած է հասարակ տախտակէ շինուած սնուակ մը, որուն կախարիչը դամբարանի տակունքին մը ճերմակութիւնը: Կը վերցնեմ կախարիչը, տեսնելու համար Արշակին գէմքը վերջին անգամ մըն ալ: Զապէլ կանգնած է քովս, աչքերը ուղղած դիմացի պատուհանը, ուրկէ կը տեսնուի պարտէզը:

— Բայց վերջիվերջոյ, — կ'ըսեմ կախարիչը զետեղելով, — ի՞նչպէս մեռաւ Արշակ:

— Ես սպաննեցի Արշակը, — կ'ըսէ Զապէլ հանդարտ ձայնով մը:



Ո՛չ, առանձին չեմ տեսնակին մէջ: Զապէլ կանգնած է կողքիս, սենեակին դրան առջեւ, ճերմակ ու երկար շրջագոյն մը հագած: Այլ ձեռքին մէջ բռնած է ատրճանակ մը, որուն փողէն կապոյտ մուխ մը կը բարձրանայ: Ատրճանակը կը նմանի ճիւղ ու ճիւղ դրպանս գտնուող ատրճանակին:

— Զուգեցի որ ձեռքերդ աղտոտես Արշակին պիղծ արիւնովը, — կ'ըսէ, — կը սպասէի վերադարձիդ, անոր հաշիւը մաքրելու համար: Վրէժը լուծեցի խեղճ զոհերուն, զու բոլոր ընկերներուդ և իմ բոլոր ընկերուհիներուս:

Գուրգեն կը լսուին կշտութաւոր քայլեր: Պահակագունդ մըն է, որ կ'անցնի տան առջևէն: Զապէլ սահայն խուճապի չի մտտնուիր:

— Արշակը սպաննեցի, Հիմա պէտք է թաղենք դիակը: Պարտէզին անկիւնը կայ Հիւղակ մը: Հոն կը գտնես հասարակ տախտակէ երկայն սնտուկ մը: Այդ կ'ըլլայ Արշակին դազադը: Մինչ դուն սնտուկը կը բերես հոս, ես մարմինը կը պատանգեմ ճերմակ սաւանի մը մէջ: Փոքր արդէն փորուած է իր ձեռքերով:

Կ'ըջնեմ աստիճանները: Պարտէզը կը շարունակէ իր մղձաւանջը: Խոտերուն մէջ քայտուած է քառանկիւն վէրք մը, որ ունի մարդկային մարմնի մը չափերը:

Սնտուկը կը գտնեմ Հիւղակին մէջ: Տակաւին թեթեւ է, կը զետեղեմ ուսիս ու կը դնեմ Արշակին սենեակին մէջտեղը, առխտակամածին վրայ: Զապէլ արդէն մարմինը փաթթած է ճերմակ սաւանին մէջ: Միասին կը վերցնենք դիակը ու կը զետեղենք սնտուկին մէջ: Մուրճը եւ դամբը պատրաստ են արդէն աթոռի մը վրայ: Կ'ամբաստանեմ կափարիչը ու քաշելով-քաշելով սնտուկը կը հասցնենք մինչեւ փոսին եզերքը: Ետտ խորունկ չէ Արշակին փորած գերեզմանը, քայքայ քաւական է դաւաճանի դիակը պարունակելու համար: Հողով կը դոցեմ խուարի այդ կոպիճը եւ կը հարթեմ, որպէսզի ոչ ոք դիտնայ անունը անոր, որ թաղուած է այս պարտէզին մէջ:

— Հիմա թ'նչ պիտի ընենք, — կը

(Շարունակելի)

հարցնեմ Զապէլին, — կ'ուզե՞ս որ վերադառնանք հօրդ տունը:

— Հայրս ո՛չ ոքի պէտք ունի: Մենք Հիմա ազատ ենք: Պէտք է շարունակենք մեր դործը: Զէնք ունի՞ս:

— Այո՛, ատրճանակ մը, որ հայրդ տուաւ:

— Փամփո՞ւշտ:

— Հազիւ տասնեակ մը:

— Հիմա կ'իլլինք վեր, կ'առնենք պէտք եղած պարէնն ու դիւնաժները ու կը մեկնինք դէպի արեւելք, հոն՝ ուր տակաւին հայ ժողովուրդը կենաց կամ մահու պայքար կը մղէ:

Կը բարձրանանք Արշակին սենեակը: Զապէլ կը բանայ հաղուսաի դորան մը: Հաղուստներուն ետեւը պահուած են երկու արդիական հրացաններ եւ անթիւ փամփուշտի տուփեր:

— Այս դէնքերը կառավարութիւնը նուիրեց Արշակին եւ հօրը, որպէսզի կարենան իրենք դիրենք պաշտպանել այս ամայի տան մէջ: Միմոն իր հրացանը չի կրեր երբեք՝ չմտածուելու համար: Հաղուստներուն տակ միշտ պահուած ունի երկու ինքնազործ ատրճանակներ: Այո պահուս, կը թափառի մօտակայ լեռներուն մէջ՝ հովիտի տարազով, տասնեակ մը ուխտներուն զլուխը անցած: Հոն զացած է Ֆետայիները լրտեսելու: Պէտք է աճապարենք, որպէսզի մեր քաջերը չիյնան անոր ծուղակը:

Ահա կը քայլենք դաշտերու մէջ: Ա՛խ, ե՞րբ արդեօք պիտի տեսնեմ Արարատի ճերմակ դազաթը:

Ն. Զ.

Ս Ո Ն Ա Դ

156-20090

Լուսածայտուն ջահերուն տակ երագուն
 Հնակառայց տանարի մը կոքական՝
 Ես կը սիրեմ երգեհոնի մը հնչուն
 Խորասուզուիլ նուագին մէջ սրբագան,
 Ներքեւ որուն հոգեթրթիւ դիւքանքին
 Զգալ, գգալ ներանձնական ապրումով
 Լոյսը ծաղկուն Արարչական հրաշքին,
 Բոյրը անհուն երանութեան անխոյզ:
 Մտնա՛լ յաւէտ հոգւոյն պատա՛նքն հողածին
 Ու վերացած գիրկն աղուանոյշ մեհութեան՝
 Նիրվանայի իմացումով անհնին
 Անմահութեան իմելի գինի՛ն երկնահամ...:

Ես կը սիրեմ լիալուսնի տակ ոսկուն
 Նստիլ ափին շատրուանի մը բուրեան
 Ու մերկագեղ արձաններուն դէմ որուն
 Ու ջուրերուն զուլայ ցայտփին հանդիման՝
 Թախի՛ծն ապրիլ այն սիրաբեկ սրտերուն,
 Որոնք երբեք խինդ ու արեւ չտեսան-
 Աչքերն անոնց միշտ անթարթափ յառեցան
 Երջանկութեան հովիտներուն հավասուն:
 Ո՛հ, ցայտփին պէս շողածիծաղ ջուրերուն
 Բերկրա՛նքն ըլլալ սիրոյ ամանն խորհուրդին
 Եւ պարուրել վարարումով գարնային
 Յոյսերն աւեր, վիշտերը անոք սրտերու...:

[Handwritten signature]

Ես կը սիրեմ լեռնաժայռի մը վըրան
 Կուրծքս պարզել հոգմերու խօլ համբոյրին
 Եւ անյողողող՝ ձաղկել վիհե՛րը մահուան,
 Ըսե՛լ անոնց թէ ես տե՛րն եմ իմ կեանքին,
 Ճամբորդն անշեղ գիտակցութեան խոհական
 Եւ ղեկավարն խորախորհուրդ բնութեան:
 Տիեզերքն է որ կու տայ լոյս տարփելի
 Իմացական յղացներու գերագոյն,
 Որով կրնամ կարգալ լեզու՛ն աստղերուն
 Հեգաճնոյ՞ տաղերուն պէս Տէրեանի
 Եւ արծուաթեւ՝ ըլլալ հաղորդ հմայփին
 Երկնապաց քանապարհին լուսնային:

Գեղանարտար կտոռոյցն ինչպէ՛ս չսիրեմ
 Մեր կիսափուլ կոթողներուն պատմական,
 Որ դեռ դարեր անեղօրէն կը կրեն
 Հաննարամիտ հայու դրոշմն անթառամ:
 Կանգնի՛լ հպարտ Ախուրեանի գետափին,
 Կոչել կեանքի ոգիներն իմ հայրերուն,
 Տոյց տալ անոնց, ցոյց տալ ծաղկո՛ւմը կրկին
 Մեր բիրաբանդ եւ փլուզուած շէներուն,
 Եւ Մասիսի երդնո՛ւլ չճնաղ անունով,
 Թէ բաժանեալ գոյգ փերուն Արաքսի՛
 Կանգնեմք պիտի նոր Անիներ պանծալի
 Եւ յաչքարեր, օ՛, երկնահաւն արուեստով...:

Ես կը սիրեմ գարնան տարփուտ գիշերին՝
 Բիւրականի բիւրեղ աչքով լուսեղէն՝
 Դիտե՛լ, դիտե՛լ աստղահոյլերն համօրէն,
 Որոնց թափուն խորհուրդին մէջ մեղրային
 Տիեզերքի փոխան սատափ գանձերուն՝
 Տեսնե՛լ արբշիտ վերընձիւզուած մեր ներկան
 Ու վշտին մէջ մեր կորուսեալ հողերուն՝
 Վառ գալիքի ապրիլ երա՛զն իրական:
 Բիւրականի, ո՛հ, հեռափիւռ բարբառով
 Յգե՛լ, յգե՛լ լոյս պատգամներ աստղերուն,
 Թէ անմահ ենք, մենք, երփներանգ ձիւրքերով
 Եւ գոյութեան մեր պայֆարո՛վ աննկուն...:

ՅԱԿՈՒՄ ԱՆՆՈՒԿԵԱՆ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ԴԵՊԲԵՐԸ ԶՕՐԶԸԶ ԽՄԻՉՔԱՐԱՆՈՒՄ

Նին՞՞՞... Նին՞՞՞...

Չարլիի ինձ հիւրասիրելուց յետոյ, մի քանի օր էլ նրան չհանդիպեցի : Արդէն մոռանալու վրայ էի նրան, երբ մի օր աշխատանքիցս վերադառնալու ժամանակ հանդիպեցի : Չարլին էլ առաջուայ Չարլին չէր : Նա վերափոխուել էր ամբողջովին : Սափրուել էր : Կարել ու յարդարել էր առել իր աւազազոյն խոտնխուռ ժազերը : Հագնուել էր կանոնաւորապէս եւ նրա սպիտակ վերնաշապիկի օձիքը փայլում էր ճերմակ անրծութեամբ, որը այս երկրում քաղաքակրթութեան նշան է համարուում :

Ես ցոյց տուեցի, թէ ոչ մի փոփոխութիւն չեմ տեսնում նրա մօտ եւ քարեւեցի ինչպէս սովորաբար .

- Բարի երեկոյ, Չարլի : Գնանք դարեջուր խմելու :
- Ո՛չ, — դու ինն օրօրեց նա, — դնանք սուրճ խմելու :
- Ի՞նչ, — հարցրի զարմացած :
- Սուրճ, — ծիծաղեց նա :
- Գնանք, Չարլի, — համաձայնեցի, — բայց ո՞ւր :
- Եկէք ինձ հետ, — սոսայ նա :

Ճանապարհին Չարլին պատմեց, որ մեր վերջին հանդիպումից յետոյ George's-ում, այլեւս այնտեղ չի մտել, որ ոչ մի կաթիլ ուղեւից խմիչք այլեւս չի խմել եւ այժմ աշխատում է այն ճաշարանում, ուր մենք հիմա դնում ենք : Ես ոչ մի զարմանք չարտայայտեցի, ցոյց տալով, որ այդ այդպէս էլ պիտի լինէր եւ նկատեցի, որ Չարլին զոհ մնաց իմ այդ վերաբերմունքից :

Չարլին ինձ տարաւ մի ճաշարան, որն ամբողջովին նոր էր կառուցուած եւ որի գրտի գորշագոյն մարմարէ մուսքի ճակատին ոսկեայ եւ ուռուցիկ տառերով դրուած էր «Օլիմպիա» :

- Յու՛նիկա՞ն է, — հարցրի Չարլիին :
- Այո՛, — սոսայ նա :

Այդ ճաշարանը դրսից մէկ յարկանոց էր երեւում, բայց ներսից այդպէս չէր : Ներսից այն երեք յարկանոց էր : Վարի յարկը շատ ընդարձակ էր : Յետոյ դալիս էր երկրորդ յարկը, որը պատշգամբի նման տարածուած էր առաջին յարկի կէտի վրայ : Յետոյ դալիս էր երրորդ յարկը, որն իր հերթին

տարածուած էր երկրորդ յարկի վրայ: Այդ ճաշարանը մի մեծ թատրոնի էր նման: Թէեւ ազմուկ էր ներսուած, բայց անբիծ մաքրութիւն էր տիրում ամէն տեղ:

Ճաշարանի առաջին յարկը ցածր ցանկապատերով բաժանուած էր երեք բաժինների: Գոնից անմիջապէս աջ՝ ակադարանն էր, ուր կարելի էր մի երկու բողոքուած թեթեւ ուտելիքներ, սուրճ եւ զովայուցիչներ ստանալ: Նրա զիմացը խմիչքարանն էր՝ աղօտ լոյսով ողողուն ու խորհրդաւոր: Սրահի վերի մասը պարերի համար էր: Չարլին ասաց, որ երկրորդ յարկն ընտանեկան ճաշերոյթների համար էր, իսկ երրորդ յարկը սիրահարներին: Չոյզերի համար, որոնք ցանկանում են հետու լինել կողմնակի զիտողներից եւ առտնձնութիւն ունենալ: Այդ սովորական մի ճաշարան չէր, այլ մի քաղաք ճաշարան:

Մենք ներս մտանք թէ չէ, Չարլին անմիջապէս իր տան պէս զգաց: Ինձ նստեցրեց ակադարանի պատի տակ դրուած մի սեղանի առջեւ եւ ինքը դնաց: Քիչ յետոյ նա եկաւ ճատուցարանի վրայ բերելով երկու գաւաթ հոտաւէտ սուրճ եւ երկու շերտ կարկանդակ:

— Ես տեսնում եմ զուք այտեղ ձեր տան պէս էք զգում, — ասացի:

— Այո՛, — ասաց նա, — այս ճաշարանի տէրը՝ Միկօ Նիկօպօլտան, իմ լաւ բարեկամն է այնքան, որ ես նրա կնոջն երկու-երեք տարի անդէրէն դասեր եմ տուել:

— Ես չլիտէի, որ զուք ուսուցիչ էք եղել, Չարլի, — ասացի:

— Ես փիլիսոփայութեան մագիստրոսի կոչում ունեմ, եւ մինչեւ իմ անկումը անդէրէն էի դասաւանդում այս քաղաքի միջնակարգ դպրոցներից մէկում, — ամաչելով եւ կարմրելով ասաց նա:

— Կարո՞ղ եմ հարցնել, թէ ինչո՞ւ այդպէս եղաւ...

Նա գլուխն իջեցրեց կրծքին, մէկ վայրկեան մտածեց եւ ասպա բարձրացրեց իմ դրուխտն ինձ նայեց, թուաց, թէ ամաչելով էր, որ պատմեց.

— Այդ երկու տարի առաջ էր, երբ ես դպրոցից տուն գալով իմացայ, որ կիսն վերցրել է իմ երկու տարեկան աղջկան եւ փախել իր սիրեկանի հետ... Հարուածն ահաբի էր: Ես սիրում էի երեխայիս ամէն բանից վեր ամբողջ աշխարհում: Սիրում էի եւ կնոջս... Դէպքի երկրորդ օրը երեխայիս հանդէպ ունեցած կարօտի վրայ աւելացաւ նաեւ ամօթի զգացումը, թէեւ աշխատում էի ծածկել կատարուածը: Ես պիտի խենթանայի եւ սկսեցի խումել: Ետևով դպրոցն իմացաւ եղածի մասին: Բարձր գասարանների աղջիկներն սկսեցին ինձ սիրային նամակներ գրել (այն ժամանակ ես երեսուներեք տարեկան էի), իսկ տղաներն այնպիսի անանուն նամակներ, որոնցից ազատուելու համար ինձ մտում էր միայն վերջ տալ կեանքիս... Ես սկսեցի աւելի շատ խմել, մինչեւ որ հետացրին դպրոցից: Ետևով կորցրի ամէն ինչ եւ զարձայ այն, ինչ զուք տեսաք ինձ առաջին անգամ...

Մենք լուռ էինք, երբ մեզ մօտեցաւ հասակով կարճ, մի քիչ դէր եւ թօշնած ու սպառուած արտաքինով, մօտ վաթսուծ-վաթսուծ հինգ տարեկան մի մարդ եւ ձեռքը ջերմութեամբ դրեց Չարլիի ուսին.

— Ինչպէ՞ս ես, Չարլի:

Չարլին արթնանալով իր մտածումներից՝ ոտքի ելաւ.

— Ո՛հ, պարտն Նիկօպօլտոս...

— Նստեցէք, նստեցէք, — ասաց Նիկօպօլտան ու ինձ նայելով, հարցրեց Չարլիին, — պարտն ձեր բարեկամն է:

— Այո՛, — ասաց Չարլին:

Նիկոպոլոսը ձեռքն ինձ պարզեց .
 — Պարոն Բոյլի բարեկամն իմ բարեկամն է :
 Ես ոտքի ելայ եւ տուեցի իմ ազգանունը :
 — Աւրեմը դուք Հա՞յ էք , — ուրախացու Նիկոպոլոսը եւ նստեց Չար-
 լիի կողքին , իմ դիմաց :
 — Այո՛ , — ասացի :
 — Հայերն ու յոյներն հղբայրական ժողովուրդներ են , — ասաց նա
 խոստա ու սպառուած ձայնով :
 — Այդպէս է , — ասացի ես :
 — Մենք միշտ պէտք է հղբայր մնանք , — ասաց նա :
 — Այդպէս է , — ասացի ես :
 — Մեզ պէտք է այդ հղբայրութիւնը , — բացատրեց նա , — եթէ աշ-
 խարհի բոլոր ժողովուրդներն իրար միս ուտեն , մենք պէտք է հղբայր ու
 Համերաշխ մնանք : ... Թշնամին , մեր ընդհանուր թշնամին , սեւ օձի պէս
 պառկել է մեր եւ մեր Հողերի վրայ ... Մեզ պէտք է մեր միացեալ ուժերով
 քսիջախել նրա զոռուած պատճառող դուրիը ...
 — Այդպէս է , — ասացի :
 Չարլին , որ երեւի մեզ չէր Հասկանում , ելաւ տեղից .
 — Պարոն Նիկոպոլոս , գնամ ձեզ Համար սուրճ բերեմ ...
 — Այո՛ , Չարլի , — ասաց Նիկոպոլոսն , տոտնց անդրադառնալու , թէ
 ինչ ասաց Չարլին : Բայց նկատելով նրա բացակայութիւնը՝ կամացուկ ասաց ,
 — դուք չդիտէք , թէ ես ինչքան ուրախ եմ , որ այս Հրաշալի մարդը գտել է
 իր զգաստութիւնը : Գիտէ՞ք , մինչեւ իր Հեռ պատահած դժբախտութիւնը ,
 նա իմ կնոջ երկու-երեք տարի անդլերկնի դասեր է տուել :
 — Ի՞նչ է անում նա ձեզ մօտ այժմ , — Հարցրի :
 — Ես նրան վերակացու եմ նշանակել , թէեւ նա ճաշարանից այնքան
 բան է Հասկանում , ինչքան ես Հիւլիի ճեղքումից :
 — Նա պէտք է վերադառնայ իր ուսուցչական ասպարէզին , — ասացի :
 — Այո՛ , բայց ոչ այս քաղաքում , այլ մի այլ տեղ : Այստեղ նա վար-
 քաղուրկ է եղել : Սակայն այդ կարելոր չէ : Կարեւորն այն է , որ նա վերա-
 գտել է իր արթնութիւնը :
 Չարլին յիս եկաւ երեք դուաթ թարմ ու Հոտաւէտ ամբրիկեան սուր-
 ճով : Միկօ Նիկոպոլոսն ոչ մի ուշադրութիւն չդարձրեց իր դուաթի վրայ :
 Նա սիրում էր խօսել : Եւ թէեւ անդլերէնը քերականօրէն ճիշդ էր խօսում ,
 բայց խօսում էր արեւելքցու այնպիսի մի ծանր շեշտով , որ դժուար էր Հաս-
 կացուում : Այդ նրա մեղքը չէր , եւ ոչ էլ նրա ուսուցիչներին , այլ անգլերէն
 լեզուի Հնչունական անհեթեթութեանը :
 — Լաւ ճաշարան ունէք , — ասացի Նիկոպոլոսին :
 Նա ուշադրութեամբ նայեց իր Հարուստ սեփականութեանը եւ Հառա-
 չեց ծանրօրէն .
 — Այս ճաշարանն այժմ ինձ Համար այն արժէքն ունի , ինչ զառամեալ
 մէկի Համար արքայական թաղը , որի Համար , նա վրայ է դրել իր ամբողջ
 կեանքը ...
 — Ձեր սուրճը սառեց , պարոն Նիկոպոլոս , — ասաց Չարլին :
 Միկօ Նիկոպոլոսը շտեց նրան եւ շարունակեց .
 — Ինձ հմանները երկու խոշոր սխալ են գործում : Նախ թողնում են
 իրենց Հայրենիքը : Հայրենիք թողնելը նշանակում է լքել Հարազատ ժողո-
 վուրդը , որը ծնել է քեզ , եւ արհամարհել Հայրենի սուրբ Հողը , որին կպած

են եղել զո Հայրերն ու նախահայրերը: Նշանակում է դնալ օտարադպի դառնալ... Երկրորդ սխալն է օտարութեան մէջ ձգտել հարստանալ... Ես ձրդտեցի եւ Հիմա հարուստ եմ ա՛յն ժամանակ, երբ այդ հարստութիւնն ինձ այլեւս պէտք չէ... Այս հարստութիւնն ես չեմ դտել անտառում բուսած սնկի պէս, այլ մաքառել եմ նրա համար: Քառասուն տարի շարունակ, ես ամէն օր աշխատել եմ աւելի քան տասնըփնց ժամ: Աշխատել եմ դիւղացու շարքաշ եղան պէս եւ խնայե՛լ, խնայե՛լ ու խնայե՛լ... Ինձ գրկել եմ կեանքին սնհրաթեշտ, նոյնիսկ, ամէնից տարբական բաների մէջ... Ամաչում եմ ստեղ, անպամ ուտելու մէջ... Այդ կեանք չէր, այլ դժոխք, եւ Հիմա, երբ հարուստ եմ, նորից կեանք չէ, այլ դժոխք... Ո՛ւր մնաց իմ երիտասարդութիւնն, իմ երազները, կեանքի հանդէպ ունեցած իմ հրճուանքը... Ո՛ւր մը լաց... Մի՞թէ ես նորից եմ ծնուելու, որպէսզի վայելեմ այս հարստութիւնը...

Նիկոպոլոսը Հիստերիք ծիծաղեց եւ ես նրա աչքերում արցունքներ տեսայ: Կորցրած երիտասարդութեան եւ չապրած օրերի վշտի արցունքներ: Մենք, ամէնքս լուս էինք, երբ նա ձեռքի երեսով սրբեց իր արցունքները եւ մեղաւոր ժպտալով, հարցրեց ինձ.

- Ի՞նչ էք անում դուք Հիմա:
- Ես աշխատում եմ մի գործարանում, — ասացի:
- Մի՞թէ չէք ուզում հարստանալ, — թուաց թէ ծաղրով հարցրեց նա:
- Ո՛չ, — ասացի, — հարստութիւնն ինձ երբեք չի հետաքրքրել: Ինձ այնքան գրամ է պէտք, որքան որ գիշերը փողոցում չմնամ եւ կարողանամ վճարել մի պնակ ապուրի, երկու դաւաթ սուրճի եւ մի տուփ գլանիկներէ համար...

- Իսկ Հայրենի՞քը...
- Ինձ համար, իմ ժողովուրդն եւ իմ Հայրենիքն ամէն բանից վեր են, եւ ես...

— Գնանք, Միկօ, — ինձ բնդհատեց կանացի մի ձայն:
 Ես նայեցի եւ զմայլանքից քար կտրեցի այնքան, որ նոյնիսկ մտացայ ոտքի կանգնել: Իմ դիմաց, Նիկոպոլոսի կողքին, կանգնել էր շին Յուսասանի աստուածուհիների տիպարի, հաղիւ քսաներկու-քսանհինգ տարեկան մի գեղուհի:

— Get up, Miko, — կրկնեց գեղեցկուհին անհամբեր:
 Նիկոպոլոսը յունարէն ինչ-որ բան ասաց դեղեցկուհուին եւ դարձաւ ինձ.

— Կինս է, Նինօ Նիկոպոլոսը...
 Չարիքն արդէն ստեղի էր: Ես էլ վեր թռայ եւ խոնարհուեցի զմայլելի Նինոյին: Սակայն, կարծում եմ, որ նա ո՛չ ինձ տեսաւ եւ ոչ էլ նկատեց իմ խոնարհութիւնը:
 — Ասում եմ, դնանք, Միկօ, — ճիշդ եւ ճիշդ յամառ ու երես առած երեխայի պէս, իր փոքրիկ ոտքով յատակը դռփեց եւ անհամբեր դարձաւ Նինօն:

Նիկոպոլոսը նորից յունարէն բաներ ասաց Նինոյին եւ ցոյց տուեց իր կողքի ազատ տեղը:
 Նինօն նստեց: Բայց նստեց այնպէս, որ կարծես կրակի վրայ նստեց:
 — Ես Հիմա սուրճ կը բերեմ տիկին Նիկոպոլոսի համար, — ասաց Չարիքն եւ վազեց:
 Ասացի արդէն, որ Նինօն գեղուհի էր: Բայց գեղուհիներ շատ կան:

Նինոյի գեղեցկութիւնն ուրիշ էր: Նմանները հազուադէպ են պատահում: Պէտք էր, որ նա Ձևաի թոռներից լինէր: Սակայն, Նինոն անիմաց մէկն էր երեւում, որովհետեւ նա փոխանակ պահելու եւ զարգացնելու իր բնական ու հազուադէպ գեղեցկութիւնը, ապակառնել էր այն, երեւի, իր սեւ կամ շաղանակադոյն մազերը գեղին ներկելով: Նինոն երեւի չգիտէր, որ գեղեցիկ է այն, ինչ բնական է: Նա չգիտէր երեւի, որ շիկահերութիւնը ոչ միշտ գեղեցկութիւն է նշանակում: Նա չգիտէր երեւի նաեւ, որ շիկահերութիւնն ոչ ոք երկրում ստեղծել են վաճառականները, տարեկան տասնեակ միլիոններ ծախսելով նրա սարածման վրայ, հարիւրաւոր միլիոնների գեղին ներկ վաճառելու համար:

— Նինո, պարոնը հայ է, — յայտնեց Նիկոպոլոսը իր երիտասարդ եւ դժայլելի կնոջը, որին կարելի էր նրա թոռնուհու տեղն ընդունել:

Իմ ազգային ծագման մասին խօսելով, Նիկոպոլոսը թերեւս ուղեց, որ իր կինը մի շին ուշադրութիւն պարձնէր իմ վրայ, որովհետեւ իր հիւթեղ շրթունքները սեղմած եւ դէմքը խոտոտած Նինոն նստել էր իմ գիմաց եւ ինձ չէր տեսնում, որի համար իրեն տկարմար էր զգում Նիկոպոլոսը:

— Հա՞, — միանգամայն անտարբեր հարցրեց Նինոն եւ կողքի նայեց: Անշուշտ, իմ հայ լինելու հանգամանքը, Նինոյի, Նինոյի նմաններ էլ այլանուն Նինոների համար որեւէ նշանակութիւն չունէր այնքան, որ նրանք կարողանային դոնէ քաղաքապետութեան համար ժպտալ ինձ:

Ուրիշ կը լինէր Նինոյի անդրադարձն, եթէ Նիկոպոլոսն ասէր, որ ես շարժանկարային կամ էլ հեռուստատեսութեան ասող եմ: Rock 'n' Roll երգիչ եմ, բայց ոչ օպերային: Բռնցքամարտիչ եմ, բայց ոչ, ասենք, զրոյ: Միլիոնատէր եմ, բայց, ոչ աշխարհահռչակ գիտնական: Այդ այն բանի համար, որ Նինոները միայն առաջիններին են հասկանում, իսկ երկրորդներին ատում են, որովհետեւ չեն հասկանում:

Նիկոպոլոսն ամաչեց իր կնոյ վերաբերմունքի համար իմ վերաբերեալ իր սուսած ծանօթութեան նկատմամբ, եւ ինձ նայեց ազերասկան:

Ես ժպտացի նրան: Ես համակրում էի այդ մարդուն:

Գեղուհի Նինոն փնչաց-փնչաց եւ յանկարծ ոտքի կանգնելով, իր բարակ ու շատ գեղեցիկ ցուցամասն իր ամուսնու յունական զթիւն պարզելով, իր ջարդուած անդերէնով յայտարարեց.

— Միկօ, եթէ չես գալիս, ես գնում եմ:

Նինոն չըջուեց: Եւ լաւ արեց, որ չըջուեց: Որովհետեւ նոր միայն ես տեսայ նրա բարակ մէջքը, լեցուն կոնքը եւ դժադիւր սրունքները: Զգացում էր, որ նրա մարմնի ամէն մի մասից հմայք էր ծորում: Բայց նրա բնատրութիւնը փնացնում էր այդ հմայքը: Յետոյ ես միայն իմացայ, որ այդ բնատրութիւնը ստացական էր եւ Նինոյինը չէր:

Նիկոպոլոսը անքաց: Բացեց ձեռքերն անճարակ, եւ ելաւ տեղից:

Ես էլ ոտքի կանգնեցի:

— Երբեք չամուսնանաք, — ասաց Նիկոպոլոսը շուկով, երբ ձեռքս բռնեց ցտեսութեան համար:

— Նինոյի եւ Նինոյի գեղեցկութիւնն ունեցողները հետ ես միշտ էլ պատրաստ եմ ամուսնանալու, — ասացի:

Նիկոպոլոսը հռուսեց.

— Ձեր եւ մեր հայրենիքներում միայն... Այստեղ ոչ... Այստեղ դրանք կին չեն, այլ ստրկատէրեր...

Երբ նրանք զնացին, ես կանգնել էի եւ չէի կարողանում աչք կտրել:

Նինոյի թուխ սրունքներից, դեղակերտ դիտերից, ծործորուն կոնքից, բարակ մէջքից եւ բարձր ու բարակ վզից : Յետեւից նայելիս, նրա դեղին ներկուած մազերը շէին փճացնում նրա եղակի գեղեցկութիւնը : Ինձ հետ միասին, Նինոյին էին նայում ճաշարանի բոլոր յաճախորդները, իսկ տասնեակ սպասաւորները, երբ դէմ ու գէմ էին գալիս, խոնարհուում էին նրան եւ նրա ծեփացած ու սպառուած ամուսնուն :

— Ես տեսնում եմ, որ չքնաղ Նինոն ձեզ գերել է, — լսեցի Չարլիի ձայնը :

Շրջուեցի : Չարլին արծաթեայ մի սկուտեղի վրայ Նինոյի համար կարկանդակ եւ սուրճ էր բերել :

— Զեղ եմ ասում, Չարլի, — ասացի, — չեմ կարծում երկրապանդի վրայ կայ աւելի մի հրապուրիչ էակ, քան գեղեցիկ մի կինը :

— Թերեւս, — ասաց նա, — եթէ միայն նոյն կնոջ հոգին էլ գեղեցիկ է : Ուզո՞ւմ էք Նինոյի բաժին կարկանդակը եւ սուրճը :

— Ո՛չ, — ասացի, — Նինոն, նոյնիսկ մէկ աչքով չնայեց վրաս :

— Նինոն չի նայում, երբ ենթական զանուց չէ :

— Բայց տարբական քաղաքավարութի՞ւնը...

— Նինոն ո՛ւր, քաղաքավարութիւնն ո՛ւր...

— Մի՞թէ...

— Նինոն այդպէս չէր, երբ առաջին անգամ այս երկիրը եկաւ : Սակայն...

— Սակայն ի՞նչ, Չարլի :

— Գրեթէ, ես դիտել եմ, եւ եկել այն եզրակացութեան, որ Արեւելքից եկած կանայք ո՛չ միայն փորձում են նմանուել, այլեւ փորձում են գերադասել այն տիպարի կանանց, որոնց պատկերում են այս երկրի շարժանկարները, հետուստաստեսութիւնը, առեւտրական յայտարարութիւնները, եւ վերջապէս ընդօրինակում են միջավայրի յոսի կողմերը : Նինոն այդ կանանցից մէկն է : Երբ Նիկիոպոլոսը հինգ տարի առաջ նրան Յունաստանի ինչ-որ գիւղից այստեղ բերեց, Նինոն ամօթից շէկնում էր տղամարդու հետ խօսելիս, իսկ հիմա, ինքնեքդ տեսաք, թէ ինչ է դարձել... Տեսաք, թէ ինչպէս դեղին ներկուած նրա մազերն այլանդակում են նրա չքնաղ դէմքը... Սակայն Նինոն չի հասկանում այդքան : Նա չի կարողանում տարբերել քնականի գեղեցկութիւնն ընդհանրական դարձած կեղծիքից... Եւ տեսաք, թէ նա ինչպէ՞ս է վարուած բարի, ազնիւ եւ շարքալ աշխատանքից սպասուած Նիկիոպոլոսի հետ...

— Նիկիոպոլոսն ինքն է մեղաւորը, — ասացի :

— Ո՛չ :

— Այո՛ :

— Ինչո՞ւ, — հարցրեց նա :

— Նիկիոպոլոսն երկուեւկէս անգամ աւելի մեծ է, քան Նինոն, — ասացի :

— Ո՞վ է մեղաւոր :

— Նիկիոպոլոսը :

— Ոչ : Նինոն է մեղաւոր : Նիկիոպոլոսն երբ ամուսնութեան առաջարկ է բերել, Նինոն արդէն քսանն անց մի աղջիկ է եղել, ուրեմն եւ գիտակցել է, թէ ինչ է անում : Նա տեսել է Նիկիոպոլոսի ծերութիւնը, բայց եւ լսել է նրա հարստութեան մասին... Նինոն, որ մի ձկնորսի աղջիկ է, երբեք չէր համաձայնի ամուսնանալ մի ուրիշ ձկնորսի հետ, որը երկուեւկէս անգամ

իրենից մեծ լինէր եւ Նիկողոսի հարստութիւնը չունենար... Նինոն նախապէս սիրահարուած է եղել մի ձկնորս երիտասարդի վրայ...

— Նորից Նիկողոսն է մեղաւոր, Չարլի:

— Ո՛չ: Նիւթապաշտութիւնը: Նիւթն է, որ այսօր իշխում է հոգիներին:

— Նիւթապաշտութիւնը միշտ է եղել, Չարլի, — ասացի:

— Բայց ոչ այսօրուայ պէս, եւ այսօրուայ պէս ահաւոր:

— Այո, — ծիծաղեցի ես, — այնքան ահաւոր, որ ծերունի Նիկողոսն որ կարողացել է դնել զեղեցիկ Նինոյին, կաթիլ առ կաթիլ թունաւորելու համար իրեն, երբ խեղճ մարդն նոր է միայն սկսել ապրել:

— Եթէ միայն այդ լինէր, — կամացուկ ու խորհրդաւոր ասաց Չարլին:

— Էլ ի՞նչ, — Հարցրի:

Նա յապաղեց անմիջապէս պատասխանելուց: Բայց ես սպասեցի, դիտարկումով, որ նա ինձնից Ժածկիյիք ոչինչ չունի:

— Իմ կինը փախել է իր սիրեկանի հետ, որովհետեւ, թերեւս չի ցանկացել միաժամանակ երկու ամուսին ունենալ, եւ թերեւս ես հարուստ չէի, իսկ Նինոն...

— Չեմ հասկանում, — ասացի:

— Գիտէ՞ք չէ, Բիդ-Մաութին George's-ում...

— Այո՛...

— Նինոն նրա հետ է լինում... Նինոն ոչ միայն խաբւում է Նիկողոսին, այլեւ նրա դրամներով վարձատրւում իր սիրեկանին... ու սպասում, մի օր տէր դառնալու այս հարստութեանը...

Պանդից ես ուղեցի Չարլի սեղանը, աթոռները: Տակնուվրայ տնել այդ շքեղ ճաշարան-քաղաքը, բայց միայն կարողացայ շնչով:

— Նինո՛... Նինո՛...:

— Ըի՛շտ է իմ ենթադրութիւնը, որ դուք հազիւ Նինոյին տեսած, արդէն իսկ սիրահարուել էք նրա վրայ, — Հարցրեց Չարլին:

— Ըի՛շտ չէ: Բայց Նինոն զեղեցիկ է:

— Գեղեցկութիւնը կատարելութիւն է, իսկ Նինոն կատարելութիւն չէ... Խօսքս արտաքինի մասին չէ, այլ հոգու: Նինոն աղնիւ չէ...

— Նիկողոսն է մեղաւոր:

— Նորի՞ց:

— Այո՛:

— Նորից համաձայն չեմ ձեզ հետ: Ըի՛շտ է, Նիկողոսը թուլութիւն է ունեցել զեղեցիկ եւ երիտասարդ կին ունենալ, որը մարդկային է, բայց Նինո՛ն...

— Նինոն էլ իր մարդկային թուլութիւնն ունի, Չարլի...

— Նիկողոսի թուլութիւնն օրինական է, իսկ Նինոյինը՝ ո՛չ, — ասացաւ Չարլին:

Ես միշտ մոռանում էի, որ Չարլիի կինը լքել է նրան եւ փախել իր սիրեկանի հետ, որ Չարլին յանձինս Նինոյի դատապարտում էր իր կնոջը: Եւ ես փոխեցի խօսքը:

— Ինչպէ՞ս են հանդիպել Նինոն եւ Բիդ Մաութը:

— Այստեղ, ճաշարանում: Նինոն յաճախ է այտեղ լինում: Մի օր Բիդ Մաութը տեսել է նրան, իմացել է, որ ճաշարանատիրոջ կինն է եւ միւս օրը եկել աշխատանք խնդրել Նիկողոսից: Գիտէ՞ք, որ այսպիսի վայրերում զեղեցիկ արտաքին ունեցողներին աշխատանք չեն մերժում: Բիդ Մաութին

աշխատել է մի քանի օր եւ իր վրայ գրաւել Նինոյի սիրային ուշադրութիւնը... մնացածը յայտնի է...

- Ինչքա՞ն ճիշդ է այդ, — Հարցրի:
- Ուղո՞ւմ էիք, որ ճիշդ չլինէր...
- Այո՛... .

Չարլին ծիծաղեց, եւ ինձ նայելով ասաց.
 — Հասկանում եմ ձեզ...

Մ Ե Կ Ն Ո Ի Մ

Մայիս ամիսն էր արդէն, երբ մի օր իմ գործարանի պատուհանից, ինչպէս բանտի լուսամուտից, դուրս նայելով, տանիքների վրայով տեսայ արեւով ողողուն միջոցը, կապուտակ երկինքը, վարում լողացող սպիտակ ամպերը եւ զգացի, որ վաղն այլեւս աշխատանքի չպիտի դնամ:

Ես միշտ այդպէս եմ: Ձգացական մի փոքրիկ մղում, մի թեթեւ կարօտ, հողե-երաղան մի շղարշ, մի տեսիլք, եւ ահա որոշումս պատրաստ է: Ինչքա՞ն եմ տատապել արտորանքով կատարուած այդ որոշումներից, բայց չեմ խրատուել ու կատարել եմ նորից ու նորից եւ պիտի շարունակեմ կատարել նորից ու նորից:

Ինձ ճանաչողներն ասում են, որ իբր թէ ես մի անհասկանալի արտաբան եմ:

Թերեւս եւ այդպէս եմ, որովհետեւ ես ինձ չեմ ճանաչում: Ինձ ճանաչողներն ասում են, որ մոլորուած մէկն եմ այնքան, որ տուն դնալու համար, միանգամայն հակառակ ուղղութեամբ եմ քայլում: Որ անփոյթ եմ հազնուում, որ Շարաթ եւ Կիրակի օրերը ծով եմ պահում, որովհետեւ ծուլանում եմ ճաշարան դնալ...

Իմ մասին շատ բան են ասում: Իմ ծանօթներից մէկն մի օր ինձ պատմեց, թէ ինչպէս ինձ ճանաչողների մի խումբ մի խնկոյքում, մօտ երկու ժամ իմ մասին բաներ են պատմել իրար, եւ խնդացել:

- Իմ հոգը շէ, սակայն:
- Ես կեանքն իւրովի եմ բմբռնում:

Եւ այդպէս, գործարանի լուսամուտից տեսածս ամպի սպիտակ պատուները, կապոյտ երկինքը եւ մայիսեան արեւի շողերն ստիպեցին ինձ թողնել աշխատանքս եւ հեռանալ այդ քաղաքից:

Միւս օրն, ես փոխանակ ժամը վեցին արթնանալու, արթնացայ ու թին: Առանց շտապելու սափրուեցի, լուացուեցի եւ դնացի Չարլին տեսնելու:

Չարլին, երբ ինձ տեսաւ, դարձացաւ, որ աշխատանքի չեմ դնացել, բայց չդարձացաւ, որ թողել եմ աշխատանքը: Նա նստեցրեց ինձ վերակացուի իր սեղանի առջեւ եւ դնաց սուրճ ու կարկանդակ բերելու:

- Ի՞նչ էք մտադիր անելու, — Հարցրեց նա, երբ սկսեցինք կումկում խմել կաղաւթիչ սուրճը:
- Ոչինչ, — ասացի, — ես միայն ուզում եմ փախչել այդ քաղաքից:
- Նինոյին թողած ո՞ւր էք գնում, — չդիտեմ թէ ինչու ասաց նա:
- Ես ծիծաղեցի:

— Չարլի, — ասացի, — ո՞ւր ես խօսում Նինոյի մասին, երբ նա վերստ անգամ չնայեց: Յետոյ էլ Նինոն ամուսնացած կին է, իսկ մենք, հա-

յերս, շատ խիստ ենք բարոյական այսպիսի հասկացողութիւններում : Պատճառներ կան, որոնք ինձ ասիպում են հեռանալ այս քաղաքից :

— Պատճառներ չկան : Այլ, դուք փախչում էք ձեր մենակութիւնից : Մահայն, այդ ի դուր է : Դուք ինքնիրդ գիտէք այդ մասին, — ասաց Չարլիին :

— Ինչպէ՞ս դիտէք, — հարցրի :

— Գիտեմ, — ասաց Չարլին :

— Այո՛, Չարլի, ես փախչում եմ իմ մենակութիւնից, — ասացի :

— Այս էլ քանի՞երորդ անգամ :

— Նորից պիտի փորձեմ, Չարլի :

— Հնարաւոր չէ :

— Ինչո՞ւ ոչ, Չարլի :

— Որովհետեւ դուք ծնուած էք ձեզ մենակ զբալու համար : Ձեր մենակութիւնը ձեզ հետեւում է ամէն տեղ : Տեղը չէ, որ պիտի լեցնի ձեր մենակութիւնը :

Ես ուզեցի ասել, որ հայրենիքս կը լեցնի իմ մենակութիւնը, որովհետեւ ես կը ձուլուեմ նրա հետ, բայց հարցրի .

— Կարծո՞ւմ էք, որ անուղղելի եմ . . .

— Այո՛, Դուք դժբախտ մարդ էք : Ձեզ համար լաւ կը լինէր, որ դուք ծնուած չլինէիք :

Ես ծիծաղեցի եւ ուզեցի, որ Չարլին էլ ծիծաղէր : Բայց նա չծիծաղեց :

Մենք լուռ էինք, երբ մեզ մտեցաւ Միկօ Նիկօպոլսոյը եւ մենք ոտքի ելանք :

— Պարոն Բոյրի հետ Կիրակի երեկոյեան մեզ մօտ եկէք, կը նստինք եւ ժամանակ կ'անցկացնենք, — ասաց նա իր սովորական խոսքոտ ու սպասուած ձայնով :

Ես շնորհակալութիւն յայտնեցի եւ ասացի, որ չեմ կարող, որովհետեւ վաղ առաւօտեան ես մեկնում եմ այս քաղաքից :

Նա մի պահ ինձ նայեց, եւ երբ շրջուեց դնալու, ձեռքն ինձ պարզեց .

— Յաջողութիւն եմ ցանկանում :

Եւ, երբ ես նրա դէմքին նայելով բռնեցի նրա ձեռքը, նկատեցի, որ նա արդէն իսկ սկսել է մոռանալ ինձ :

Երբ բաժանուում էի Չարլիից, նա ասաց, որ թէեւ չի տկնկալում, բայց լաւ կ'անեմ որ դոնէ իրեն մէկ հատ նամակ գրեմ :

— Ձե՞մ խոստանում, Չարլի, — ասացի, — որովհետեւ ես կարծում եմ, որ լաւ է բարեկամութիւնը վերջացնել այնտեղ, ուր բարեկամներն այլու եւս բաժանուում են :

Միւս օրն առաւօտեան, երբ փոքրիկ պայուսակն ձեռքիս կայարան էի գնում եւ պիտի անցնէի George's-ի առջեւով, մղում ունեցայ ներս մտնել, գիտնալու համար, թէ արդեօք վերադարձե՞լ են Բէյքի Ֆէյսն ու Միկին, ինչպէս եւ նրանց յետեւից գնացած Դիլին : Հետաքրքրական էր գիտնալ նաեւ, թէ արդեօք Դիլին վերադարձրե՞լ է իմ չլքեալ տիկնոջ հետ : Հարիւր դուրսը, ինչպէս, որ խոստացաւ Չարլիին, իմ եւ բազմաթիւ այլոց ներկայութեամբ : Ես ուզում էի վերջին անգամ տեսնել նաեւ Հարուստների կանանց, որոնց թոււմ նաեւ գեղուհի Նինոյի հետ, լաւ վարձատրութեամբ սիրախաղեր վայելող գեղեցիկ Բիդ-Մատթի ծխողակներէ արձակումները, եւ այս անգամ ուշադրութեամբ դիտել նրա դէմքը, հասկանալու համար գեղեցիկ լինելուց՝ բացի, սիրային այլ հմայքը նրա :

Սակայն, երբ հետուից տեսայ, թէ ինչպէս թափով բացուեց խմբիչքարանի դուռը եւ դիմեալունը մայթի վրայ նետեց մի իման թշուառ ծերունու, վճռեցի ներս շփալ: Ես չէի կարող մտնել մէկ տեղ, ուր մէկին դուրս են նետում բռնութեամբ, իսկ միւսին ընդունում են օրրով: Մանաւանդ, որ դուրս նետուած ծերունին պիտի տեսնէր իմ ներս մտնելը:

Գնացքների կայարանում եւ կանգնեցի տոմսովաճառային բազմաթիւ պատուհաններից մէկի առջեւ եւ ասացի.

— Խնդրում եմ մի տոմս:

— Ո՛ւր, — Հարցրեց տոմսովաճառը, ինձ նայելով դարձանքով եւ ժպտով:

« — Ո՛ւր... »:

Ես անակնկալի եկայ եւ ծիծաղեցի: Իրապէս ես չգիտէի, թէ ո՛ւր էի լինում: Տոմսովաճառը նոյնպէս ծիծաղեց եւ մենք փոխադարձաբար համակրեցինք միմեանց: Փոխադարձ այդ համակրութիւնները շատ լաւ են: Դրանք հոգեկան այն հաղորդակցութիւններն են, որ հազուադէպ են պատահում մարդկային մեր գորշ, անտրամադիր, անտարբերութիւններով եւ հակակրութիւններով լեցուն եսապաշտական կեանքում:

Տոմսովաճառն իր իմացականութեամբ եւ բարութեամբ լեցուն աչքերով ինձ էր դիտում սիրով եւ ժպտով, երբ ասացի.

— Մի քաղաք, ուր դնալու համար ես քսանհինգ դոլարից աւելի չվճարեմ եւ դնացքը չփոխեմ:

— Շատ իր ունէ՞ք, — Հարցրեց նա եւ պատուհանից դուրս նայեց:

— Ո՛չ, միայն այս է, — ասացի ցոյց տալով ձեռքիս փոքրիկ պայուսակը:

— Օ՛, այդ շատ մեծ իր է, — ասաց նա լրջութիւն ձեւով, — եւ ես պիտի աշխատեմ մի այնպիսի տոմս տալ, որ դնացքը չփոխէք: Բայց ո՛ւր:

— Այնպիսի մի քաղաք, որի համայնքն ինձ սիրով ընդունի իր մէջ, — ասացի:

— Well, well !: Տեսնե՞ք, — ասաց նա եւ մտեցաւ պատին կպցրած քարեղէին, — այստեղ մի քաղաք կայ, ուր դնալու համար տոմսը քսանհինգ դոլարից մի քիչ աւել պիտի արժենայ: Յարմար է:

— Ոչ, — ասացի, — որովհետեւ ես քսանհինգ դոլարից աւելի չունեմ:

— Well, — ասաց նա մի տոմս պատրաստելով, — այն քաղաքը, ուր դուք պիտի դնաք կոչւում է Joyfield: Տեսնում էք, նոյնիսկ, անունը բանաստեղծական է: Այդ մի լաւ քաղաք է ապրելու եւ աշխատելու համար եւ ես հաւատացած եմ, որ Ձայֆիլդցիները ձեզ սիրով պիտի ընդունեն իրենց մէջ:

— Արդեօք քաղաքապետն ինձ դիմաւորելու համար կայարան կը դա՞յ, — Հարցրի ծիծաղով:

— Քաղաքապետն, — ինքն իրեն Հարցրեց նա, տոմս մի մեքենայով լրխկոցով ծակելով, — անշուշտ կը դայ, եթէ մենք այստեղից հետադիւր ուր դարկենք եւ իմաց տանք այդ մասին: Բայց իմաստ չունի: Քաղաքապետները շատ սրտաւրած մարդիկ են եւ պէտք չէ նրանց աշխատանքն ընդհատել: Եւ լաւ է, որ վաղը դուք ինքներդ ներկայանաք նրան...

Մենք նորից սրտանց ծիծաղեցինք:

Իմ տոմսի պատրաստումը շատ երկար տևեց: Տոմսովաճառն ինչ-որ Հաշուումներ էր անում և առանձին-առանձին մատեններում արձանագրում:

— Մէկ վայրկեան, — ասաց նա եւ իր աշխատանքի յետեւի դռնից դուրս գնաց :

Ես յետ նայեցի, տեսնելու համար, թէ ես շեմ ուշացնում ուրիշներին : Բայց Հերթ չկար : Մի երիտասարդ միայն նոր էր հասել, երկու հսկայ պոյուսակներ դրել յատակին եւ թաշկինակով սրբում էր իր դժգոհ գէմքը :

Երկու բուլէից տոմսավաճառը յետ եկաւ :

— Ամէն ինչ պատրաստ է, — ասաց նա եւ սովորական դեղնաուն ու փոքրիկ տոմսի հետ պարզեց նաեւ մի յաւելիալ կապտաուն թուղթ :

— Ինչքան պիտի վճարեմ, — հարցրի :

— Տասնինն դոլար քսաներկու սենթ :

— Բայց դուք ասացիք, որ այդ տոմսը քսանհինգ դոլարից աւելի արժի, — ասացի :

Նա կարմրեց եւ անհանգիստ շարժում կատարեց կանգնած տեղում .

— Այդ տոմսի արժէքն իրական քսանեօթ դոլար քստասուներեք սէնթ է, բայց դուք վճարեցէք այնքան, ինչքան ես պահանջեցի :

— Բայց ինչու, — հարցրի :

— Ո՛հ, դուք շատ բան էք ուզում իմանալ, — կեղծ բարկացաւ նա, — ես որպէս երկաթուղային ծառայող արտօնութիւն ունեմ իմ ընտանիքի անդամների համար դեղշուած գներով տոմս գնել : Ձեր տոմսը դրանից մէկն է : Այդ կապոյտ թղթում գրուած է ամէն ինչ : Մի կորցրէք այն :

Ներքին յախուսն զգալու մտքից ես քարացայ տեղումս եւ շփտէի, թէ ինչ անէի :

— Պարոն, դուք դրադեցնում էք ինձ : Վճարեցէք տասնինն դոլար եւ քսաներկու սէնթը, — նորից կեղծ բարկացաւ նա :

Ես նրան տուի քսան դոլար, նա յետ գնաց եւ ինձ բերեց եօթանասունութ սէնթ :

— Ենտրահալու թիւն, — ասացի վերցնելով տոմսը եւ կապոյտ թուղթը, — բայց կարո՞ղ եմ հարցնել, թէ ինչու այդ արտօնութիւնն ինձ համար...

Նա ձեռքը սեղմեց ձեռքիս վրայ եւ ասաց .

— Հենց այնպէս... Այսպէս պատահում է հրբեմն... Յաջողութիւն :

Ես մի քանի քայլ հեռացայ պատուհանից եւ շրջուեցի : Տոմսավաճառը կանգնել էր եւ ինձ էր դիտում մտածկուն :

Մենք միաժամանակ բարձրացրինք մեր ձեռքերը ու շարժեցինք հրամելտի ձեւով :

— Ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ, ո՛ւ... — մի քիչ անհամբեր, բայց շատ մեղամաղձոտ, կանչեց պատրաստի մի գնացք :

Ես շրջուեցի ու գնացի :

Ս. Ս.

(Շար. 5 եւ վերջ)

Ա Մ Լ Ա Յ Ա Ս Կ Ե Ր Ք

Միջօրէ :

Փողոցներու հրատուչոր կողերէն
Փրփրելով, խայտալով,
Տես կը յարդի հին ժպիտը տքելի :

Ու երակներ
Խենդ լոյսերով կ'ազդդին :

Ջերմ արիւնի
Ոտնահետքեր՝ գիրկընդխառն
Կը համբուրուին .
Կը լուծուին .
Կ'ըլլան օրհներգ անփշուր ,
Երկունքներու մարդկային :

Համրեզդին,
Մայքերու մխացող երգ .
Ու հարպ կապող
Մերկուքիւն՝
Ձանձրոյթի :

Արգանդներու ծարաւաշուրթն փողոցէն
Բանաստեղծ մը կը քալէ
Անշարժ արիւնով՝
Աչքերուն մէջ խաչասայտերն իր կրքի . . .

Կը յոգնի .
Ու մայքերքին՝
Լուռ , մութալու կը մտի :

Այնտեղ երկարած
Հագարամեայ ափ .
Ու ափի մը մէջ մտող
Անընկեր բառ ,
Որ տիեզերք պարուրող
Սպասումի հաշիշ է :
Բանաստեղծի որբացած բառ ,
Որ կը մտերայ
Արեւային երկիզում :

Մայքերուն վրայ
Տեսիլներու լայնարաց
Բայց ամուլ արգանդ ,
Ու վարաց լոյսի
Անպարփակ կարօտ :

Սրունքներու մէջ ցամաք
Երկունքի ջիզեր կ'արմատախլուին :

Բանաստեղծի մը
Բաց մնացած ափիմ մէջ ,
Կը մնայ բառ մը դեռ կոյս . . .

Մայքերուն վրայ ,
Իրենց արեւը քամած
Հաշիշամոլներ ,
Կը դռնան :

Այդ դողը ես ինքն եմ ,
Որ բանաստեղծի
Անեռն ափիմ մէջ
Խտացած՝
«Կեանք» եմ
Ամայի , անշոյս :

Միջօրէ :

Արեւը կը պարէ .
Փողոցներու երկայնքին :

Իսկ մայքերքին ,
Դեռ հարցական կը մնայ
Թէ ինչո՞ւ ,
Այգակու բարի կը ժպտի
Արեւը՝ կիրք ,
Նայնիսի ինծի :

ՆԱԶԱՐԷԹ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՅԱԿՈՒ ՓԱՓԱԶԵԱՆ

ԿԱՐՄԻՐ ԼՈՅՍԸ...

Պէլլուսի կեղրոնական նամակատան փողոցը:

Հաւասար բարձրութեամբ հսկայ շէնքեր:

Վաճառականական գրասենեակներու եւ գրամատուներու խոշոր յայտարարութիւնները շէնքերու երեսը կը լեցնեն, զարդարելով մասամբ լայն պողոտային շորուքիւնը: Ճամբուն սկիզբը ինքնաշարժներու երկար շարքը շորս ճամբաներու հանդիպած կէտին վրայ հերթով կանաչ լոյսին կը սպասեն: Կարմիրը կը մարի. կը սուրան:

Նամակատան դիմացը վեցերորդ յարկը:

Պատուհանէն կ'երեւայ մեքենային վրայ ծուռ գլուխ մը, գրամեքենային միօրինակ աքաղաղ մտիկ կ'ընէ, որ ախորժելի թուլութեան տրամադրութիւնը կու տայ իրեն: Աչքերը նամակատան աստիճաններէն բարձրացողները կը դիտէ... Կարմիր գլխարկաւոր զինուորը անտարբեր է մտնողներուն, հակառակ որ ցոյցերը եւ անհանդարտութիւնը շատ են քողաքին մէջ:

Ընդհանրապէս մարդիկը արագ կը բարձրանային աստիճաններէն, սւրախ կամ ախուր լուր մը հեռագրելու կամ ստանալու: Թերեւս ալ չէին դիտեր, թէ փոքրիկ տուփերուն մէջ ի՞նչ կը սպասէ

իրենց: Մուտքի դուռնէն անորոշ ձեւով կը մտնեն, ելքի դուռնէն յստակ զգացումով կը մեկնին... Այդ յաջողութեան սկիզբը կրնար բլաւ, ձախողութիւն մը, դոյժ մը կամ ոչինչ...:

Գրամեքենան զարեցաւ աղմկելէ: Թուղթ մը երկարեցաւ դէպի վաճանը: Գլուխը բարձրացուց, մտանքը արագ սահեցան մեքենային վրայէն, պահանջաւոր թիւը ընդօրինակեց եւ տուաւ ըստպատող տղուն: Պատրաստուեցաւ գլուխը ծուել, դիմացը նստող արար քարտուղարուհին, Ժորժէթը զինք կը դիտէր: Ժպտաց: Զուգարկութեամբ մը անոր դիմացը տեղաւորած էին իր սեղանը. չգանգատեցաւ, պատճառ ալ չունէր գանգատելու: Հիմա, ամէն օրուայ պէս, Ժորժէթը հայելին առաւ, մաշկըը շտկեց, աչքերուն սեւերը աւելի սեւացուց, ողորկ երեսը շտկեց, նայեցաւ վահանին, ելաւ ոտքի: Վահան զգաց դարձեալ ստիպողութիւն մը՝ ակնարկութիւն ընելու անոր նոր հագուստին: Համակրելի աղջիկ մ'ընէր ան, բայց իրենց խոշոր գրասենեակին պաշտօնեաներէն ոչ ոք կը հետաքրքրուէր իրժով: Վահան նոյն գրասենեակին մէջ անոր դիմաց նստած ըլլալով՝ պարտականութիւն թողացած էր բան մը ըսելու անոր, եւ ըսած էր այն գոհունակութեամբ, որ թե-

բեւս ուրախ ըլլաք: Ժորժէթ կը սպասէր, Վահան այդ օր կը դժուարանար բակու: «Մօ, գեղեցիկ է, վայելա՛ծ է»: Ատիկա ոչինչ պիտի արժէր իրեն, բայց յաճախ նոյն ձեռքնական կրկնութիւնը, պէտք էր ինք շնորհակցէր այդ: Յետոյ Ժորժէթը անասանելի յուզականութեամբ մը Վահանին ուղղելով խօսքերը՝ ակնարկութիւններ պիտի ընէր եւ Վահան չէր ուզեր լսել այդ: Նայեցաւ քարտուղարուէին այնպէս, ժպտեցաւ, հասկըցընելու, թէ տեսած էր իր գեղեցիկ հագուստը: Դուրսը դարձեալ ծոց, դրամեքննային տքտքոցը վերակաւ: Պէտք էր Ժորժէթը նոր ձեւեր գտնէր տղոց ուշադրութիւնը գրաւելու: «Բայց ինչո՞ւ ես կը մտածեմ այդ մասին. եթէ ինք չէր գիտեր, այդ իր աղջկայ տղիտութիւնն էր»: Դարձաւ աստիճաննեբուն: Պարտապ չէին: Յարանական լուրերու փոխադրութեան այս կեղծոնք միշտ լեցուն էր մարդոցմով: Ինքն ալ նամակ մը ստացած էր այդ օր, ոչ ուրախ, ոչ տխուր լուրեր կային, նմանութիւն մը կար...: Յրանսական հանրապետութեան քառակուսի դրոմաթուղթը իր ամբողջ տեսողութիւնը կը գրաւէր. անդամ մը կարգացած էր պարունակութիւնը, անդամ մըն ալ չէր ուզեր կարգաւ: Թէեւ հանդարտ էր, բայց այդ մասին մտածել չէր ուզեր:

Պուրճի հրապարակը, անցորդներու խճողումը, հրմշտուքը, անպարտանքը տրամադրութիւն ստեղծեցին: Հաճելի էր զգալ, թէ մարդոց մէջ էր, դորս չէր ճանչնար եւ ճանչնալու ալ տրամադիր չէր, այլ անոնցմէ մէկն էր, անոնց հետ կը հրէր, կը հրմշտուէր եւ կանաչ լոյսին հետ նոյն գամերուն մէջէն կ'անցնէր: Կարծիրը կ'երեւայ, ինքնաշարժները կը կենան, մարդիկ կ'անցնին, ինք կը մնայ՝ մայթին կարճ երկաթը քանած... Ստացած նամակին մէջ յիշուած նմանութիւնը զգացած էր ինք, տարտամ գիտէր այդ մասին, բայց վստահ չէր, որ ամէն բան կրնար բացատրել այդ եւ մոռցած էր:

Հիմա որ տարի մը անցած էր այդ օրերէն, յիշուած մանրամասնութիւննե-

րը արագ կը բացատրուէին մտքին մէջ, անսովոր հանդարտութիւն մը պատճառելով իրեն: Զգաց, որ պէտք էր գրէր Սիմոնին բոլոր մանրամասնութիւնները անցեալին, եւ փրկուէր դէմք կապկող նմանութենէն...

«Տասնընորս տարեկան պատանի մըն էի եւ նոր սկսած մարդոց դէմքերը յոտտակ տեսնել: Ընտանիքի մը անդամներուն յատուկ անտարբերութեամբ կը վարուէի մեծ քրոջս հետ: Պատանիի մը աշխուժութեամբ ծրարներն կը կազմէի, կու դար գործադրութեան օրը եւ անզգայաբար քոյրս կ'ընդմիջէր դիս, կ'ուղղէր, կը դատարէր ծրարներուն: Ուրեմն մինչ այդ քոյրս կառավարած էր դիս: Յանկարծ քրոջս վերապահ գէմքը կ'իմաստաւորուէր... Այսպիսի վերապահ գէմքին տակ կը տեսնայի արհամարհական հպարտութիւն մը, իր արժանիքներուն վստահ եղող անձ մը, որ իր դատողութեամբ կը կռնէ շուրջը պատահող դէպքերը, կը վերլուծէ, պատահելիքները կը տեսնէ: Թերեւս տկար անձ մըն էր, որ իր տկարութիւնը արտաքին ռոբութեամբ կը փոխարինէր: Կամ՝ պարզ աղջիկ մը, որուն արտայայտութիւնները վճռական անձի մը տպաւորութիւնը կը թողուն նայողին վրայ:

«Յաճախ պատահած էր, որ նոյն պառք բարձրանայինք գործի երթալու միջոցին, կը նստէի դիմացը: Հպարտ վերապահութիւնը հիմնական էր վարձուներուն մէջ: Հապճեպ եղրակացութիւններ կը հանէի, սխալ կը գտնէի, կ'որոշէի հանդարտ ըլլալ, կը ջղայնանայի, թէ շնչին հարց մը անհանդիստ կ'ընէր դիս, կ'որոշէի յմտածել, բայց կը մտածէի: Հպարտութիւն չէի ուզեր տեսնել այն ընթացքին մէջ, որ տունին մէջ անվերջ կ'երթեկէր դիմացս, ոչ ալ ինքնավստահ դատողութիւն: Քոյրս որեւէ հարցի մէջ կը տեսնէր բոլոր կարելիութիւնները, կը ստիպէր, որ իր ճամբով աշխատէի: Կ'ընէի զիտցածիս պէս, կը ձախողէի: Զախողելով հանդերձ, անհասկընալի պաշտամունք մը դիս կը տանէր իրեն՝ խոստովանելու, թէ ձախողած

եմ: անթէ յամբողջին զիս լսես, պիտի յա-
 ջողիս»: Կը ջղայնանայի, նստի իմ ինքնա-
 վաստակութենէն, յետոյ՝ այն հանդաման-
 քէն, որ կախում պիտի ունենայի իրմէ: Է-
 շիմ կը հասկնամ. մարդ մը իրեն են-
 թարկելու եւ զայն կտոնաւարելու ճրգ-
 տուժէն կու գար այդ: Քրոջն պատկերը
 մտքիս մէջ խտնուած՝ ես ալ աղջիկ մը
 ինծի պէտք է ենթարկէի, յաղթելու քը-
 ղոջս, որպէսզի իր ձախողութեան
 դժուարակութիւնը զգայի: Եւ որպէսզի
 ամէն զնով զինք սխալ գտնեմ, անհամ
 եւ յամառ միճարանութիւններով կը
 պաշտպանէի Փետրոս եւ ջոյրս, ու հեղ-
 նական Ժպտում կը վերջանային մեր վէ-
 ճերը: Նոյնիսկ ընկերութեան մէջ նոյն
 հեղինակաւոր աղջիկն էր. զլիսապտոյտ
 կ'ունենայի, որ քրոջն յաղթելու համար
 ամէն մարդ զէմս պիտի ունենայի: Կը
 նախանձէի, երբ ուրիշ մարդոց հետ ի-
 սէր, որովհետեւ իւրաքանչիւրին մէջ
 հաւանական մրցակից մը կը տեսնայի:
 «Պասին մէջ, մեր հանդիպումնե-
 րուն, անվերջ դիտեցի զայն: Անկախ
 նկարագրի նշաններ կային, պիտի յա-
 ջողէի՞ ինծի ենթարկել: Համակերպող
 կ'երեւայ, ենթադրեցի, բայց ենթադրու-
 թիւնս չսիրեցի: Անկախ անձ մը ենթար-
 կել աւելի ուժ կ'ենթադրէր, քան տկար
 մը: Այսուհանդերձ, եթէ իրապէս են-
 թարկուող էր, տարբեր կարելի չէր որ
 ըլլար... Քրոջն պատկերը մտքիս մէջ
 քանդուած տեսնելու հապճեպ ձգտումը
 դարձի մղեց զիս:

«Հինգշաբթի օր մը, կէսօրէ ետք
 միասին բարձրացանք պասը, նստայ մօ-
 տը, իջայ, մտքիս մէջ դրոշմուած խոհալ
 մը ինկաւ: Այդչտփ շուտ համաձայնի՞լ:
 Կիրակի, սինեմա: Եթէ աղջկայ նա-
 զանքներով մերժէր, պիտի վերաւոր-
 ւէի, յետոյ բան մը ըրած ըլլալու գո-
 հուանակութիւնն ալ պիտի շունչանայի:
 Սակայն Այտան պարզօրէն ընդունած էր
 հրաւերս, իմ ունեցած պատկերս էր,
 որ վերապահութիւն կ'ենթադրէր:

«Հաւաքոյթ, պտոյտ, սինեմա: Կ'ու-
 ղէի ընկերութիւնը աղջկայ մը, միաժա-
 մանակ կը ձանձրանայի անոր յաճախա-

կի ներկայութենէն, եւ ես կ'ապստրէի
 ինքզինքիս այդ ձանձրոյթը: Կը գուր-
 դուրար վրաս: Կ'անհանգստանայի:
 Նոյնիսկ մայրս, շատ յաճախ, երբ մօր
 մը սէրը կ'արտայայտէր զլուսն շոյե-
 լով, նոյնչափ անհանգիստ կը զգայի:
 Մինչ ջոյրս նոյն պատկանելիութիւնը
 կ'ենթադրէր... Սակայն երբ Այտան պահ
 մը դարձրէր իր գուրգուրանքը յայտնելէ,
 կ'ուզէի որ սեղմէր մատոս եւ ըսէր, թէ
 կը վախճար վրաս: Այսուհանդերձ, ան-
 միջապէս որ արտայայտուէր՝ կը հեռա-
 նայի իրմէ:

«Մշուշոտ պատտառի մը վրայ մարդ-
 կային երկու շուքեր կը շարժէին: Հաղիւ
 կը մօտենայի, կը միտնային: Այտան էր,
 գլուխը առի ձեռքերուս մէջ, շոյեցի
 դէմքը, նայեցայ հասակին, սարսափով
 քաշեցի ձեռքերս, մարմինը քրոջս մար-
 մինն էր: Վազեցի արագ՝ անվերջանայի
 փողոցէ մը, յոգնեցայ, կեցայ երկու
 շուքերուն մէջէն, ուզեցի աւանձին շա-
 րունակել, սնհարին եղաւ առանց ա-
 նոնց...»

«Հաւաքոյթի մը միջոցին, Այտային
 մասնակցը մագերուս մէջ՝ կը համարէի
 զինքը... քրոջն շրթները իմինիս մէջ...
 զողայու չափ կը վախնայի, որ արդէլէր
 ինծի, կեցնէր, սաստէր, պարտադրէր...
 Յիշած էի նախորդ օրուան երազս: Ինչմ-
 քին վրայ ծռած գլուխս բարձրացուցի,
 ներողութիւն խնդրելով՝ վազեցի աղմը-
 կոտ սրահէն»:

Ինքնաշարժներուն ճշակը եւ ոստի-
 կաններուն սուլոցը լեցուցին տկանջը:
 Պուրճի հրապարակի փողոցին ամբողջ
 երկայնքին ամէն ինչ անշարժ էր կար-
 ծես, մարդիկը միայն կը շարժէին, որ
 շուտով պիտի անշարժանային կանաչին
 երեւումով: Վահան անցաւ փողոցը: Ու-
 ընչ փողոցի մը մայթին կարմիր լոյս
 մը. պաղ երկաթը օփերուն մէջ՝ սպա-
 սեց:

«Նոյն օրերուն, առանց պատճառի,
 կը վերաւորէի քրոջս զգացումները: Կը
 տանէր ամէն վերաւորանք, չէր բարկա-
 նար, տոնուազն երեւութապէս. սակայն

ևս իր արտաքին ջղայնութիւնը, տակնուվրայութիւնը կ'ուզէի: Կ'արհամարհէի զինքը: Վերաւորանքներս զինքը շարժելու ուժը նոյնիսկ չունէին, այլ զիս աւելի սիրելի կը դարձնէին իրեն: Խուսափեցայ Այտային հանդիպելէ. սակայն ջրոջս անտարբեր կեցուածքէն՝ Այտային ներկայութիւնը անհրաժեշտ կը գտնար: Հեռաձայնեցի, ներողութիւն խնդրեցի պատահածին համար. ընդունեց: Ըսի. թէ ինչու կ'ընդունէր, երբ պէտք չէր ներքեր: Կատակելով ըսաւ, թէ «հետաքրքրական խենթի մը հետ գործ կ'ունենամ»: Ամէն օր իրար հանդիպիլը սովորութիւն դարձած էր, յետոյ ոչինչ կը խօսէի իմ մասին եւ Այտան անպայման պիտի ուզէր այն օրուան վարձուցիս պատճառը հասկնալ: Մինչ ես կը սպասէի ու կ'ուզէի որ մերժէր, որովհետեւ ջորս ընդունած էր զիս: Այն ատեն յիշեցի մանուկ մը՝ ընդունելի բուրբ քմայքներով, որ չմերժուեցաւ...

«Այդ պահէն մինչեւ մեր բաժանումը, Այտան քովս էր, միայն վերաւորանքներս ընդունելու: Կը զգայի, թէ ոչինչ ունիմ Այտային հետ բաժնելու, այլ Այտային գէմ: Իմաստը հոն էր, որ հակակրօնութիւնս կը զպնար անձի մը. այդ պատճառով կը սիրէի Այտան, սակայն փոխանակ մտնելու, խուսափելով: Պահանջներս կը գտնար. կ'ուզէր որ միշտ հետը, պաշտպանը ըլլայի: Հաճելի էր. բայց ինչպէ՞ս, երբ իր գոյութիւնն իսկ մարտահրաշխ էր ինձի...: Վերաւորանքներս յաճախակի դարձան, ներողութիւն կը խնդրէի եւ իր բարեհամբոյր ներողամտութեան առջեւ չէի կրնար ներել ինքզինքիս, չէի ուզեր պատճառն ալ բացատրել: Չկրցայ որոշել ընելիքս. բացարձակ անտարբերութեան մէջ ինկայ: Չէի մտածեր ո՛չ Այտային, ո՛չ ջրոջս մասին: Չեմ գիտեր, եթէ որեւէ բան կը հետաքրքրէր զիս այդ օրերուն:

«Պատահեցաւ, որ հանդիպիմ Այտային: Կը սպասէր, որ բացատրեմ, թէ ինչու՞ զինք չեմ տեսներ: Նայեցայ բարի, սպասողական աչքերուն. աղաչական բան

մը կար. կ'ընդունէր զիս ամէն պարտազայի, միայն թէ բացատրէի վարանումներս: Յիշեցի, թէ հեռաձայնած էր, չէի պատասխանած: Պատրաստակամութեանը առջեւ նուաստացած զգացի ինքզինքըս, պատրաստակամութիւն մը, որ չէի կրնար տալ ո՛չ ինքզինքիս, ոչ ուրիշին: Կը զգայի, թէ պէտք է ամէն գնով պատասխան մը տամ՝ սպասող ազնկան: Միշտ ուզածիս պէս եղած էր, ջորս չէր եղած, զինք ջորս կարծած էի: Եւ ինչու՞ չէի ինքզինքիս վճարէր Ֆիլիքսական նմանութիւն մը ունենալուն համար: Իսկ ես չէի կրնար մոռնալ այդ նմանութիւնը. ինչու՞ չէի յանցաւոր: Այտան կը կաշկանդէր մտածումներուս ազատութիւնը: Եզրակացուցի, թէ ամէն բան վերջացած էր մեր միջեւ: Մտտեցայ իրեն, ազատ մարդ մը ըլլալ կ'ուզեմ, ըսի եւ շարունակեցի քալել քովէն: Կը կարծէի ըսածս լրիկ ձեւական խօսք մըն էր, սակայն իրականութիւնը հոն էր, որ ջրոջմէս մինչեւ Այտան կարմիր լոյսերով լեցուն փողոց մըն էր: Ես կ'երթամ, քեզ պիտի չտեսնեմ այլեւս, ըսելէ առաջ, դարձայ իրեն եւ տխուր ժպտալով հարողեցի որոշումս՝ զետին նայելով: Լուռ էինք: «Վրէժ պիտի լուծեմ» խօսքերը հազիւ արտասանած՝ դուրս բարձրացուցի: Չգաստացայ անտարբերութենէս, խօսքերը որոշ ուժականութեամբ դուրս ելան, այդչափ վճռական խօսք չէի լսած Այտայէն: Եւարումս ծածկելու համար ժպտալով ըսի, թէ անօրուս էր: «Ապա՛հ կը տեսնաս», ըսաւ նոյն վճռականութեամբ:

«Չէի հետաքրքրուած իր վրէժով, որքան իր ուժականութեամբը: Չէի կըրցած բան մը որոշել եւ ստիպել ինքզինքըս, որ կատարէ: Եւ նոյն պահուն «ջորս» կը ցցուէր առջեւս, մաշելու աստիճան ջղայնացնելով զիս: Եթէ յաջողէր զործադրե՛լ որոշածը, երթա՛ր ուրիշ տղոց հետ: Ծաղրեցի դադափարս, ազնկայ խաղեր որակելով այդ: Յետոյ երկար ժամանակ Այտային վրայ ունեցած ազդեցութիւնս այնքան զորաւոր՝ եզած էր, որ խօսքերը վրաս ազդելու հա-

մար արտասանուած էին: Անհամբեր էի՝
 դիտնալու միջոցները, հեռաձայնեցի,
 շարտասխանեց: Գացի գործատեղին:
 Հազիւ ելած՝ մօտեցայ. չէի նկատած,
 որ երիտասարդ մը, զոր քիչ առաջ տե-
 սած էի, կը սպասէր: Այտան բարեւոց
 զիս ու միասին հետ միասին մեկնեցան:
 Ինծի ենթակայ անձի մը ազատութեան
 խլրտումները կը տեսնայի ու զգացած
 նուաստութիւնս կը բազմապատկուէր:
 Անձ մը ինծի ենթարկելու ձգտումը այդ
 պահուն շատ դժբաւոր էր մէջս. գացի
 սրճարան մը, սպասեակին սուրճ մը
 պատուիրեցի՝ ասիկա որոշ հաճոյք
 պատճառեց. չարհացայ սակայն, ժամա-
 նակաւոր էր: Յաջորդ օր, ժողովներ
 հետ սովորականէն աւելի մտերիմ վար-
 ւեցայ, իր հազուատին զովասանքներ
 շայտելով: Կը կարծէի, թէ թովի սե-
 եակէն թուղթերս պիտի բերէ, կամ ա-
 ոանց ինքզինու սուրճ պիտի հրամցնէ.
 միայն չարութեամբ խնդաց:

«Այտան տեսայ ուրիշ տղոց հետ ալ:
 Արտայայտութիւնները ինձմէ ձերբա-
 զատուած ըլլալու ուրախութիւն կ'ենթա-
 դրէին, այդ յաղթանակով կը նայէր ին-
 ծի: Ուրիշ տղոց հետ երթալով՝ կ'ուզէր
 վստահ ըլլալ իր աղջկայ հմայքներուն,
 վստահ ըլլալ, թէ ինք օրուելու արժա-
 նի աղջիկ մըն է, ոչ թէ արհամարհուե-
 լու: Թէ՛ իր աղջկայ անհատականու-
 թիւնը յարգանք կը պարտադրէ տղոց:
 Իմ պարագայիս, Այտան ուրիշի մը ցո-
 լացումն էր, եւ հիմա որ կ'որոշէր ինք-
 զինք փաստել, կը մնար նոյն ցոլացու-
 մը՝ աւելի՛ շեշտաւորուած: Կ'ուզէի ու-
 նենալ Այտան, փաստելու ինքզինքին,
 թէ կրնամ դորձադրել որոշածս այն պա-
 հուն, երբ ինք նոյնը կ'ընէր ինքն իր ան-
 ձին: Փորձեցի բացատրել ինքզինքս, յա-
 մառութեամբ լուեց: Աչի նկատած, թէ
 այդչափ լուսկեաց դէմքին տակ նոյնչափ
 լուելու ուժ էր կուտակուած, եւ այն ի-
 բողութիւնը, որ չէի նկատած, տկարու-
 թիւն կ'ենթադրէր ինձմէ, որովհետեւ
 երբեք նկատի չէի ունեցած իր կարե-
 լիութիւնները: Շատ քաղաքավարօրէն
 վռնտուեցայ. սիրեցի ժեսթերը. նա-

ղանքներ չկային, այլ վերապահութիւն:
 Այտային յամառութեամբ լռութիւնը իր
 անձին հաւատարակչութիւնը պահելու
 գլխաւոր միջոցն էր, որովհետեւ ինծի
 հետ չխօսելու յամառ որոշումին մէջն
 էր իմ վրայ տարած իր յաղթանակը: Եւ
 հոն վստահ կ'ըլլար, թէ կարող էր ինք-
 զինք փաստել ուրիշի մը վրայ:

«Կ'երթայի յաճախ Այտային, կը
 ինքզինի իրմէ որ խօսէր հետս, խնդրան-
 քս երբեմն կ'ըլլար աղաչական, կը շա-
 րունակէր լուել (շատ հաճելի էր դիտել
 զինք, յամառ որոշումին մէջ): Գիտէի,
 թէ ո՛րքան ազաշէի իրեն այնքան աւելի
 պիտի լուէր, որովհետեւ հաճելի էր ի-
 րեն տեսնել տղայ մը, որ այնքան ան-
 տուրբեր եղած էր եւ հիմա կ'աղաչէր,
 մանաւանդ ինք լուելու պարտադրած
 էր անոր այդ նուաստացումը: Կ'ուզէի
 կրել այդ նուաստացումը մինչեւ իր ա-
 մենացած աստիճանը: Յաճախակի հան-
 դիպումներովս կը փորձէի հասկնալ, թէ
 ո՛րչափով Այտան անփոփոխ կը մնար իր
 որոշումին մէջ: Հակադրուած կամքին
 նուաստութիւնս կը շեշտաւորուէր: Այ-
 տահանդերձ, Այտան այլ կերպ չէի ու-
 զեր տեսնել: Իր մերժումը կը մեռցնէր
 մտքիս մէջ պատկերացած քմայքոտ մա-
 նուկը: Միւս կողմէ, անկարողութիւնս
 զինքը ինծի վերադարձնելու, երիտա-
 սուրդը կը փոքրացնէր՝ ընելու տասնը-
 շորս տարեկան պատանի մը: Երկուքը
 կը բաշխէին իրար, երբ վերջնականա-
 պէս համոզուեցայ, թէ սխալ է աշխա-
 տիլ Այտան ետ ունենալ. նախ պատանին
 պէտք է մեծնար...»

«Գրասենեակ կ'երթայի այն տրա-
 մադութեամբ, ինչ որ դուն կը փոր-
 ձէիր ներմուծել ինծի: Հաստատութիւն
 մը կառավարելու, այսինքն՝ պաշտօն-
 եաներուն գործերը զասուարելու յատ-
 կութիւնները չէիր կրնար արժեւորել:
 Հաշիւներու ընդհանուր պատասխանա-
 տու ըլլալով հանդերձ, տնօրէն ըլլալ կը
 ձգտէիր, բայց կառավարելու ձգտումը
 այնքան զօրաւոր էր մէջդ: Երբ ամբողջ
 հաստատութիւն մը չէիր կրնար կառա-
 վարել, ձգտումդ կը փոքրացնէր զիս:

Անտարբեր վիճակին մէջ յաճախ անորոշ համաձայնութեամբ կը խուսափէի քեզմէ: Ու երբ տեսնէի, թէ ընկերդ նոյնիսկ շէս կրնար կառավարել, եւ քու կարողութիւններուդ ձախողութիւնը կը տեսնէի, ձախողութեանս մէջ, կ'աշխատէի կարծիքդ ինձի պարտադրել, կարծես քոյրս ըլլայի: Նոր պաշտօնս կը սիրեմ, անոր համար, որ կը սիրեմ հաշիւ մեքենան, հարցեր չի ստեղծեր, կը հնազանդի մասնէրուս, կը պատասխանէ անոնց հանումով, գումարումով, բազմապատկութեամբ, բաժանումով: Հրուհանգներուս անսխալ կը պատասխանէ, եւ եմ որոշող, ինքը դործադրողը:

Վահան դուրսը բարձրացուց, երկաթէ սիւնին վրայ կարմիր լոյսը չկար, ստիկանը նշան ըրաւ, Վահան խճողւած ինքնաշարժներու առջեւէն կտրեց փողոցը:

«Նմանութիւնը, որ յիշած էիք նամակիդ մէջ, թէ՛ կարմիր լոյս մըն էր, թէ՛ կանաչ: Կարմիր էր, երբ դիտցածս

անորոշ էր այդ մասին եւ դուն ցոյց տուիր ինձի, շեշտեցիր: Կանաչ եղաւ, երբ կ'անցնէի մայր փողոցէն միւս մայրը, նախկինէն չվերադառնալու...»

Վահան հասաւ տուն, մտաւ սենեակը, հանեց նամակի տետրակը, բացաւ. «Սիրելի Սիմոն»:

Կեցաւ, նայեցաւ, սենեակին մէջ անոնք չկային, թերեւս երբեք չգային: Ինք միայն կար, ա՛յդ էր իրականը: Նամակին էջը պատուից եւ ճմբկկելով նետեց պատուհանէն: Երկնցաւ, աչքերը կէտի մը յատեց: Ոչինչ կը մտածէր, Պուրնի հրապարակին վրայ միայն կանաչ լոյսերը կը վառէին եւ մարդիկ կը կտրէին փողոցը: Յանկարծ բոլոր հրապարակին վրայ միայն մէկ լոյս կարժրեցաւ: Վահան ցատկեց. մոռցած էր Սիմոնին ըսելու:

«Թերեւս հարցերը կը տրամաբանականացնեմ»:

Միայն մէկ լոյս կարմիր էր ամբողջ հրապարակին վրայ:

Յ. Փ.



Ս Խ Մ Յ Ա Ն Ծ Ա

ԻՆՔՈՒՆԻ ԺՆՆՂԻԱՆ ՊԹՊԱՆԵՆՈՒԿ

... Եւ նա էլ ծնուց, ինչպէս աշխարհի բոլոր ծնունդներն,
 Եւ գիտակցութեան սանդուխներն ահա հիմնուած էին նրա մտքի մէջ,
 Երբ միտքը նրա, նրան ուղեկցեց մի չքնաղ աշխարհ,
 Այնտեղ ուր նրա սիրտն ու միտքը իրարու ձուլուած եւ նոր շունչ առած
 Այնտեղ՝ ուր ահա ջանքի երգահանն իբր իսկ մտտների թրթիւնների տակ
 Բացուել էր ահա նրա դէմ չքնաղ, պայծառ մի եղբւմ...
 Լսում էր ձայնը իր սրտի, հոգու, մտքի աշխարհի:
 Մթնեց ու ծագեց արեւն երփնավառ,
 Փռելով շողերն գիւղին, փաղափն,
 Եւ այդ օրերը իրարու հիւսուած, վաստակը բերին մեծ երգահանի
 արտ-աշխարհին:

Թճճաց երգն նրա ամէն-ամէն տուն,
 Շքեղ դանդիկուած կանգիստեսներն իրենց ծափերով
 Դէպի երկինքներ հասցըրին նրա վայելքը հոգու...

* *

Եւ փակուած միայն մի սենեակի մէջ,
 Դրոշմում էր նա թղթերին ահա երգի հնչիւններն,
 Եւ թուղթը իբր դէմ ուզում էր իննել, յարտներ անել,
 Նրան տանելով դէպի ճակատներ,
 Դէպի ճակատներ կեանքի պայքարի:
 Նրա հոգու մէջ թախիծ էր, յուզում,
 Սիրոյ բիւր վերքեր, անպատու երգեր,
 Նրա հոգու մէջ տարբերքն էր երկնի,
 Կայծակն ու ամպրոպն, անձրեւն ու փամփն,
 Նրան դէմ-դիմաց կանգնած էր ահա երկրի թշնամին,
 Եւ հնչեց մէկէն ռազմերգը նրա սրտից պայքարող
 Եւ հնչեց շեփուր, ծնծղայ ու թմրուկ թղթերի ներքոյ:
 Այս ի՞նչն էր արդեօք ողջ լսողների սիրտը հմայել.
 Կարեա՞յն առուակի, մելամաղձառ, հեղ,
 Փռթորիկները անբող, փանդիչ, արե՞ւը երկէզ,
 Արձագանգները ժայռերից ելնող,
 Ամոյերի՞ խումբը երկինք սաւառնող,
 Անդունդների մէջ սարսափն ահարկու,
 Թէ՛ նրա հոգուց բարձրացող բոցը, կրակը հուծկու...

* *

Եւ նա շքեղով երկըրից-երկիր,
 Քաղաքից-հաղախ եւ գիւղերից-գիւղ
 Լսում էր ահա բոլոր մարդկութեան
 հարուկ սրտի մէջ,
 Իր ճիգ ու ջանքով,
 Թափուած քրտինքով երգերն յօրինած...

Տարածուեց հռչակն նրա աշխարհում,
Մի Բեթհովէն էր, մի աշխարհի ամբողջ,
Նրա տաղերից հպարտ ու զինուած,
Նրա տաղերից աչքերը լցուած,
Նրա տաղերը սրտամաշ ու ջերմ
Ամէն-ամէն տեղ...

* *

Բայց բախտի անիւն սլտեց մէկէն,
Նա ամէն մի օր զգում էր թափուն,
Որ նուազում է ձայնը աշխարհի իր ականջներում,
Եւ մի օր Աստուած նրան դարձրեց խուլ...
Նրան դարձրեց խուլ, որ էլ չհնչի
Երկինքի դողացնող տաղերը նրա,
Սակայն նա անդուլ,
Տփնում էր անվերջ, նոր ծնունդ ստուլ
Աւելի յստակ, անլի մաքուր,
Աւելի հպարտ, խրոխտ, վսեմ, կուռ
Նրգերն իր սրտի...
Ու տաղը ծածկեց տաղերին ծնուած,
Իր դէմ բաց եղաւ մի նո՛ր-նո՛ր աշխարհ
Վշտամորմա՛ք, լուս։
Թնդում էր սրտնն նուագողներին
Նուրբ մասննրի տակ,
Եւ հնչիւններն այն իրար ձուլուելով
Ստեղծում էին մի նոր եզանակ,
Մի նոր եզանակ, որով հպարտ էր ամբողջ Գերմանիան,
Մի նոր եզանակ, որից լալիս էր նեեզ, դաժան իշխանն,
Մի նոր եզանակ, որի թրթիռներն
Դէպի վերելք էր տանում հագիներն ունկնդիրներին,
Մի նոր եզանակ, որ «Տէր իմ, խուլ եմ,
Բայց լսում եմ եւ դեռ ձայնը սրտիս,
Դու էլ ինձ ներիր»։

Եւ այսպէս վարպետն խուլ ու մթագնած,
Տեսնում էր ահա սրտից ելնող ամբոյթին
Երկրը՝ նրանց դէմքերին,
Նրանց յուզմութից թափած արտասու՛ւն իրենց աչքերին
Եւ ժողովրդի պարծանքը անծի՛ր,
Որը իր մրակ միտքարանձն էր...

* *

Նա մեռաւ մի օր, ինչպէս աշխարհի մարդիկն են մեռում,
Թողած իրենից մի հսկայ աշխարհի հոգու գանձերի,
Թողած իրենից մի կենսագրութիւն,
Եւ ողջ օրերի թափած յոյզերն իր
Ձաւերժ կենդանի երաժշտութիւն։

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ «ՓԱՐՈՍ» ԵՐԳԻԾԱԹԵՐԹԻ

(ՅԱՊԱՂԱԾ ԵՒ ՅԱՊԱՌՈՒԱԾ)

Նոր տուն փոխադրուելու համար գոյքերս հաւաքեցի, ինչ որ լաւ էր՝ մաքրեցի ու փաթթեցի, ինչ որ անպէտ էր՝ մէկդէ շարեցի: Տժգոյն ու հին թուղթերուն մէջէն, աչքիս դարկաւ մըրոտած ու կնիքներով ծածկուած թերթիկ մը: Վերցուցի: «Փարոս» երգիծաթերթի արտոնագիրն էր, որ յիսուն իրանանեան ոսկիի փոխարէն՝ պատանդ մտայած էր քովս: Ափսո՛ս, այդ թուղթի կտորը այնեւ բոլորովին անպէտ դարձած էր, քանի որ արտոնատէրը շատոնց բաժնուած էր այս աշխարհէն, դադուր մզելով առանց երգիծաթերթի:

Այս մրտած թղթիկը ի՞նչ հաճելի յիշատակներ արթնցուց մտքիս մէջ: Պահ մը կանգ առի, արտոնագիրը զննեցի, կնիքները փորձեցի կարդալ... ամէն ինչ սրբուած էր, մաշած: Ով դիտէ քանի՞ անգամ արտոնատէրը զրպանէն հանած էր այդ թուղթի կտորը, ցոյց տալու համար կօշկակարի մը, սափրիչի մը կամ թազականի մը... Երազ մը, որ դարձած էր իրականութիւն, հուսկ ուրեմն զառնալու համար երազ...: Այս խեղճ

արտոնագիրը՝ քանի՞ անգամ պատանդ մնացած էր ճաշարանը՝ սանտուիչի մը փոխարէն, ատամնաբոյժին մօտ՝ փտած ակուսէ մը ազատուելու համար, սինեմայի կիւէն՝ ներս մտնելու համար, հրահարկատին մօտ՝ սանտալին մէկ մատը կարկտելու համար: Այս խեղճ արտոնագիրը պերճազիճէ մը աւելի պղծուած էր, փողոցային շունէ մը աւելի հասարակ դարձած էր եւ սակայն որքա՛ն պերճախօս էին իր մաշած զիւրերը, սըրբըւած վկաները ողբերգութեան մը, որ իր վերջին հանգրուանը դտած էր թըղթածրարիս մէջ: Զկրցայ պատուել, ծայրիցի եւ զրքի մը մէջ պահեցի... Սակայն յիշատակները սկսան խռնուիլ մըտքիս մէջ...

«Փարոս»ը շատոնց լոյս տեսած էր ու ժամանակ մը զադրած, երբ իր պատասխանատու արտոնատէրը՝ Գէորգ քովըս եկաւ եւ ուղեց համաձայնիլ հետս՝ վերսկսելու համար երգիծաթերթի հրատարակութեան: Իր ետին կանգնած էր ճակնդեղի պէս կարմիր դէմքով ու բամպակի պէս սպիտակ մտղերով մարդ մը,

որ պիտի ստանձնէր երգիծաթերթին խմբագրութիւնը: Արտօնատիրոջ ընկերացող մարդուն բերնէն՝ օղիի, գինիի եւ ալքոլի խառն ու խոնաւ հոտը առնելով՝ ապագայ խմբագրիին նկարագրին ու ստալանդը որոշ շափով գնահատեցի: Իմ մոլութիւններս եւ անտառակութիւններս ալ անտիջապէս կ'իտօքի մէջ դնելով՝ եղբակացուցի, որ շատ համերաշխ ու համակրելի երբորդութիւն մը պիտի կազմէինք: Անվարան ընդունեցի Գէորգին առաջարկը՝ նիւթական որոշ վարձատրութեան մը փոխարէն ու քառորդ ժամէն երեքով սկսանք գործի:

Սակայն մանրամասնութիւններու մէջ մտնելէ առաջ, հարկ կը զգամ ներկայացրելէ ձեռքի մեր կռիւիսն, որպէսզի ստեղծուի այն հարազատ միջնորդը, որուն մէջ ապրեցաւ ու շիջեցաւ «Փարոս»ը, որ ամէն ինչ արտադրեց, բացի լոյսէ ու լուսաւորութենէ:

ԳԵՂՈՒԳԸ (արտօնատէրը)

Մանօթ էր բոլորին: Գէր ու ճաղատ, մաղոտ ու ճարպոտ, յաւիտենական երջանիկ արարածն էր ան: Ուղեղը չէր անձած: Մեծ մանուկ մըն էր, որ իր տափակ «արամտութիւններով» ուրախ տըրամադրութիւն կը բաշխէր բոլորին: Համակրելի ու անվստ կենդանի մըն էր: Իր վճարումները կը կատարէր «Փարոս»ներով, ու երգիծաթերթին զագրելէն տարիներ ետք, դեռ իր «Փարոս»ները մեծ վարկ կը վայելէին Հրապարակին վրայ, իբրև դրամ: Նախկին վարչապետին «թիկնապահ»ն էր ու ազատօրէն մուտք կը գործէր ամէն տեղ, խորհրդարանէն մինչեւ սինեմաները, Փութալուի դաշտերն ու թատերասրահները: «Ամէն ինչ կը հասկնամ, սակայն երբեմն ինքզինքս խենթ կը ձեւացնեմ», կը բացատրէր:

Թիր-օ-րիժովի մօլի մըն էր եւ ամէն անգամ որ աւելորդ դրամ ունենար գրպանը, հոն կ'երթար պարպելու:

Ճիպէլլի որբերէն էր այս մեծ երե-

խան, ուրկէ ելլելէ ետք, ողբացեալ վարչապետին բնակարանը դարձաւ իր երկրորդ ու վերջին որբանոցը:

«Փարոս»ը իրեն համար կեանքի չափ արժէքաւոր էր, սակայն ձրի կը արուէր իզական սեռին:

Գէորդ Հեղինակն է «Կիւսկէր» օրթանցներու մէջ» գրքին, որ իր ջետայրին ուղղուած մարտահրաւէր մըն է, եւ շարք մը քերթուածներու, որոնք «Փարոս»ի մէջ տպուելու չափ լուսաւոր չէին:

Սկիզբները ապրեցաւ դրաշարութեամբ, Հոլանտա զաղթեց գորգի նորոգութեամբ դրաղելու համար, սակայն դաւադիր մարդոց ցուցմունքներով հառաւ մինչեւ յիմարանոց, ուրկէ ելլելէ ետք՝ շունչ առաւ Պէյրութ, աւելի մանկացած եւ շատ աւելի յիմարացած:

Կը պատրաստուէր Ամերիկա մեկնելու, երբ ցաւալի արկածի մը հետեւանքով, անդիի աշխարհ մեկնեցաւ:

ԼԵՒՈՆ (խմբագիր)

Սկիզբը, բարձրու ոստիկան էր Լեւանանի ապահովութեան ուժերու շարքերուն մէջ: Այսպէս է, որ վարակուեցաւ իր հսկողութեան յանձնուած բարձրէն ու դարձաւ ալքոլամու: Ազգազաղտնի-ոստիկան դառնալով՝ սկսաւ յանախել ամէն տեղ, ուր կարելի կ'ըլլար ճնկել գաւաթ մը օղի, գինի կամ ուիսքի:

Իրեն յանձնուած պարտականութիւններուն մէջ, կատարելապէս ու անգերազանցելիօրէն կը թերանար, եւ դիշերը երբ չէր վերադառնար կեդրոն, երկու զաղտնի ոստիկաններ, ի պաշտօնէ փնտառուքի կ'ելլէին քաղաքի սրճարաններն ու այն բոլոր հաւանական վայրերը, ուր կարելի պիտի ըլլար դտնել զինք: Երբեմն, անհաւասար կռիւներու մէջ, կորսնցուցած կ'ըլլար իր ատրճուհակը: Ոստիկանապետը, վստահ դիտնալով հանդերձ խմիչքի համար զէնքին ծախուած ըլլալը, կ'անձրկէր վհատեցուցիչ փաստերուն դիմաց ու կը... կըլ-

լէր: Գաղտնի ոստիկան չէր, այլ փախըստական ոստիկան:

Այս պատճառաւ վերջ տուին իր պաշտօնին:

Ամբողջ քաղաքը կը ճանչնար զինք, սիրուած էր բոլորէն, յարգուած ու փընտրուած:

Մայրը սկիզբը սեւ եղած բլլալու էին, սակայն ոստիկանութեան անքուն հսկումներուն պատճառաւ, վաղաժամ ձերմկած էին: Ամէն երեք-չորս ամիսը անդամ մը, հինալով կը ներկէր մազերը, որոնց արմատները քանի մը շարաթէն փարզէն կը ճերմկէին, ու այսպէս, դիտուն վրայ կը կրէր գոյներու ծիածան մը:

Ջարդացած էր, լաւ հայերէն գիտէր ու Ֆրանսերէն, սակայն ինքզինքը բնաւ պատասխանատու չէր նկատեր ուղղադրական վրէպակներուն համար: «Մեր հայերէնը լաւ գրելու համար, — կ'ըսէր, — անուտալիս պէտք չէ ալքոլ գործածել»:

ԵՍ (տպագրիչը)

Իմ մասին ի՞նչ կրնամ ըսել, ամէն ինչ եմ եւ ոչինչ, խենթ եմ ու խելացի, տաք-գլուխ եմ, հին-գլուխ եմ եւ նոր-գլուխ, ու երբեմն անպուխ: Մկսայ գըրնել, երբ հաստատեցի, որ աշխատակիցներու շքոյութեան պատճառով, խմբագիրը առանձինն պիտի չկարենար լեցնել երկչարթաթերթը, որ հետագային վերածուեցաւ շարթաթերթի: Սկիզբը միայն գրաշար ու տպագրիչ էի, սակայն ժամանակի ընթացքին դարձայ նաեւ սրբագրիչ, թարգմանիչ, զրոզ եւ հուսկ սուրմէն խմբագիր, որովհետեւ «Փարսասի մզիչ օւժը օղին էր եւ որքան օղին պակնեցաւ, լեւոն առտիճանաբար լքեց իր պարտաւորութիւնները ու ես ահամայ դարձայ «Փարսասի պաճապան»:

Մեր առաջին գործը եղաւ գրատեղանը պարպել:

Դրացի նպարավաճառէն շիջ մը օղի եւ քիչ մը ազանդեր բերինք, զրիչ մը եւ

կտոր մը թուղթ... Խմբագիրը գործի լծուեցաւ:

Ուժոյ մը կ'առնէր օղին ու շիջ նայուածքը սեւեռած առաստաղին, փամերով կը նստէր անշարժ, զրիչը ձեռքին: Շիջը (մէկ լիթրոնոց) քիչ-քիչ կը պարպուէր, սակայն թուղթը կը մնար կոյս:

Երկրորդ շիջի ժամանումին, քանի մը տողեր կ'երեւնային թուղթին վրայ ու երրորդ շիջին հետ՝ արդէն գրուած կ'ըլլար խմբագրականը:

Օղիով թրջուած այս տողերը, սակայն, չափէն աւելի զուսպ էին ու հասարակչութեան, սրամիտ ու խայթող, այժմէական ու հաճելի: Լեւոն, բառին իսկական առումով երգիծարան էր, սակայն բարեբու ոստիկանութիւնը խաթարած էր զինք: Պարպուած ամէն տեսակ առաքինութեան, դարձած էր սարուկը օղիին, եւ սակայն, այդ նոյն օղին, յաճախ կը դառնար գիւթական բանալի մը անոր ձեռքին մէջ:

Շարթի մը՝ արդէն տպարանը դիտեսան մը երեւոյթը ստացած էր: Ներս մտնողը առաջին անգամ օղիին բոյրը կ'առնէր: Շիջի, պնակի եւ դռալի ձայները տիրապետող էին եւ, յաճախ, մտերիմ յաճախորդներն իսկ կը հիւրասիրուէին օղիով: Արդարօրէն, թերթը պէտք է «Բաղնա» կոչուէր, փոխանակ «Փարսասի», այնքան խայթող էր ներկայութիւնը ալքոլին, որ հակամէտ էր խաւարեցընելու ամենաշէնչող փարոսներն անգամ:

Ամէն ինչ լաւ ընթացաւ մինչեւ այն ատեն, երբ յօգուածներու սակաւութեան եւ ուշացումին պատճառաւ, ես ալ որոշեցի գրել, երբեմն յօգուածներ, երբեմն շարթուայ կարճ լուրեր: Մատիտը առնելով թուղթի վրայ գրելու տաղտուկէն խուսափելու համար, գրելիքներս ուղղակի կը շարէի ու ապա կը տպէի, առանց ոեւէ մէկուն հակակշիռն ենթարկուելու:

Ամէն Ուրբաթ առաւօտ, թերթի լոյս ահսնելէն օր մը ետք, տեղի կ'ունենար հաշուեյարգարս Մինչ այդ, մեր վէճերն

ու անհամաձայնութիւնները ընդհանրապէս նիւթական էին: Կամ Գէորգ վճարած չէր ըլլար տպագրութեան փոխարժէքը, կամ Լեւոն պատրաստած չէր ըլլար խմբադրականը եւ կամ ալ Մեթն օգին ուշացուցած կ'ըլլար իր մատակարարումը, իբրև վճարում իր գովքը Հիւսոյ Լեւոնի ալքոլաթոիչ քերթուածներուն:

Մեքն օգին, Մեքն օգին
Կը խղճամ ես շխմոյին:

Երեքս իբրք կ'ամբողջացնէինք: Գէորգ թերթին թուղթը բերելու կ'երթար ու մոլորելով, շունչը կ'անէր Թիր-օ-քիմնի մէջ: Լեւոն, իր առաւօտեան սովորական ճամբէն շեղելով՝ վազաժամ կոչունքի մը կը մասնակցէր, բոլորովին զէն շարտելով իր խմբադրական պարտաւորութիւնները: Ես առիթը յարմար սեպելով, սիրային կամ մարդական արկածահարութիւններու մէջ կը նետուէի, «Փարոս»-ի Հրատարակութիւնը մէկ-երկու օր ուշացնելով:

Սակայն նիւթական դժուարութիւններուն յաջորդեցին որոշ բարդութիւններ, որոնք հետեւանքն էին մոլորութիւններն ու ծուռերը ձաղկելու փոթորկաշունչ ունակութեանս:

Առաջին ընդվզողները եղան լուսաւորչական թաղականները:

Յօդուածի մը մէջ, շարք մը գիտողութիւններու կարգին՝ գրած էի նաեւ, թէ՛ չլուսաւորչական աղջիկները ամուսին գտնելու համար եկեղեցի կ'երթան, ոչ թէ՛ աղօթելու, թէ՛ չլուսաւորչական եկեղեցիները նորաձեւութեան տուններու կը նմանէին եւ ուրիշ անելի խայթող ճշմարտութիւններ:

Ուրբաթ առաւօտ Լեւոն ապարան մը տաւ շիւ աչքը գետին սեւեռած: Ասիկա գէշ նշան էր, որովհետեւ երբ շիւ աչքը գետին սեւեռած ըլլար, կը նշանակէր թէ սաստիկ ջղայնացած էր:

Իրեն կը հետեւէր արտօնատէրը, լուս ու մտահոգ:

— Եղբայր, — խօսք առաւ Լեւոն

առանց բարեւելու, — ինչե՛ր գրեր ես թերթին մէջ, ամօթ բաներ գրեր ես, չըսուելիք բաներ գրեր ես...

— Ամօթ բաներ գրեր ես, չըսուելիք բաներ գրեր ես, — արձագանգեց Գէորգ: Ես թոյլ տուի, որ Լեւոն լաւ մը պարպուի:

— Այսօր թաղականները բռնեցին զիս, — շարունակեց, — երկար-բարակ գլուխ արդուկեցին, սպառնացին, թերթը փակել կու տանք ըսին:

— Թերթը փակել կու տանք ըսին, — Հաստատեց Գէորգ:

Երկուքը աչքերուս նայեցան Հարցական:

— Լա՛ւ, լա՛ւ, — պատասխանեցի գիրենք հանդարտեցնելով, — քանի որ այդպէս է, այլեւ չեմ գրեր:

— Քեզի մի՛ գրեր ըսող չկայ, — ճշդեց Լեւոն, — սակայն Աստուծոյ սիրոյն, սա լուսաւորչականներէն վազանցիր:

Յաջորդ շաբաթ, միշտ շարունակելով «Եկեղեցական կատակերգութիւն» յօդուածաշարքս, ի միջի այլոց գրած էի, թէ՛ «կաթոլիկները ամէն օր Հաղորդութիւն կ'անեն, այսպէսով իրաւունք կ'ունենան ամէն օր մեղք գործելու»:

Առաւօտան, Լեւոն, շիւ աչքը դարձեալ գետին յառած էր, ու նորէն սկսաւ դատաւարութիւնը:

— Քեզի մի՛ գրեր ըսող չկայ, սակայն Աստուծոյ սիրոյն, սա կաթոլիկները հանգիստ թո՛ղ:

Քանի մը շաբաթ հանգիստ ձգեցինք լուսաւորչականներն ու կաթոլիկները, քանի որ յաճախորդներս շատ էին: Վերահազիրները զիրար կը հրժուկէին մտքիս մէջ: Մտղկազարդի տօնին առթիւ, շաբթեայ լուրերուն մէջ, տուի հետեւեալ զգայացուց լուրը:

«Կիրակի օր, Մաղկազարդի տօնին, Նոր Մարաշի եկեղեցիներուն բարձրաթումերը իրարու ինկած էին: Ես կը կարծէի, թէ լուսաւորչականներուն բարձրաթումը ամէնէն բարձր պոռագոյն էր, սակայն կաթոլիկ մը հաւատարմացուց, թէ իրենց անելի բարձր կը պոռար: Ի՞նչ

պիտի պատահեր, եթէ Յիսուս իշու վրայ
հեծած անցնէր Նոր Մարտիկն: Ըսեմ:
էշը, վախճմ, վրայէն պիտի ցետեր խեղճ
Յիսուսը, ու բնականաբար պիտի ապաս-
տանէր այն ժողովարանը, ուր բարձրա-
թու չկար...»

Բաժակը յորդած էր: Ուրբաթ օր
Հիւանդ ձեւացայ ու բացակայեցայ տը-
պարանէն: Չարաթ օր եկեղեցի դացի,
կիրակի՝ Չատիկ էր, Երկուշաբթի՝ Մե-
ռեխոց: Երեքշաբթի առաւօտ քիչ մը ու-
շացայ, Լեւոն եւ Գէորգ արդէն ինծի կը
սպասէին:

— Մէկ բան կ'ուզեմ ճշդել, — պո-
ռացի, — որո՞նց մասին պէտք է գրեմ
եւ որո՞նց մասին չգրեմ:

— Որո՞ւ մասին ուզես՝ գրէ, միայն
սա եկեղեցիներէն վազ անցիր, — յոր-
դորից Լեւոն խոհեմութեամբ, — ամ-
բողջ ազգը մեր դէմ լարեցիր: Եթէ ա-
սանկ շարունակուի, մէկ ընթերցող իսկ
պիտի չմնայ:

— Ես ձեռքերս կը լուամ, — ըսի
Չղանցած, — ես առանկ չափուած-
ձեւուած երգիծանք չեմ կրնար ընել:

— Երգիծա՞նք, — ծիծաղեցաւ խրմ-
բազիբը, — կը կարծես թէ ըրածդ եր-
դիծա՞նք է, խղճալի՛: Կրօնականներն ու
հաւատացեալները մեզի դէմ զբոսելէ
զատ, ուրիշ բան չըբիր մինչեւ հիմա:

— Բայց ինչո՞րե՛մ, — հարց տուի
չուարած, — դոնէ ըսէք, թէ ի՞նչ բանի
մասին գրեմ:

Լեւոն պահ մը ինքնամփոփուեցաւ:

— Խարուած ամուսիններու մասին
գրէ, — բղաւեց, — ա՛ն զեղի առատ
ու հում նիւթ, գրէ՛, գրէ՛, չի վերջա-
նար:

— Ո՛հ, — ընդվզեցայ, — իսկա-
պէս կ'ուզես ամբողջ ազգը դէմս լարել,
բայց ո՛չ, ո՛չ, այնքան անխոհեմ չեմ,
որ ծուղակը ինձմ:

— Լա՛ւ, — թելադրեց Լեւոն, —
եղբայր, նի՛ւթ կը պակսի, հնչակեան-
ները կան, դաշնակցականներն ու հա-
մայնավարները կան, «Ձարքօնֆ»ն ու
ռամկավարները կան, գրէ՛ ու գրէ՛, ու-
զածդ ալ ըսէ՛, որո՞ւ հոգը:

Հնչակեաններն ու դաշնակցականնե-
րը Լեւոնին կարծածին չափ ալ անտար-
բեր չգտնուեցան ու հակադրեցութիւնը
եղաւ արագ ու կտրուկ:

Լեւոն Ուրբաթ առաւօտ տակնույժը-
րայ եղած էր:

— Եղբայր, — ըսաւ, — կ'երեւի
դուն ռամկավար ես:

— Գաւ լիցի, — առարկեցի, — ար-
դեօք ռամկավարի կը նմանի՞մ, չե՞ս
տեսներ, ամէն օր ու ամէն վայրկեան
մէկը կը խայթեմ, իսկ ռամկավարները
խայթելու անատակ են:

— Խայթելու անատակ, սակայն
խայթուելու համար աննման են, — ըս-
քանչացաւ Լեւոն, — կը դարձանամ, թէ
ինչո՞ւ ռամկավարներու մասին չես զը-
րեր: Ա՛ն զեղի նիւթ, ուզածիդ չափ
գրէ՛, ուզածիդ պէս գրէ՛, «Ձարքօնֆ»ն
ու ռամկավարը ներկէ՛, մրտաէ՛, թրջէ՛,
քեզի բան ըսողին բերա՛նը ծոխ:

Վայրկեան մը երեւակայեցի Լեւոնին
բերանը ծուռ, աչքը չիւլ, ու ակամայ
ժպտեցայ:

— Ուրեմն համաձայն ես, — հան-
դարտեցաւ, — ալ այս մասին չխօսինք:

Ռամկավարները կարծես մազախառ
էին, որքան խայթուէին՝ այնքան կ'ա-
խորժէին, մեր քննադատութիւններն ու
մարտահրաւէրները կը մնային ձայն
բարբառոյ յանապատի, հակազդող չը-
կար, շղայնացող չկար, պատասխանող
չկար, այնպէս որ, «Փարսու»ն ալ ռամ-
կավարներուն պէս կորսնցուց իր դոյնը
ու դարձաւ տժգոյն, ապա անգոյն: Իր
հիմալը չբացաւ, նմանեցաւ ակունքը
քաշուած ծնօտի մը: Հիւանդ մըն էր, որ
կամաց-կամաց դերեղման կ'իջնէր: Վախ-
ճանը հասաւ գիպուածով մը, որ ճակա-
տագրական եղաւ:

Ամառնային գիշեր մը, Լեւոն Հի-
ւանդանոց փոխադրուեցաւ: Ոտքը կոտ-
րած էր: Իր բնակարանին տանիքէն
ինկած էր դրացիին պատշգամբը: Բարե-
կամի մը Հիւրամեծարութիւնը շարաշար
գործածելով՝ խմած էր եօթը շիշ դարե-
ջուր, Տօրայի սրճարաններէն մէկուն
մէջ: Տաքին պատճառաւ գիշերը կ'անցը-

նէին տանիքին վրայ: Եօթը շիշ գարեջուրը միայն քրտինքով չէ որ դուրս կու գայ: Տանիքին եզերքը տատանելով, Լեւոն հաւասարակչութիւնը կորսընցուցած էր ու ինկած:

Երեք օր անցած էր արկածէն, երբ իմացայ:

Շիշ մը գինի փաթթեցի թուղթի մը մէջ եւ Օթէլ Տիէօ գացի հիւանդատեւի:

Ինկոնացած էր ժպտեցաւ: Երբ ձեռքիս ծրարը բացի, ուրախութիւնը փայլատակեց գէմքին վրայ ու բացազանչեց.

— Հասկցողին աչքը սիրեմ:

Խօսեցանք խմիչքի վնասներուն եւ մանուանդ օգուտներուն մասին: Ձըսինք, թէ խմիչքն էր պատճառը իր անկումին: Մակայն ինք հպարտօրէն հաստատեց, թէ վէրքը, առանց թարախտելու, շատ արագ կերպով սպիացած էր, մարմնին մէջ պտնուող մեծաքանակ ալքոլին պատճառաւ:

Մակայն կոտորուած սկոբը չէր փակեր: Ինը սմիս անցած էր, բայց ան դեռ դամուած կը մնար անկողին: Մարմնին մէջ պտնուող մեծաքանակ ալքոլը թոյլ չէր տար, որ սկոբը փակէր:

Շարաթը անզամ մը, կանոնաւոր կ'այցելէի իրեն: Անհամբեր կը ոպատէր ինծի, անշուշտ ձեռքիս թուղթէ ծրարին համար: «Փարոս»-ի խօսքը բնաւ չէինք

ըններ: Ան արդէն դիտէր, լռելեայն հասկըցուցած էի, թէ խաւարած էր «Փարոս»-ը:

Երբ հիւանդանոցէն տուն փոխադրուեցաւ, տակաւին սկոբը փակած չէր, սակայն այլեւս շտեայ զինք:

Ամիսներ յետոյ լսեցի, թէ մեռեր է: Շշմեցայ: Այդ ճակնդեղի պէս կարծիք երեսներով մարդը, կարելի չէր որ մեռնէր: Չկրցայ նոյնիսկ հասկնալ, թէ ինչէն մեռած էր, ե՞րբ մեռած էր, ե՞րբ թաղած էին... մէկը լուր չունեցաւ:

Յաճախ խօսած էինք ալքոլի օգուտներուն մասին: Վնասները այնքան չնչին էին, որ չէր արժեք խօսակցութեան նիւթ դարձնել: Այդ չնչին վնասներէն մէկն ալ՝ իր մահը եղաւ:


Ափսո՛ս, Օտեաններու պատուանդանին արժանի իր երգիծանքն ու հիւժուրը խեղդուեցան ալքոլի յորձանքին մէջ ու իր տաղանդը խամբեցաւ, վայրի ու անբոյր ծաղիկի մը նման:

Երբքն ալ մեռան, Լեւոն, Գէորգն ու «Փարոս»-ը: Ես տակաւին ողջ եմ եւ յաճախ կը յիշեմ Լեւոնին սահմանուժը իր իսկ անձին. «Եւ լեռը ծնաւ մուկն չընչիւն»:

Վերջացնելու համար, նոյնը կարելի է ըսել նաեւ «Փարոս»ին համար, Գէորգին համար եւ ինչո՞ւ չէ, նաեւ ինծի համար:

Ս. Ս.





ՇԱՀՆՈՒՐ-ԴԱԽԹԵԱՆ ՎԵՃԻՆ ՎԵՐՋԻՆ ՓՈՒԼԸ

Շահան Շահնուրի «Ազատն Կամիրաս» յօդուածին վերհրատարակութեան առիթով գրուած Վահագն Դաւթեանի «Բաց նամակ՝ Շահան Շահնուրին» անուն գրութեան եւ այլ երկուքին կայուած թոհուրոհին մասումը ծանօթ է «Բագին»ի ընթերցողը: Երբ մենք խօսեցանք այդ մասին վէճը դեռ կը շարունակուէր, շարունակուեցաւ երկար ատեն ու փակուեցաւ Շահնուրի անունը կրող փոքրածառով տետրակի մը հրատարակումով եւ Վահագն Դաւթեանի կողմէ գրուած նոր նամակով մը, ուր կ'ըլլար ա՛յն հաստատումը, թէ «Շահնուրը վերափոխել ու վերախմբագրել է իր յօդուածի յատկապէս այն մասերը, որոնց եւ վերաբերում էին իմ հիմնական աւարկութիւնները»:

Տանք այս ինչորին ամփոփ պատկերը.
 «Ամփիւռէ» շարաթաթերթը, իր 23 նոյմբեր 1969 թուակիր թիւով, Շահնուրին իսկ վկայութեամբ «Հրատարակ կը հանէր «Ազատն Կամիրաս»-ը, նարիտարանակին նուիրուած իր քաղաքական մէջ, անշուշտ առանց իմ գիտութեան, յօդուածին տալով պատուոյ տեղը: Չէր յիշեր ո՛չ իր աղբիւրը եւ ոչ ալ բնականը: Երբ թերթը ձեռքս հասաւ կողմնակի մամբով, հաստատեցի, որ գրութիւնս պատուական էջ մըն էր, թէեւ կարօտ վերանայումի ինչոյեւ իր նախորդները»:

«Վերանայումի կարօտ» նոյն մասերը նկատի առնելով էր, որ, Վահագն Դաւթեան, անծանօթ գրութեան առաջին աղբիւրին ու ծննդեան թուականին, «Հայրենիքի» ձայնը շարաթաթերթի Յունուար 21ի թիւին մէջ գրեց իր առաջին նամակը: Ճիշդ նոյն օրերուն, «Վերանայումի» շահնուրեան կարօտ մը զգացած էր նոյնպէս Փարիզի «Յառաջ» օրաթերթը, որ 25 Յունուարին կը հրատարակէր «Ազատն Կամիրաս»-ը, գրելով՝

«Վերհրատարակելու առաջ նախապատրաստման այս գրութիւնը, գայն մերկայացուցինք Շահան Շահնուրին, որ պարտք տեսաւ հոն կատարել լեզուական որոշ բարեփոխութիւն եւ ընդլայնում»:

Կը նշանակէ, թէ Շահան Շահնուր, «Յառաջ» եւ Վահագն Դաւթեան նոյն գրութեան մասին համարեա՛ նոյն բանը կը մտածէին, յօդուածին ուրբարագրելի մասերուն վրայ կը յարձակէին միաժամանակ, բայց հակառակ ատար մեր մամուլին մէկ թեւը յարձակման թիրախ դարձուց վերջինը, ինչինչ մեղքեր վերադրելով անոր:

Գարզուած պատկերին նայելով, Վահագն Դաւթեան պիտի գրէր.
 «Բայց գարմանակին այն էր, որ իմ ընդդիմաթօսանքից ոմանք շրջանցելով կամ ազատագրելով իմ հիմնական աւարկութիւնները, փարձում էին ապացուցանել, թէ Շահան Շահնուրի յօդուածում աւարկելի ու դատապար-

տելի ոչինչ չկայ, որ ես չեմ կարողացել նիշդ բնկալիլ ու մեկնաբանել Շահ-նուրի յօդուածի ոգին:

Բայց առաջին մարդը, որ դեռ այդ մտքերի փոխանակութիւնից առաջ եկաւ հաստատելու իմ բաց նամակի իրաւացիութիւնը, ոչ ալ ոք էր, քան հենց ինքը՝ Շահան Շահնուրը:

Այդ ճիշդ է: «Յառազ»-ի մէջ վերահրատարակուած «Ազատն Կոմիտաս»-ը իրականութեան մէջ լեզուական բարեփոխութեան մը միայն ենթարկուած չէր եւ ընդլայնումներէ աւելի յապաւումներ կատարուած էին անոր մէջ: «Վերանայումի կարօտ» մասերը ա՛յն մասերն էին, ուր կային բացայայտ ուրացումներ, օրինակ սա կամայական խօսքը, թէ՛ հայուն միշտ պահած են «մտաւորական մեծութիւնն ու հատուցութիւնը... ոչ միայն ստեղծելու, այլև գոնէ օտարը ըմբռնել կարենալու համար»:

«Ազատն Կոմիտաս»-ի առաջին բրտմին մէջ փաստերուն ու արամարանութեան չգիտացող նման նմոյշները թիւով քիչ չէին, որոցմէ Շահ-նուր բեռնաթափեց գրութեան երկրորդ տարբերակը, որ, իր այս ձեւին մէջ, աւելորդ է ըսել, կը վկայէր որոշ տեսակէտներ ունեցող գրողի մը մասին, բայց գրոհի առիթ բնաւ չէր տար:

Երբ մարդ իր ձեռքով կը յապաւէ երիտասարդական իր յապաւելի մտլորութիւնները, նոյն մարդուն մտլորութիւնները պաշտպանելու ու պաշտելու յամատութիւնը անհեթեթութեան սահմաններուն մէջ կ'իյնայ եւ որեւէ կշիռ չի ներկայացներ: Մեր մամուլին կարդ մը անդամները, ցաւօք, այդ անհեթեթութեամբ խօսեցան այս վէճին ամբողջ ընթացքին:

Շահնուր-Դաւթեան այս վէճին առիթով տահանելի բացաթիւ երեւոյթներ պարզուեցան եւ մտքի կազ-կազ տեսութիւններ փոռուեցան մամուլի էջերուն, որոնց անդրադառնալը զուր աշխատանք պիտի ըլլար: Փակելէ առաջ սակայն այս հարցը, կ'ուզէինք երկու գիտողութիւն արձանագրել, մէկը գրագէտին հաշտին, միւսը՝ բանաստեղծին:

Շահնուր կը գրէ.

«Հնօրեայ դպիր մը, Վահագն Դաւթեան», եւ այլն:

Ինչո՞ւ Հնօրեայ դպիր մը, եւ ինչո՞ւ մանաւանդ Հնօրեայ այս ոճը, երբ ենթական տասնամեակներէ ի վեր կը համարուի «այր հասուն»:

Վահագն Դաւթեան կը գրէ.

«Հայաստանի մամուլը («Գրական թերթ», «Հայրենիքի ձայն») նման առիթներով մի քանի անգամ անդրադարձել է «Մփիւռք» շաբաթաթերթին, սակայն՝ անօգուտ: «Մփիւռք»-ը շարունակելի է իր վարճագիծը, եւ միշտ չէ, որ նպատակայարմար է համարուել իջնել նրա մակարդակին եւ համղէս գալ նրա դէմ»:

«Իջնել նրա մակարդակին»:

Նման բաներ գրող մարդը կը կարծէ՞, թէ մնաց կամ կրնայ մնալ իր մակարդակին: Կը կասկածինք ու կը ցաւինք այս ոճին ու ոգիին համար: Այս վարճումը վայել չէ ո՛չ վաւերական դրագէտներուն, ո՛չ ալ վաւերական բանաստեղծներուն: Վաւերական գրագէտներն ու բանաստեղծները կը համոզեն, չեն նախատեր:

Բացուած այս վէճին վերջին փուլին մէջ, մենք, այսուհանդերձ, յարգանքով կը գիտաւորենք թէ՛ Շահնուրի «Ազատն Կոմիտաս»-ի երկրորդ տարբերակը, թէ՛ զայն ողջունող բանաստեղծին խօսքը, առանց, անշուշտ, լրիւ բաժնելու անոնց յիշատակած փաստերը, ձեւակերպած կարծիքները կամ արժեւորութիւնները...

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ԱԶԱՏՆ ԿՈՄԻՏԱՍ

Կը խորհիմ որ մեր աշխարհը բան մը պիտի չկորսնցնէ, եթէ իր երեւելն Հայը անհետանայ վերջնական չբացումով: Բայց ան բան մը պիտի չտեսի անկասկած եթէ Հայը արդիւնաւորէ, անգամ մը եւս, իր հանճարին թաքուն ուժերը:

Ի՞նչ ենք ի վերջոյ այսօր, մեր գաղթականութեան սոս հազար-ինը-հարիւր-հրեսուն եւ հինգ թուականին, եթէ ոչ թշուառ եւ խոցոտ բարիաներու թափառականութիւն մը, նշաւակ՝ քաղաքավարական կարեկցութեան եթէ ոչ արհամարհանքի: Ի՞նչ ենք այսօր, եթէ ոչ եղերականորէն սնանկ, այլ յուսկնոտ այլանդակութիւն մը, որ քարչ կու տայ իր քէներն ու անբուժելի վէրքերը: Ստրուկ՝ որ եղբայրասպան կոխի մէջ կը հերոսանայ: Երբեմն ո՛չ իսկ այդ:

Եւ եթէ պատահի որ հայ ժողովուրդի ընդերքէն փայլատակէ ինչ որ ստեղծադործ ուժ է, եւ եթէ պատահի որ այդ ուժը գտնէ իր կիրարկման յատուկ տարրը, կասկած չկայ որ նոր գեղեցկութիւն մը աւելցած պիտի ըլլայ աշխարհի գեղեցկութիւններուն վրայ: Գեղեցկութիւն՝ որ պիտի ըլլայ այնքան թանկագին եւ պայծառ, որքան նսեմ եղած է այն չփոթութիւնը ուրկէ կը յառնէ ան:

Եւ այդ գեղեցկութիւնը չի կրնար չյայտնուիլ: Այն պարզ իրողութիւնը թէ Հայը կրցեմ է դիմադրել դարերու խորտակիչ ճնշումին, ինքնին արդէն յաղթանակ մըն է, փոյթ չէ թէ ան եղած ըլլայ լուռ յաղթանակ մը, նման անոնց որ կը տարուին խաւար անկիւններու մէջ, Աշխարհի տեսողութենէն հեռու: Նոր յաղթանակը պիտի գայ ա՛յսօր եւս, քանի որ անցեալի մէջ ան մեղ շնորհուած է բազմիցս, եւ մենք այսօր կրնանք թուել անոնցմէ չորսը — Ս. Մեսրոպ, Կոմիտաս, Կաթողիկէ եւ Անդրանիկ:

Ասոնցմէ դուրս ոչինչ ունինք որ ըլլայ ճշմարիտ յաղթանակ եւ անվիճելի նուաճում: Այս շորսերն են միայն, որոնց մօտ կարելի է ազատանիլ յուսալքման եւ ուրացումի դաժան գիշերներուն, ինչպէս մարդ պիտի ընէր դէպի լոյսը:

Ո՛չ այն յոյսը, որ մութը փարատելով կը բաւականանայ: Այլ ան միւսը, որ կ'ընէ աւելի բան մը եւս: Երբ ան կը բոցավառի ձեռքունէն առկախ բոցմագրուազ ջահին մէջ, ներսէ՛ն կը վառէ իր համեստ նախատիպերը, որոնք շար ի շար կ'առկախուէին բիւրեղեայ ողկոյզներու նման, եւ կը մնային գոց՝ իրենց ներքին լոյսին վրայ: Մեծաշոյնին արժանիքն է նպատատարի իրմէ նուազ մեծերը, եւ փոխադարձաբար նպատատարութիւն անոնց կազմած շուրջանակի համաստեղութենէն: Նմանապէս ալ, մեր շոքո ջահներէն իւրաքանչիւրը տուած է նոր խոյանք մը, լաւագոյն շոքոմարմար մը իր համեստ նախատիպերուն, որոնց բոլորախումբ համաստեղութիւնը կ'ընդլայնի դարէ դար, ցոլքէ ցոլք եւ կ'երթայ Ս. Մեսրոպէն Ղեւոնդ Երէցին եւ յաջորդաբար, կաթողիկէէն՝ զրաժաշակութիւնն եւ յաջորդաբար, կոմիտասէն՝ իր հինգ սաներուն եւ յաջորդաբար, Անդրանիկէն՝ անուանի եւ անանուն բոլոր մարտիկներուն:

Եւ ի՞նչ է, ի վերջոյ, այսօրինակ լուսաւորում մը եթէ ան ազատութիւն չէ: Հայ խօսքը թափել զրշական ինքնուրոյն ձեւի մը մէջ (graphie) կը նշանակէ զայն տարանջատել օտարէն եւ շեշտել իր ազգային հպատակութիւնը: Եւ քանի որ մեր ազատութիւնները եղեր են շոքո հատ, թուղթի վրայ միայն կարելի է ըսել — «Եթէ այսօր Հայը անհետանայ...»: Միակ ազատութեան մը գոյութիւնը անկարելի կը դարձնէ շուտափոյթ մահը, ինչպէս որ միակ ազատութեան մը սուր գիտակցութիւնը կարելի կը դարձնէ նոր ազատութիւն:

Եւ հակադրաբար մահուան, որ անմիջական չի կրնար ըլլալ, ազատութիւնը կը յայտնուի աննախատեսելի պահու մը, քանի որ ան գործն է միակ հանճարի մը: Ան կ'ըլլայ տեսակ մը նմանակը բարձրմաստ ազատութեան: Ան որ ծնունդն է ազգի մը իմացական եւ ոգեկան աշխարհին, եւ որ, հակադարձ շարժումով մը, սահմանուած է ձեւաւորել այդ նոյն աշխարհը, նման նորածինին որ կ'ազդէ իր մօրը վրայ, ան կը հպատակի դասակարգութեան մը: Դասակարգութիւն մը՝ ըստ ոգեկան ուժի տարողութեան: Մեր ճարտարապետութիւնը կը գտնուի միջոցին մէջ առաւելապէս: Անդրանիկը՝ ժամանակին: Մեր քերթն ու լեզուն է որ, առաւելս գտնուած նիւթական տարրերէ, կը մնան իրրեւ գոտ ոգեկան ազատութիւններ: Համաձայն այս դասակարգումին, Վարդապետը կու գայ Ս. Մեսրոպէն վերջ, իրրեւ երկրորդ Սուրբ մը: Ան կ'ըլլայ մեծագոյնը, Ազգի լի մեր կորուստներուն:

Որքա՛ն ցանկալի պիտի ըլլար, որ մեզի տրուէր յիշատակել հինգերորդ յաղթանակ մը եւս, այս անպամ զրական — իմացական դասէն, քանի որ մտածումի աշխարհը, իր արտայայտչական անսահման կարելիութիւններով, կ'երթայ թէեւ զուգընթաց ուղիով, բայց շատ աւելի հեռունները, բան թէ զեղջկական մեղեդիին գոտ զգացական դիւթանքը: Բայց եթէ անկարող ենք ընել այդ մէկը, արդար է որ յիշենք գոնէ մեր մտաւորականութիւնը, որ նոր հունի մէջ մայուց մեր լեզուն, նոր սլացք տուաւ անոր եւ ձեւաւորեց մեր Մեծաքանչը:

Ձեւաւորել: Ահա գործողութիւն մը, որ կեդրոնական առանցքն իսկ է քիչ մը ամէն ստեղծագործութեան, որով նաեւ զբաղանդութեան եւ արուեստի, քանի որ գրականութիւնը ձեւաւորումն իսկ է ներքին եւ արտաքին աշխարհներու անիմաստ խառնակութեան: Արուեստի մարդը, լաւ եւս է ըսել՝ հասարակ մահկանացուն, անմիջական պահանջը ունի ապահովութեան: Միայնքե՛ն ըմբռնելի ձեւին, ճշգրտչին եւ ճանաչելիին, բաներ՝ զորս ինք կը ստեղծէ, հարկադրաբար, սկսեալ այն բնազդական, չըսելու համար մեքե-

նական շարժումէն, որով մարդ իր մաղերը կը մեւաւորէ՝ ձեռքի շարժումով մը, մինչեւ Աստուծոյ գաղափարը, զոր դարձուցած է ըմբռնելի, միշտ է ինդիք սպաւնդութեան:

Ձեւի յաղթանակներն են մեր շորս աղատութիւնները: Մէկը ձեւ զգեցողց ձայնին, որ շունչ էր եւ ուրի: Միւսը՝ քարին, որ հաւատք էր եւ Լուսաւորչի կանթեղ: Ձեւ է եւ օրէնք Ձապէլ եւ Հրանդ Աստուրներու քերականութիւնը, որ կը պայմանադէ մեր մտածելակերպը, երբ կը ճշդէ բառերուն յաջորդական կարգը նախադասութեան մէջ: Մեր մտաւորականութեան այս մասնադասութիւնը դէպի օրինաւորութիւն եւ առաւել հայեցիութիւն, խթան մը եղաւ որպէսզի Արեւելահայն ալ սկսի սանտրել իր խոսնակ լեզուն, խոստափիլ թուրք եւ թաթար բառապաշարէն եւ առուսնչիւն Փրանսերէնէն, որքան ալ որ համեղ ըլլայ բարբառային գրականութիւնը: Գալով մեր Վարդապետին...

Ան երգահան էր, քիչ մը նման այն Փրանսացի մշակին, որ թաքուն գանձ մը երեւան կը հանէ իր արօրին շեղքով եւ կը կոչուի հնարիչ (inventeur): Հայ երգը «հնարեց» կոմիտաս, բանաւորը վերածելով դրամոր, այսինքն փոխանցելի արուեստի: Հոս թերեւս աւելորդ ըլլայ ըսել, թէ դերման մտաւորականութեան կ'իյնայ պատիւը առաջին անգամ հետաքրքրուած ըլլալու ժողովրդական բանաստեղծութեամբ: ԺՊ. դարու վերջերուն է որ Համան եւ Հէրատէր կ'ըսէին — «Բանաստեղծութիւնը մարդկային ցեղին մայրենի լեզուն է»: կոմիտաս որ այդ կողմերէն անցաւ, չմարանեցաւ, ի պահանջաւ Հարկին մեր «մայրենի լեզուն» յղկելու, ինչպէս հնարիչ մշակը կը մաքրէ իր հողածածկ դանձը: Հում բնագիւղէն քիչ բան փոխեց կոմիտաս, պիտի ըսէինք, եթէ չդիտանայինք թէ քիչ բան գոյութիւն չունի բանաստեղծութեան մէջ: Միակ բառի մը, նոյնիսկ վանկի մը փոփոխութիւնը բաւ է որպէսզի բանաստեղծութիւնը նուազի կամ թեւածէ: Այս իմաստուն միջամտութիւնը գրականին էր այն որը զգայնութեան, սրով Վարդապետը կը թափանցէր բանաստեղծութեան ոգիին:

Այդ ոգին ինք գտած էր հայրենի ժողովուրդին ծոցը, ճակատագրական հանդիպումով մը: Տեղի ունեցած էր անմիջական նոյնացում: Տեսակ մը սպառիչ գերիվարում: Իր յափշտակութիւնը նման էր այն տազնապալից հրճուանքին, որով հնախոյզը կը կարծէ տեսնել, կը տեսնէ՛ նոյնիսկ խրամատի կիսաստուերին մէջ լուսարձակումը մեր Անահիտին՝ դրեթէ անեղծ: Գարեբու խորէն յառնած շինականն է որ կը վերսկսէր իր երգն ու շուրջպարը, ընդդէմ այս անսովոր կրօնաւորին, որ այնքան խոր կ'ապրէր սիրերգը, որքան շարականը: Անոնք երկու երեսներն էին նոյն կրօնքին:

Ամբողջական եւ այլամերժ սէրն էր այդ կրօնքը, որ ի մի կը ձուլէր հայրենասէրը, հրամիշտը, տեսարանը եւ դաստիարակը: Մարդը միակտուր էր, այլ եւ՝ ներդաշնակ բազմակերպութիւն: Իր մոզական ճպտոք կ'արթնցնէր ինչ որ հանգչող կրակ էր Հայու հոգիին խորը: Երող բո՛ւն իսկ մեր հրդէն էր, ըլլալով հանդերձ նորագոյնը: Եւ այս նորագոյն երգը հանդիպեցաւ, բարեպատեհ զուգահիւսութեամբ, մեր նորածագ ազատութեան, այսինքն Հիւրիէթի օրերուն, երբ Հայը կ'ապրէր զարթօնքի անսխալութեան շրջան մը:

Ի՞նչ օրեր: «Երբ կը մտածեմ, կարծես թէ սիրտս պիտի սպաւի»: Այսպէս պիտի ըսէր Փրանսուս Վիլոն: Մեր ձայնը լսուած էր: Գրեթէ: Վեց վիլայէթները մեզի կուտային: Վեց հատ առէք կ'ըսէին: Մենք ալ կ'առնէինք վեց հատ: Ինչո՞ւ մարդու սիրտ կուտրել: «Գիրիբու գիւտ» փաստապանձ

օրերուն, տեղացի Յոյները կ'ըսէին մեզի — «Փէտսափմու, շատ մի պտաք. Շուկը դրան ետեւն է, կը լսէ...»: Այսպէս կ'ըսէին Յոյները: Անոնք չէին գիտեր թէ մեր բարեկամը, Քալաթ, զժուարաւ կը գողէր իր արտասուքը երբ կը հետեւէր բնիկ Սիմոն Զաւարեանի դազադին: Այդ օրերուն Վտփորի կապոյտ Գուրեթը կը հուսէին այդ ուղղութեամբ...:

Այս շրջանը փակող Ապրիլ 11ը պատճառ մը չէ, որ Հիւրիէթը չմայ այն՝ ինչ որ է — Հայկական Վերածնունդի առաջին (համեստ) հանդրուանը, երկրորդն ըլլալով Հանրապետութեան հռչակումը որուն պիտի յաջորդէր Հայաստանի խորհրդայնացումը: Բարեբաւտիկ զուգադիպութիւնը, որով Կոմիտաս ճիշդ այդ օրերուն կը բերէր իր եզակի նպաստը, միակը չէր իր տեսակին մէջ: Կար տակաւին երկրորդ զուգադիպութիւն մը, թէ՛նէ համառունակ տեսակի:

Տղօն արտաքինով անտաշ տղամարդ մը, Արմենակ Շահմուրատեան, կը կատարէր տեսակ մը հրաշագործութիւն: Շինականի իր շէշտը կրդին կուտար, իր ընդոծին բնականութեամբ, անպերազանցելի բուրմունք մը եւ գունադեղում: Որպէ՛ս թէ երգը մասնաւորապէս յղացուած ըլլար այդ շէշտին համար: Հրաշագործութիւնը հան էր, որ ընտրելու Կոմիտասի եւ իր օժտեալ մենեղիչին, «զրսեցին» կը օտանար տեսակ մը աղնուականացում: Մարգու տեղ կ'անցնէր Պոլսեցիի աչքին, իրենհարգող աւագանները կը զօրծէին լաւագոյն զեղումով ընդմէջ Պոլսոյ եւ գաւառի: Պէտք չէ մոռնալ սակայն, որ նոյն «զրսեցին» տակաւին տէրն էր երկրորդ գանձի մը, որ անաւստիկ:

Այն առասպելական պատմուածքը, առաւել կամ նուազ բարոյացուցիչ եւ հայրենասիրական, զոր մենք կը կոչենք հէքեաթ, պէտք ունէր երկրորդ Կոմիտասի մը: Պէտք ունէր նմանաբիւն հանճարի մը, որ զգար ժողովրդական զրոյցը, բերեղացնէր դայն եւ բանաւորը բարձրացնէր գրականի: Այդ հանճարը պակեցաւ մեզի: Անոնք որ փորձեցին դրական այդ սեռը, մնացին միջոցին վար, հակառակ անոր որ հարազատ դաւակներն էին գաւառի: Մեր ժողովուրդը, որ անզրադէտ էր բարձրագոյն տոկոսով, իր երեւակայութիւնը վստահած էր հէքեաթի մոգական զօրութեան, թոնիրին շուրջ խմբուած բոլորակի: Առասպելը չէր կրնար ըլլալ նուազ ինքնատիպ քան բանաստեղծութիւնը: Բայց ան չհասաւ արուեստի բարձրութեան: Այսպէս որ հայ ընտանիքը մնաց ինքն իր վրայ գոց եւ ամբափակ: Եւ եթէ չխորչենք այն թակարդներէն զորս նմանազրութիւնը կը լարէ զբողին առջեւ, կրնանք առնել օրինակը, ինչո՞ւ չէ, ջերմաշափին:

Հայ պետականութեան կործանումը նման է ջերմաշափի ջախջախումին, որով նաեւ սնդիկի կոտորակումին: Հայ ընտանիքը սնդիկի այն ամբապետ մետաղեայ գնդիկն է, որ կը ցրուի խօլաբար: Ինքն իր վրայ գոց՝ ան կը մնայ այլամերժ եւ բացառիկ ուժով կը դիմադրէ թուրքին որ կը կոչէ «այլադղի»: Ընտանիքի պաղափարին միտքերը չի կրնար սակայն փոխարինել սղփային զպացումին միտքերը: Որպէսզի կատարուի տարտղնուած գնդիկներուն այնքա՞ն ցանկալի միացումը, ոմանք պահանջը դրացին բարձրաստիճան ջերմութեան, ձուլելու համար սնդիկը որ մետաղ է: Յեղափոխութիւնը, կամ ինչ որ անոր կը նմանէր, ճախողեցաւ ողբերգականօրէն: Եթէ ճիշդ է որ անոր մէկ անուղղակի հետեւանքն եղաւ կովկասեան յաջողութիւնը, ուղղակի հետեւանքով՝ ցրումը ոստակացաւ, այս անգամ ամբողջ երկրագունդի մակերեսին: Եւ եթէ աչքի առջեւ ունենանք սա յառաջատուութիւնը — անհատ, ընտանիք, ազգ եւ մարդկութիւն, կը տեսնենք որ Հայը ան-

չարժացած է երկրորդ հանդրուանին վրայ ու չէ հասած աղլուծեան աստի-
ճանին: Այսօր կան տարանջատ ընտանիքներ, բայց չկայ Ազգն Հայոց:

Անշուշտ Հայկազեան լեզուն, աջակցութեամբ Եկեղեցիին, պիտի
կրնար, շատ անդամ կրնա՛յ բարեբախտաբար, միութեան տարբ մը կաղմել
հողմացրիւ Հայութեան մէջ: Բայց ամենադժուորն է ան, քանի որ անցեալի
բարբառներուն վրայ կուգան աւելնալ նորեր, ողբալի խառնակութեամբ:
Կոմիտասն է որ կը տապալէ պատուարները: Սպասելով այն օրուան, երբ
պիտի գետեղուի պետականութեան հիմնաքարը, այսօ՛ր, մեր դաղթականու-
թեան ներկայ վիճակին մէջ, Կոմիտասն է միայն որ ընտանեկան հանգր-
ւանէն բարձրացած է աղլուծիին: Հո՛ր է իր մեծութիւնը: Կը բաւէ ըսել —
«Սիրոս նման է էն փրած տներ», որպէսզի Հայը հասկնայ ուրիշ Հայ մը:

Կ'ուզեմք վերջին հատուածս տրամադրել մեր թմբուկին: Հանճարը
կրնայ ծնիլ զուտի խորը, բայց մտրաքաղաքն է որ զայն կը նուիրապարծէ:
Ան է որ կը տարածէ համբաւը, ըլլալով արմագանդիլ թմբուկ (caisse de
résonance): Եւ մեր մայրաքաղաքը Պոլիսն էր: Պէտք է ցաւիլ որ այս՝ այս-
պէս էր: Բայց մեղքը Պոլիսինը չէ, երբ կոփկասահայ գանգուածը մնացած
էր ուստածու, ծիծաղելի սնալիզումը եւ անպատրաստ, իր ցրուածութեամբ
իսկ, թմբուկի դերին: Սիմոն Վրացեան, որ կարելի չէ կողմնակալութեամբ
ամբաստանել այս պարագային, կը վկայէ թէ Վարդապետը ստիպուեցաւ
խոյս տալ Կովկասէն եւ Վանքի հեղձուցիչ մթնոլորտէն: Ան Պոլսոյ մէջ
միայն կրնար գտնել այն տարբը զոր կը փնտռէր եւ զօր գտաւ:

Արդարեւ, Պոլսահայութիւնը իսկոյն շրջապատեց Վարդապետը, իր
զրագէտներու բաղմահոյլ փաղանգով, իր հնչեղ մամուլով, վարժարան-
ներու լայն ցանցով, այլ մանաւանդ իր խանդավառ երիտասարդութեամբ:
Օղբ թնդաց: Պոլսահայը սլաշտեց իր Կոմիտասը, բայց ափսո՛ս, չկրցաւ
պաշտպանել զայն:

Երբ օրացոյցը նշեց Վարմիր Արալի, աղէտը դարձան լուսնէր: Ժամը
ուշ էր եւ արեւը խուարած:

Եւ Վարդապետը բռնեց ճամբան Չանկըրը-Այաշի, որ կ'երկարի մինչեւ
Վիլ-էփրար:

Ան ինկաւ Գողգոթայի ճամբուն վրայ մէկ անգամ, յետոյ երկու
անգամ, եւ ոչ մէկ դիտութիւն կրցաւ արգելիլ վերջին անկումը:

Ան որ նուրբ եղէզ մըն էր հրաշագործ, ան ճաթեցաւ: Եւ ոչ ոք չէր
մոռաց: Վահան Թէքէեան կ'ըսէ. — «Ծպտուն բնագիշտ ճաթած է հիմա...»:

Եւ որովհետեւ խաչուեցաւ ան, եւ որովհետեւ թաղուեցաւ ան, ահա
յարութիւն կ'առնէ մեր անասնման պաշտամունքին եւ խանդաղատանքին
մէջ, ան՝ Աղատն Կոմիտաս:

Շ. Շ.

ՎԱՀԱԳՆ ԴԱԻԹԵԱՆ

Նամակ խմբագրութեանը

**ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻՆ ՈՒՂՂՈՒԱԾ
ԻՄ ԲԱՅ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ**

Նկատի ունենալով, որ «Հայրենիքի Ձայն» շաբաթաթերթի Յունուարի 21-ի համարում տպագրուած իմ բաց նամակը՝ ուղղուած Շահան Շահնուրին, սփիւռքահայ մամուլում մտքերի բուռն փոխանակութիւն, վէճեր, թեր ու ղէժ կարծիքներ յարուցեց, հարկ եմ համարում անդրադառնալ դժբանց եւ յայտնել իմ նկատառումները:

Նախ պարտաւոր եմ ասել, որ իմ բաց նամակի տպագրութիւնից յետոյ ինձ համար անսպասելիօրէն պարզուեց, որ նամակիս առիթ տուած Շահան Շահնուրի «Ազատն Կոմիտաս» յօդուածը գրուած է ոչ թէ 1969 թուականին, Կոմիտասի ծննդեան 100-ամեայ յօբելեանի առթիւ, այլ շատ աւելի վաղ՝ 1935-ին: Մի փոքր աւելի ուշ, Շահնուրից ստացած անձնական նամակից եւ «Աշխարհ» ու «Զարթօն» թերթերում նրա հրատարակած յօդուածներից պարզուեց նաեւ, որ «Ափիւռ» շաբաթաթերթը առանց հեղինակի գիտութեան ու համաձայնութեան է մոտացութիւնից հանել ու վերահրատարակել այդ յօդուածը եւ, ինչպէս Շահնուրն է վրդովմունքով նշել, «մտտնալով մամուլի տարրական կանոնները, չէր յիշած ո՛չ իր աղբիւրը եւ ոչ ալ յօդուածին տարիքը, այն տպաւորութիւնն էր թողած, թէ ինձմէ կը հրատարակէ նոր գրութիւն մը»:

Ուստի եւ խորապէս ցաւելով ու անստալով յօդուածի գրութեան թուականին անտեղեակ լինելուս համար եւ նկատի ունենալով, որ իմ ընդդիմախօսների հիմնական աւարկութիւններից մէկը վերաբերում է հենց դրան, կ'ուղէի ասել, որ, այո՛, յօդուածի թուականը կարող էր լսյո սփռել նրա մէջ արտայայտուած առանձին տրամադրութիւնների ու մտքերի վրայ, բացառել այդ տրամադրութիւնների գրապատճառները, սակայն, իմ խորին համոզմամբ, չէր կարող արդարացնել այն հիմնականը, որին եւ ուղղուած էր իմ բաց նամակը:

Ենթադրենք նոյնիսկ, թէ «Ափիւռ» թերթը նշած լինէր Շահնուրի յօդուածի գրութեան թուականը եւ բարձր էլ տեղեակ լինէինք, որ այն գրուած է 1935-ին, կ'արդարանա՞ր արդեօք նրա վերահրատարակութիւնը (թէկուզ եւ հակառակ հեղինակի կամքի) այս օրերին, եւ կը վերանա՞ր նրա ղէժ հանդէս գալու անհրաժեշտութիւնը:

Ոչ, չէր արդարանայ եւ նրա ղէժ հանդէս գալու անհրաժեշտութիւնը ամենեւին էլ չէր վերանայ, հասկանալի է, սակայն, որ այդ ղէպքում խօսքն

արդէն կ'ուղղուէր ոչ թէ Շահան Շահնուրին, այլ «Սփիւռէ» շարաթաթերթին, որը նորից էր շրջանառութեան մէջ դնում այդ յօդուածը: Ուստի պէ՛տք էր, որ հրատարակչութեան մերժուէր ու հերքուէր այդ յօդուածի մտայնութիւնը, մերժուէր յատկապէս մեր օրերում, երբ հայրենիքի և սփիւռքի մերձեցմամբ, Հայաստանի իրականութեան համընդհանուր ճանաչմամբ տեղի է ունենում համազգային մի նոր հողերանակման ձևաւորում, որն բնիկանում է մեր հողեւոր արժէքների, մեր պատմական անցեալի զննատման ու վերադննատման, ազգային արժանապատուութեան գիտակցութեան բարձրացման, մեր ժողովրդի երկու հատուածների համախմբման, երկու դրական լեզուների մերձեցման ճանապարհով, հանգամանքներ, որոնց Շահան Շահնուրի յօդուածը ամենեւին չէր նպաստում:

Այդ յօդուածի դէմ հրատարակչութեան հանդէս գալու անհրաժեշտութիւնը չէր վերանայ նաեւ այն պարզ պատճառով, որ յօդուածի վերահրատարակութեան փաստն իսկ գալիս էր ասելու, որ նրանում արտայայտուած մտայնութիւնը գեղեւս իր կրողներն ունի: Հակուած եմ կարծելու, որ «Սփիւռէ» շարաթաթերթի խմբագիրը, Շահնուրի բնորոշմամբ այդ «նարպիկ սուզակը», ամենեւին էլ պատահականօրէն չէր արխիւներից հանել և էր ընթերցողներին ուշադրութեանը յանձնել չենց այդ յօդուածը, որովհետեւ նրա որոշ գրոյթները, յատկապէս մեր ժողովրդի երկու հատուածները եւ նրանց զրական լեզուները միմեանց հակադրելու միտումը հարազատ էին այդ թերթի ոգուն ու նկրտումներին: Առաջին անգամ չէ, ի հարկէ, որ «Սփիւռէ» շարաթաթերթը արխիւները փորձերով, կասկածելի, մեր ժողովրդին ոչ մի օգուտ չբերող փաստեր ու փաստիկներ է հրատարակ նետում ևւ գրանց շուրջ ստեղծում փատառով մի աղմուկ: Հայաստանի մամուլը («Գրական Թեքթ», «Հայրենիքի Ձայն») նման սուրբներով մի քանի անգամ անդրադարձել է «Սփիւռէ» շարաթաթերթին, սակայն՝ անօգուտ: «Սփիւռէ»-ը շարունակել է իր վարքագիծը, ևւ միշտ չէ, որ նպատակայարմար է համարուել իջնել նրա մակարդակին ևւ հանդէս գալ նրա դէմ: Բայց քանի որ այս անգամ օգտագործուած էր (ինչպէս պարզուեց, շարաչահուած էր) Շահնուրի «Եղիշակութիւնը», խօսքի կշիռն ու զրական հմայքը, ուստի ևւ անդրադարձանք զրան: Եւ քանի որ Շահան Շահնուրը այդ թերթից բարձր կանգնած մի չեղինակութիւն էր, ուստի ևւ մեր խօսքն ուղղեցինք ոչ թէ թերթին, այլ Շահնուրին:

Եւ, ինչպէս նշեցի սկզբում, իմ բաց նամակի կապակցութեամբ սփիւռքի մամուլում, յատկապէս «Զարթօն» թերթում, ծայր առաւ մաքերի բուռն փոխանակութիւն, թեր ևւ դէմ կարծիքների բախումով: Եւ դարձական էր, քանի որ հարցերը կենսական էին, ևւ առիթը Շահան Շահնուրին էր՝ սփիւռքում ևւ հայրենիքում սիրուած մի գրող:

Բայց զարմանալին այն էր, որ իմ ընդդիմախօսներից ոմանք շրջանցելով կամ աղաւաղելով իմ հիմնական առարկութիւնները, փորձում էին ապացուցել, թէ Շահնուրի յօդուածում առարկելի ու զատապարտելի ոչինչ չկայ, որ ևւ չեմ կարողացել ճիշտ ընկալել ու մեկնարանել Շահնուրի յօդուածի ուղին:

Բայց առաջին մարդը, որ դեռ այդ մտքերի փոխանակութիւնից առաջ եկաւ հաստատելու իմ բաց նամակի իրաւացիութիւնը, ոչ այլ ոք էր, քան չենց ինքը՝ Շահան Շահնուրը:

Իմ նամակի տպագրութիւնից մի քանի օր յետոյ, Յունուարի 25-ին, Փարիզում հրատարակուող «Յառաջ» թերթում Շահնուրը նորից տպագրեց

իր այդ, ինչպէս ինքն է նշում, «փորձանաւոր» յօդուածը, սակայն վերափոխուած ու վերախմբագրուած: «Ափիւռն» շաբաթաթերթում տեսնելով եւրիտասարդական տարիներէ իր այդ յօդուածը, Շահնուրը հարկ էր համարել վերանայել այն եւ, ի պատիւ իրեն, ինչպէս ցոյց կը տամ ստորեւ, վերանայել հիմնովին: Ես չեմ ուզում գործածել «զարմանայի զուգադիպութեամբ» արտայայտութիւնը, բայց չեմ կարող նաեւ չնշել, որ դեռ ծանօթ իսկ չլինելով իմ բաց նամակին, Շահնուրը վերափոխել ու վերախմբագրել էր իր յօդուածի յատկապէս այն մասերը, որոնց եւ վերաբերում էին իմ հիմնական առարկութիւնները:

Այս նոր տարրերակի մէջ Շահնուրը նախ եւ առաջ ճշգրտել էր իր յօդուածի հասցէն: Եթէ նախորդի մէջ նա խօսում էր ընդհանրապէս «Հայի», հետեւաբար ամբողջ հայ ժողովրդի մասին, ապա այստեղ հենց առաջին նախադասութիւններէց նա որոշակիօրէն գրում է․

«Ի՞նչ ենք ի վերջոյ այսօր, մեր գաղթականութեան այս հազար ինը հարիւր երեսունօթը թուականին(*), եթէ ոչ թշուառ ու խոցուր բարիաններու թափառականութիւն մը՝ նշաւակ քաղաքական կարեկցութեան, եթէ ոչ արհամարհանքի» եւ այլն:

Այս ճշգրտումը դալիս է մեծապէս փոխելու ամբողջ յօդուածի ոլլին եւ արամարանութիւնը, մանաւանդ ի տարբերութիւն նախորդի, այս նոր տարբերակում Շահնուրն արդէն այդ գաղթականութեանը զուգահեռ տեսնում է նաեւ «կովկասեան յաջողութիւնը» եւ «Հայաստանի խորհրդայնացումը»:

Ընթերցողներն, անուշտ, յիշում են, որ իմ բաց նամակի հիմնական առարկութիւններից մէկն ուղղուած էր Շահնուրի այն գրոյթի դէմ, թէ հայ ժողովուրդը իր պատմութեան ընթացքում միայն չորս յաղթանակ է ունեցել՝ Ս․ Մեսրոպ, Կոմիտաս, Կաթողիկէ, Անդրանիկ: «Ասանցմէ գաւտ, — գրում էր Շահնուրը, — ինչ որ առնես հայէն կեղծ է, փտուկ կամ քափքըփած է, գոյնը դուրս կու տայ կամ կը նեխի»: Դուրս նետելով մեր ազգային մնացեալ արժէքներին առած այս նիհիլիստական բնորոշումները, Շահնուրը յօդուածի այս նոր տարբերակում գրում է․ «Նոր յաղթանակը պիտի գայ այսօր եւս, քանի որ անցեալին մէջ ան մեզ շնորհուած է քաղմիցս, եւ մենք այսօր կրնանք թուել աննցմէ չարսը․․»:

Տրամադծօրէն հակառակ մտքեր են սրանք, եւ եթէ այս վերջին ձեւակերպման մէջ առարկութիւն կարող են յարուցել միայն հեղինակի որոշակի նախափորութիւնները, ապա ազգային արժէքների ուրացում այլեւս հնարաւոր չէ տեսնել:

Իմ բաց նամակի մէկ այլ հիմնական առարկութիւնը վերաբերում էր Շահնուրի այն մտքին, թէ հային միշտ պակասել են «մտաւորական մեծութիւնն ու հասունութիւնը․․» ոչ միայն ստեղծելու, այլևս գտնելու օտարը ըմբռնել կարեմալու համար․․»:

Հաւանաբար յարգելի զբողը մէկ առ մէկ վերլուծելով, որ մենք, հայերս առաջիններից էինք, որ ըմբռնեցինք յունական փրիխոսփայական միտքը եւ սկսեցինք թարգմանել հին աշխարհի իմաստասէրներին, եւ այդ թարգմանութիւնների շնորհիւ է, որ մարդկային քաղաքակրթութիւնն այսօր ծանօթ է նրանցից ոմանց անհետ կորած գործերին, վերլուծելով, որ մենք առա-

(*) Պետք է լինի՝ 1935 թուականին: Ես հետագայում խմբագրելու չի յիշեց նրա գրութեան միջոց թուականը:

ջիններից մէկն էինք, որ հրաշալիօրէն թարգմանեցինք «Աստուածաշունչ»-ը, ըմբռնեցինք տպագրական դիւտի մեծութիւնը ու առաջիններից էինք, որ Կրթեր հրատարակեցինք, ըմբռնեցինք Շէյքսփիրի Հաննարն ու դարձեալ հրաշալիօրէն թարգմանեցինք, իր յօդուածից խնամքով ջնջել է այդ միտքը»

Հաւանաբար յարգելի դրողը վերջիշէլով նաեւ, որ տրեւմտահայու-թեանը գուգահեռ, արեւելահայութիւնն էլ մշակութային կարկառուն դէմ-քեր է տուել, տուել Արոճեան ու Նալբանդեան, Թումանեան ու Իսահակեան, Տէրեան ու Չարենց, որոնք ամբողջ Հայ մշակոյթը Հանել են մի նոր բարձ-րութեան, խնամքով ջնջել է նաեւ «մեր յետաւնաց դարմիկները՝ րսել կ'ալ-զեմ Արեւիլահայերը» վերաւերական արտայայտութիւնը:

Հաւանաբար կշռադատելով նաեւ, որ ինչ-ինչ, բայց Տէրեանի ու Չա-րենցի լեզուն ոչ մի կերպ չի կարելի «թափփուած», լոյծ քարքառ» Համա-րել, արեւելահայերէնն արդէն լեզու է անուանել, պահելով հանդերձ նրա նկատմամբ մի քննադատական վերաբերմունք, առնչուած օտար բառերի ան-հարկի գործածութեանը, վերաբերմունք, որ մերն է նաեւ: Դուրս է նետել նաեւ իր յօդուածի ամենաքամահրական արտայայտութիւններից մէկը-«կայ դժբախտաբար կովիանեան բարբառը»:

Ես զիտմամբ այսքան մանրամասն կանգ առայ «Ազատն Կոմիտաս» յօդուածի այն նոր տարրերակում կատարուած փոփոխութիւնների ու խրմ-բազրումների վրայ, որովհետեւ դրանք հակասութեան մէջ են Շահնուրի այն յայտարարութեանը, թէ ինքը «Սփիւռք» թերթում տեսնելով իր յօդ-ւածը, Հաստատել է, թէ դա «անտարկելի ամբողջութիւն մըն է» եւ վերա-մշակել է «անշուշտ հաւատարիմ մնալով տնոր սկզբնական իմաստին ու ու-պիին»:

Ես չլիտեմ «սկզբնական իմաստ ու ոգի» ասելով Շահնուրն ի՞նչը ի նկատի ունի. եթէ դա վերաբերում է Կոմիտասի մեծութեան փառաբանման սղուն, ապա դա, յիրաւի, այս նոր տարրերակում անփոփոխ է մնացել, հարկ էլ շունչեր փոխուելու, եւ մենք դրա պէմ ոչ մի առարկութիւն չու-նէինք: Իսկ ինչ վերաբերում է ազգային նիւթիզմի ոգուն, ապա, ինչպէս ցոյց տուեցին իմ բերած օրինակները, դրանից, բարեբախտաբար, քիչ քան է արդէն մնացել այս նոր տարրերակում: Իսկ յօդուածի ամբողջութեան մա-սին դատելու Համար բուական է այդ երկուսը կողք կողքի դնել եւ Հա-մոզուել, որ այս նոր տարրերակի երեք-քառորդը նորից է գրուած, այս ան-գամ արդէն՝ բաւականին սթափ ու ողջախոհ թոնով:

Անս թէ ինչու, երբ Շահնուրը ինձ անձնական նամակ գրեց, ես ան-միջապէս արձայանեցի նրան, եւ նրա առաջարկութեանը՝ որոնելու «Հա-մաձայնութեան դժուարին, այլեւ անհրաժեշտ ճամբան», պատասխանեցի, որ մենք «այդ ճամբան որոնելու կարիքն այլեւս չունենք, որովհետեւ Ձեր իսկ յօդուածի նոր տարրերակով այն արդէն հիմնականում գտնուած է»: Ա-ւելացրի նաեւ, որ յօդուածի այդ նոր տարրերակի վերաբերեալ «ի հարկէ, այլ կարդի առարկութիւններ ունեմ, բայց քանի որ դրանք արդէն վերաբե-րում են մեր անձնական Հայեացքներին, մեր ճաշակին, ուստի եւ վէճի ա-ռարկայ զարձնելը աւելորդ եմ համարում»: Այդտեղ շեշտել էի նաեւ, որ եթէ իմ բաց նամակում կային բաներ, որոնք, թերեւս, պէտք չէ, որ աս-ւէին, ապա դա պահի դառնութեան եւ վրդովմունքի հետեւանք էր եւ ոչ իր նկատմամբ իմ ունեցած յարգանքի պակասութեան: (Ինձ մտում է զարմանալ միայն, թէ «Ջարթօն»-ում տպագրուած իր երկրորդ պատասխանում Շահ-նուրն ինչու է յայտարարում, թէ ես, իբր, զբար լուութեամբ եմ պատաս-

խանել իր անձնական նամակին: Իսկ եթէ դա վերաբերում է իմ հրապարակային պատասխանին, ապա դա աւելի վաղ շէի կարող անել, քանի որ պարտաւոր էի հետեւել փիւռքահայ մամուլում արդէն սկիզբ տաած մտքերի փոխանակութեանը եւ նոր միայն հանդէս դալ):

Շահնուրի յօդուածի այս նոր տարբերակում կատարուած փոփոխութիւններէ ու խմբագրումներէ վրայ ես այդքան մանրամասն կանգ առայ նաեւ մի այլ պատճառով. կարծում եմ, որ այդ հանգամանքն ինձ հնարաւորութիւն է տալիս իմ ընդդիմախօսներին հանգամանօրէն պատասխանելու տ՛ւաճ պարտականութիւնն աւելորդ համարել, քանի որ նրանք այնքան եռուսնդով, բայց եւ այնքան անհամազօր շարունակում են պաշտպանել այն ամէնը, ինչ հերքել ու մերժել է հենց ինքը՝ Շահնուրը: Պատասխանել նրանց, նշանակում է կրկնել Շահնուրին ուղղուած իմ բաց նամակը, որի կարիքը, կարծում եմ, չկայ:

Բայց «Սփիւռէ» թերթին մի քանի տողով եւս անդրադառնալու կարիքն, այնուամենայնիւ կայ:

Ճիշդն առած, միակ բանը, որ այս պատմութեան մէջ չեմ կարողանում ներել ինձ, հետեւեալն է. Շահնուրի յօդուածը տպագրուած տեսնելով այնպիսի մի թերթում, ինչպիսին «Սփիւռէ»ն է, պարտաւոր էի կատարածատօրէն նայիլ, տարակուսել, թէ արդեօք այդտեղ որեւէ անձազուր բան չկա՞յ:

Դժբախտաբար այդ կասկածամտութիւնը ժամանակին չայցելեց ինձ, այլապէս իմ բաց նամակը այլ հասցէ կ'ունենար:

Մի բան, սակայն, ինձ համար հենց սկզբից պարզ էր, տարակուսանք չուէի, որ իմ բաց նամակից յետոյ «Սփիւռէ»-ի խմբագիրը պիտի տարրական արտամարտութիւնն իսկ մի կողմ դնէ, աչքերն ու ականջները փակէ եւ հրապարակ հանի իր միակ ղէնքը՝ հայհոյանքը:

Այդպէս էլ եղաւ:

Ս. «Սփիւռէ»-ի խմբագրի շարունակաբար տպուող պատասխանները դրի ու զրականութեան հետ գործ ունեցող մարդու համար անվայելուշ մի բան համարելով, չեմ էլ ուղում հերքել զբանք, որովհետեւ ինչպէս Դերենիկ Դեմիրճեանն էր ասում, անհեթեթութիւնները պիտի ասուեն, որ վերջնանն: Յուսանք, որ այդպէս կը լինի:

Աւարտելով ասելքս, կ'ուղէի, սակայն, անդրադառնալ Շահնուրի պատասխանի նախադասութիւններից մէկին. «Ձեմ գիտեր, որո՞նն աչքին փուշն էի, որ գիտ դրին այս հարկադրանքի տակ»:

Կ'ուղէի հաւատացնել յարգելի գրողին, որ այլուր չգիտեմ ինչպէս, բայց հայրենիքում ինքը չէր կարող ունէ մէկի աչքի փուշը լինել եւ չէ: Շահնուրի զրական վաստակը, նրա տաղանդը միշտ բարձր է դնահատուել հայրենիքում, նոյն «Հայրենիքի Զայն»-ը մի քանի անգամ անդրադարձել է Շահնուրի ստեղծագործութեանը, նշել նրա պատուաւոր տեղը մեր մշակութիւնի կեանքում ու զրականութեան մէջ: Կարծում եմ, որ Շահնուր-հրապարակագրի տառնամակներ առաջ արած եւ բարեբախտաբար արդէն իսկ հիմնականում ուղղուած վերպումը ստուեր չի նստի նրա անունին ու տաղանդին:

ՎԱՀԱԳՆ ԴԱԹԵԱՆ

ԲԻԻԶԱՆԴ ԵՂԻԱՅԵԱՆ

ԱՇՈՒՂ - ԱՐՔԱՅ

ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ



Ե.— ԱՇԽԱՐՀԷՆ ՇՐԱԺԱՐԱԾ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՆ

Բայց հողաշէն ու հասարակ ու երբեմն դռնհիմնի իսկ մեր այս աշխարհին մէջ, ո՞վ պիտի հասկնար Սայաթ-Նովայի այդ ստեղծողորձ ու փրկարար սէրը, որ աստուածային կայծն է մարդուն մէջ: Մարդոց ուզածն է՝ զգայարանական սէր, ու զուարճանք, մինչ աշուղին տուածն է հոգի ու նաւ:

Եւ ահա զգացումը կու գայ Սայաթ-Նովային, թէ ինք սիրոյ այդ բարձր առաքելութեան հասնելէ ետքը, պէտք է այլևս հրաժարի մարդոց մէջլիւսներէն: Այդ զգացումը Սայաթ-Նովան կ'արտայայտէ, նախ՝ աշխարհէն ձանձրացած ու զրկարած ըլլալու դանդատով մը: Ինչ որ ինք երգեր է՝ շա՛տ է արդէն աշխարհի՛ համար ալ, իրն'ն համար ալ: Ի՞նչքան դառնութիւն կայ իր այս մէկ երգին մէջ, ուր կը գանգատի, թէ շատացեր է խալիսի սուտը, իշխանները այլևս հողածու չեն ազնուազոյն արուեստի հանդէպ, այլ կը գահանան հասարակ զուարճութեամբ, եւ ինք շու՛նի այլևս անցեալի իր փառքը, ու կշտացե՛ր է ու յողած՝ խալիսի ծափերէն, ուստի՛ հողին կ'ուզէ բլրուլի պէս «թուլիլ հեռանալ», ու կ'աւելցնէ.

«Աշխարհքս մէ փանջարս է, — քաղերումէն բեգարի իմ.
Մտիկ տվազըն կու թոցվի, — դաղերումէն բեգարի իմ.
Երէզ լու էր կանց որ էօր, — վաղերումէն բեգարի իմ.
Մարթ համաշա մէկ չի բի, — թաղերումէն բեգարի իմ:

«Աշխարհը միզ մընալու չէ, քանի նստիմք գող ու սապին,
Հա՛ւմ կաթնակիր Աթա՛նի գաթ, մա՛լաթ ըլի էս քա քափին, (*)
Համփիրութիւնը հատիլ է, չիմ գիմանում խալիի գափին,
Գօստիրըս դուշմանն ին դառի — ետդերումէն բեգարիլ իմ» :

Կը գանդատի մանաւանդ, թէ իշխանական ուշագրութեան արժանացած
նոր-նոր երգիչներ հրապարակ եկած են, որոնք «Փրանկիստանէն բերած սա-
զեր» առած, կամ «Վաթուռնթելեան սանգու» հնչեցնելով երաժշտական աղ-
մըկարարութիւն մը կ'ընեն, մինչ ինքը,

«Սայաթ-Նավան, փէտի սագով մա գործ տեսաւ էմբան լաւ» :

Ո՛վ սահայն տեղ կու տայ այլեւս իրեն: «Քսան իշխան» միտսին մէկ
ծառայ-երգիչ» չեն ուզեր պահել: Արուեստը ամանցեր է, եւ ահա հանդի-
պողը սազ ու սանգուս մեռք առած՝ երգիչ կը դառնայ: Իր ատրպեճաներէն
թիւ 41 երգին մէջ կ'ըսէ.

«Զարիւր-փալագն չարիւրն էմեց շուս էրիտ,
Վար միմաստամ վարդին մընաց դռներին...»

Եւ այնպիսի մարդիկ, որոնք նոյնիսկ «տօնական օրերուն» վրանին «չոր մը
չէին կրնար հաղնիլ», հիմա իրենց ձեռքերը կ'երկարեն ամէնէն «սզնիւ կեր-
պստի» :

«Սայաթ-Նավա, է՛լ գրածդ չիմ տեսի,
Ամէն էկող գալամ առած կու նազէ...»

Ու կ'եզրակացնէ.

«Աշուղ ըլիմ ինձ համար մեծ ցաւ դառաւ» :

Վրացերէն խաղերուն թիւ 30-ին մէջ շատ աւելի դաճանարտութեամբ կը
յայտնէ, թէ ուղղակի իր երեսին տուողներ անպակաս են՝ թէ ինք անարժէ՛ք
կրգիչ մըն է ու պէտք է պալատական յարկերէն հեռանա՛յ...

«Մէկն ինձ կ'օտ — «Գրեմ', մաշված շուր իս դում»,
Մէկն էլ կ'օտ — «Մէ հոտած ջրիւ՛ր իս դում...»
Ասին — «Գրեմ', էրեսըդ սեւ մօ՛ւր իս դում...»

Ու կ'ափսոսայ,

«Էրնէ՛կ լեզուն չիմանայի յիս մըրանց...»

Անկամ մը եւս ըսուի ուրեմն, թէ բարբոթին սխալ ենթադրութիւն կը
մնայ՝ բերնէ-բերան շարունակ այդ կրկնուածը, որպէս թէ Սայաթ-Նավան

(*) Եստ բնագիրներ այս բառը «բաթն» դրած են, որ անմաստ է: Կը յարձարի՛
վիայն «բազէա», սպորտսի շահ բառը, «ինձ պէտք չէ այդ սպորտսի շահը» ըսել կ'ուզէ:

արքունիքէն հեռացուեցաւ իշխանուհիի մը հանդէպ դաշտնի սէր սնուցանելո՛ւն համար... Ո՛չ, ան իր բարձր արուեստին հասնելու անկարող եւ սուտի իր համբաւին նախանձող նորեւուկ սաղճիներու կողմէ բամբասուեցաւ ու պատիւէ զրկուեցաւ, մարդոց հանդէպ յուսախարութեան մէջ ինկաւ, ու հպարտ հողիով թողուց զուրս եկաւ այդ արքունի աղմուկներէն:

«Թո՛ղ ինձ ազատ, վաս մարթ լինել չիմ ուզում,
Այս աշխարհում՝ փարթամ ապրիլ չիմ ուզում,
Ես աւաիկ եմ, իշխան դառնալ չիմ ուզում»:

Ան կը նախընտրէ պալատը ձգել զուրս ելլել, քան համակերպիլ որ կաշաղակներու կոփնչին մէջ խեղդուի բլբուլի երգը:

Սայաթ-Նովան իր անձնական յուսախարութենէն զատ, արտաքին աշխարհի մարդիկն ալ ազնուացնելու իր սիրոյն մէջ պահ մը տկարութիւն կը դրայ՝ թէ կարելի չէ խեւը խրատել ու սեւը սպիտակացնել,

«Թէ՛զուր դպրատանըմ պահ տաս՝
Ծեծով չի խըրատվի խիւրմ.
Բէդալիմ ապիլ չի դառնայ,
Թօլով չի սիպտակուի սիվըն»:

Ոչ ալ կրնայ դառնացած սերտով աշխարհին դատապարտութիւն արտասանել Սայաթ-Նովան հին ողբասաց մարդարէի մը պէս: Իր քաղցր հոգին միայն սէր ու բարեք բաշխել դիտէ, նոյնիսկ չարիք կամեցողին.

«Ով էրկի լեզի պարէրի՛
Դուն տուր շաքա՛ր, Սայաթ-Նովա՛ս»:

Ան կը սիրէ մարդ արարածը, ու կը յարգէ սնոր ազատութիւնը, կ'ուզէ որ արդարութեան հովանիին տակ՝ մարդիկ ապրին փոխադարձ հանդուրժողութեամբ եւ իրենց օրերը շթունաւորեն ջէնով: Բայց իր մարմինը այլեւս յոգնած է ու չի կրնար կրել հողիին ցաւերը, որոնցմէ կ'ուզէ ազատել: Իր ատրպեճաններէն մէկ երգին մէջ գարձեալ կ'ըսէ.

«Բնգարիլ է հոգիս մարմնից, հա՛ տանչոււմ է, վունց զանից,
Ազօրում եմ Արարիչին՝ էս ցաւէն ինձ ազատի»:

Աշխարհէն վչտացած այս հոգեվիճակի մէջ, աշուղը այլեւս անխաստ կը գտնէ հարսնիքներու, սուգերու, խնձոյքներու ու մէջլիսննրու մէջ թափառելը: Վերջ շունի, կ'ըսէ, «Մալ ու շահ» հաւաքելը: «Աշխարհը միզ մը նալու չի»: Պէտք է հոգեկան արժէքներու փրկութեան հոգ տանել: 1758-ին զրուած ատրպեճաններէն թիւ 40 երգին մէջ կ'ըսէ.

«Քանի վուր քու ձեռին էսօր երևար կայ,
Հաճուդ համա մէ տուն շինէ զաննաքում»:

Ու կ'եզրակացնէ, թէ երեք բաներ կան, որոնք մարդու կեանքին մնայուն արժէք կ'երաշխաւորեն — Գիր, Գրիչ ու Տաֆթար — ինչպէս կ'ըսէ հայերէնով.

«Երեք բան կայ՝ հագու մարմնու կարգումն է,
Գիր սիրէ, զալամ սիրէ, տափթար սիրէ»:

Մանկութեան օրերէն արդէն հոգեւոր կեանքի մթնոլորտին մէջ աւանդ, ընտանեկան բնակարանի ճիւղերէն հաւատաւոր ժողովուրդին տակ, ի վերջոյ իր մէջ ալ պիտի վերագարթնէր կրօնական հակումը:

Շատ հաւանաբար իր այս հոգեվիճակին մէջ էր որ, ինչպէս կը յիշուի, Սայաթ-Նովան քահանայութիւնը կ'ընդունի Տ. Ստեփաննոս կոչումով ու կ'երթայ հոգեւոր հովիտութիւն ընելու գաւառի հայաբնակ աւանի մը մէջ: Իսկ կը թուի, թէ ան շատ դժուար չէ իր այս վիճակէն ալ, զոր կը նկատէ գրկանք մը՝ թիֆլիսի իրեն ծանօթ ընկերային շրջանակէ հեռու ննուում: Վրացերէն մէկ երգի մէջ, իր խօսքը իր հովանաւորին ուղղելով կ'ըսէ.

«Իմ վարանից, ժողովուրդից գրկեցիր,
ձամբուս հետու, օտար երկիր գցեցիր,
Հասակս նմրեցիր, մէջքս նրկեցիր,
Ահար դուն յի՞ս քոյրս քամն անողը»:

Կը թուի, թէ քահանայալէն ետքն ալ Սայաթ-Նովան որոշումի կու գայ իր կեանքի մնացած օրերը նուիրել՝ վերջնական ձեւով գրի վերածելու ինչ որ տարիներով երգած հաւաքած էր: Սիրաբ միշտ գիրի, դայամի ու տափթարի վրայ է: Եւ ո՛ւր պիտի կարենար իրագործել այդ աշխատանքը, քան խաղաղ վանքի մը մենիկ խուցին մէջ.

«Աշխարհքս քոնն ըլի՛ ի՞նչ պիտի տանի՛
Աստուած սիրէ, հոգի սիրէ, Խա՛ր սիրէ»:

Կը թուի նաեւ, թէ իր հասուն տարիքին վանք քաշուելու այս գնդատնի փախաբքը կը փութացնէ իր սիրախանդ կենդ՝ Մարմարայի՝ վարձատրուած: Եւ նախկին աւուղը քաջութեամբ կ'որոշէ.

«Կու հագմիմ մագեղեմ, կու հագմիմ շայրն,
Կ'երթամ ման կու գամ վանքիքը մէ-մէկ»:

Ու Սայաթ-Նովան 56 տարեկանին՝ կը թողու իր չորս զաւակները, որոնք, անշուշտ, հասուն ալ են ինքնաբաւ ըլլալու համար, ու թիֆլիսէն կ'երթայ կը հաստատուի ժամանակի նշանաւոր ուսման ու գրչութեան արւեստի կեդրոն Հաղթաւ վանքը, Վրաստանի սահմանակից հայաշխարհին մէջ:

Ուսումնասիրողներ մեղադրանքով կ'ակնարկեն, թէ սխալ մըն էր, մանաւանդ հայ րանստեղծութեան համար մեծ ձեռքուտք մը, որ Սայաթ-Նովան զնաց իր տաղանդը թողելու վանքի մէջ, հոգ չէ թէ իր այդ արարքը համապատասխան ըլլար իր ժամանակներու բժշկութեան, կամ իր կեանքի անտեսական պայմաններուն — կարծէք թէ իրեն ժամանակակից բայց զինքը շահակցող, իրեն հանդէպ անհոգածու վարուող, իր տաղանդը արհամարհող կամ շահագործող մարդոց գոյնացնելը ըլլա՞ր երբեք աշուղին այդ հեռացումը...:

Մենք պէտք չէ այնքան դիւրաւ մեղադրենք աւուղը: Ան վանք չգնաց

իր արուեստը մոխիրներու տակ թաղելու: Ընդհակառակն, թերևս վանքի այդ ուսումնական ու խաղաղ միջավայրին մէջն էր, որ աշուղը իր գրիչն ու տափթարը առաւ ու վերջնական ձեւով սնման գիրք վերածեց իր ցիրուցան երգերը, ինքզինք տալով այս անգամ բոլոր զարեւու բոլոր սերունդներուն: Գիտենք նաեւ, թէ Սայաթ-Նովան Հաղբասի մէջ շարունակեց ո՛չ միայն իր նախկին երգածները կարգի դնել ու գրի վերածել, այլ նաեւ նոր երգեր յորհնել: Ան իր քամանչան վար շնչեց ձեռքէն: Դեռ անով է, որ կ'երգէ.

«Մէջլիսներու իսպըն դուն իս,
Վանքերումքն՝ տաղըն դուն իսկ,
Սայաթ-Նովու բաղըն դուն իս»:

Երբեմն կ'անդրադառնայ վանական վիճակի իր զրկանքներուն.

«Հաղբասի լուսարար Սայաթ-Նովէն իմ,
Մէ կանթեղիս վառելու ձէք չունիմ»:

Կը գանդաստի ալ թէ չի կրնար վանքին մէջ նախկին թափով արտադրել.

«Վալսամըն գիրս չի գըրում՝ սէ չորացած քանաքի նման,
Խօսկիրս սէ-սէկ չի ասուի՝ իմաստունքի բնաքի նըման,
Մէջըն չիմ կանայի(*) մոնի՝ ծովի ծածկած վանքի նըման.
Խաստովանելուս հեռացաւ, մեղքի համա իմ լալի»:

Վանքի երգեր ունի նոյնիսկ, որոնց մէջ զգուհութիւն կը յայտնէ իր վե՛ճակէն.

«Իմ խեղճ գըլուխ, քեզիդ էս ի՞նչ պատահեց,
Ողջ աշխարհում ծաղր ու տրեւոգ քեզ պատկց-
Գէ՛, էլ ես ո՞ւմ մեղք դրնեմ, ինչի՞ց էլաւ,
Եզ ամենը հենց իմ էս խելքից էլաւ»:

«Թագվորաց կամբով մէջլիս կանչուողիս,
Կարմիր կապան արեւով փառեով հազնողիս՝
Արեղայի սեւ քիւրքը բաժին էլաւ»:

Դրուազ մը հասած է մեզի, որով վրացի երիտասարդ վանական մը կը պատ-
մէ, թէ ինչ օր մը Հաղբաստ հանդիպելուն՝ կը լսէ ծերունի արեղայ մը, որ
հետեւեալը կ'երգէր.

«Փրէնճ էի ես, գերի դառնալս ինչի՞ս էր,
Ես ազատ մարդ՝ արեղայ դառնալս ինչի՞ս էր»:

Այսպէս լսելուն՝ երիտասարդ արեղան կը հարցնէ, թէ ո՞վ է կանա-
քէն գանդաստող այդ ծերունի արեղան.

(*) Բնագիրներ «կանայի» բառը ունին. «չի՞մ կանայ»՝ «չե՞մ կրնար» իմաստով պետք է ըլլայ ֆիշթը:

— Ես դժբախտ Սայաթ-Նովան եմ, — կը պատասխանէ ծերունին, — եթէ լսել ես՝ ի հարկէ :

— Ի՞նչպէս թէ չեմ լսած, — կ'ըսէ հիւր արեղան, — քու համբաւը աշխարհիս տարածուած է... Լաւ է որ շեռ դադարած երգելի է :

— Իմ վանահայրս ալ նոյնը կ'ըսէ ինձ, — կը պատասխանէ Սայաթ-Նովան, — որքան ատեն որ այս լարերը չեն կտրուած եւ իմ սաղին վրան կը մնան՝ ես աննոցմէ ձեռք քաշողը չեմ : Որովհետեւ, զիս արեղայ ձեռնադրելու ժամանակ, այս լարերը դրպա՛նս էին մնացեր... Եւ հետո միասին օրհնուեր... ուստի այժմ ես կը նուազեմ օրհնուա՛ծ լարերով... :

Աւանդութեամբ մեղի հասած ուրիշ գրուող մը կը պատմէ, թէ օր մը Սայաթ-Նովան կը լսէ, թէ նոր աշուղ մը ժամաներ է Քիֆլիս ու րաս կը բռնէ այնտեղի աշուղներուն հետ ու կը յաղթէ բոլորին... Մերունի աշուղը չի կրնար դիմադրել իր ներքին մղումին, զիշերով կ'ելլէ, վանականի իր զգեստները կը փոխէ, ճամբայ կ'իյնայ, կու գայ Քիֆլիս, կը կանգնի այդ նորեկ աշուղին դէմ, կը մրցի հետը, քամանչան կը խլէ անոր ձեռքէն, կը փրկէ հայ աշուղութեան պատիւը ու փառքը : Քողարքին մէջ լուրը կը տարածուի, ժողովուրդը կը խոնուի աշուղին շուրջ : Համբաւը կը հասնի Քիֆլիսի մէջ Հաղթատ վանքի առաջնորդ եպիսկոպոսին, որ անձամբ կու գայ Սայաթ-Նովան կը դռնէ իր հին Համլարար թաղին մէջ, աշուղներու հետ մրցանքի նստած՝ կիսամութ կամարի մը տակ : Զայն կ'առաջնորդէ ետ իր վանքը, ուր եւ կը խոստովանի Սայաթ, կը փակուի իր հոգեկան աշխարհին :

Վանք առանձնանալէն քառորդ դար մը ետքն է միայն, որ մենք Սայաթ-Նովան կը տեսնենք վերջին անգամ հայ պատմութեան մէջ, իր նահատակութեան ողբերգութեան օրին : Իր կեանքը պիտի պսակուէր հերոսներու մահով : 1795-ին է, երբ գաթան Աղա Մահմէտ Խան Վրաստան կ'արշաւէ, ա՛ն ու սարսափ սփռելով երկրի վրայ, Սայաթ-Նովան Հաղթատէն Քիֆլիս կը թռի անգամ մը եւս, բայց այս անգամ՝ ո՛չ իրբու աշուղ, այլ իրբու սըր-տակեղեք հայր՝ տէր կանգնելու համար իր զուակներուն... :

Թէեւ կը յաջողի իր զուակները ապահով տեղ դրկել, բայց ինք դեռ Քիֆլիսէն չհեռացած՝ վրայ կը հասնի արշաւող բանակը : Աւերուող թաղերէն փախուստ տալով՝ Սայաթ-Նովան կ'ապաստանի քաղաքի հայոց եկեղեցին : Կու գան զինուորները, կ'առաջարկեն աշուղին, որ դուրս գայ եկեղեցիէն եւ ուրանայ իր կրօնքը, որպէսզի իրեն շնորհուի իր կեանքը : Բայց հայ զրիստոնեայ ծնած եւ մինչեւ իր 83 տարիքին հայ զրիստոնեայ ապրած աշուղը՝ մահուան սուրբին դիմաց կանգնած հերոս նահատակի պէս կ'ըսէ .

«Զըխմամաւ քիլիսաւում,
Տէօմէնէմ իսաւում» :

— Զեմ ելլեր եկեղեցիէն, չեմ ուրանար Յիսուսը :
Ու բիրտ զինուորի սուրբին տակ ան կ'իյնայ նահատակ՝ իր հայրերու հոգիի սան մէջ :

Սարսափի փոթորիկը անցնելէն ետքը, ժողովուրդը աշուղին արիւնոտ մարմինը կը վերցնէ ու կը թաղէ Ս. Գէորգ եկեղեցիի դրան առջեւ :

Դար մը եւ աւելի ետքն է որ, ծննդեան 200-ամեակին առիթով, 1914-ին, Հայ Գրականութեան Ընկերութիւնը մարմարեայ յուշարձան մը պիտի կանգնէր աշուղներու արքայ Սայաթ-Նովայի անմահ յիշատակին :

2.— ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՍԱՅԱԾ - ՆՈՎԱՆ

Համամարդկային արժէք մը կայ Սայաթ-Նովայի մէջ, զոր մենք պէտք է նշենք յարգանքով: Սայաթ-Նովան միայն Հայութեան չի պատկանիր, այլևս կը պատկանի ամբողջ մարդկութեան:

Հայ ժողովուրդի միջպագային արժէքով հանճարներէն մէկն է Սայաթ-Նովան: Ան ո՛չ միայն Հայութեան սիրոց իր հողոտն տաք շունչը, այլևս իրմով մարդկութիւնը բաժնեկից ըրաւ Հայութեան հոգիին:

Հայ ժողովուրդի սիրոյ «Նրդ-Երզոցն» է Սայաթ-Նովան: Ան Հայութեան մէկ ընծա՛ն է մարդկութեան:

Ի՞նչ կ'ըլլար արդեօք, եթէ Սայաթ-Նովան երբեք ստրած ու երգած չըլլար, կամ սարկիւն ու երգիւն էսքը՝ իր տափթարը ի սպառ կորուսած ըլլա՞ր: Երգը մտքուած...

Մեզի պակասած պիտի չըլլար միայն աշուղի մը գեղեցիկ գանձը, այլ մեզի պակասած պիտի չըլլար բո՛ւն իսկ աշուղական գրականութիւնը, ինչպէս մեզի կը պակսի հիմա Սայաթ-Նովայի մատներուն տակ թրթռացող քա՛մանչան:

Որովհետեւ Սայաթ-Նովան է մեր մէջ աշուղ-տիպարը անձնաւորող եւ այդ անձնաւորումով հայ հանճարի անմահութիւնը հռչակող երգիչը:

Ինքը բանաստեղծի համատուփեամբ կ'ըսէ. եթէ ինք մեռնի աշխարհին բան չի պակսիր, ո՛չ մէջլիս կը պակսի, ո՛չ երգ, եթէ կայ բան մը, որ պիտի պակսի՝ զինք սիրողին է միայն որ ինք պիտի պակսի:

«Քանի կուզէ քամին տանէ՝
Ծովեմէն աւազ չի պակսի,
Թէգուզ քլիմ, քէգուզ չըլիմ՝
Մէջլիսներուն սազ չի պակսի,
Թէ կու պակսիմ՝ քի՛ց կու պակսիմ,
Աշխարհիս մէ՛ մազ չի պակսի»:

Եւ հիմա ալ միայն մեզի՛ է որ կը պակսի ան, զինք ճանչցողներուն ու սիրողներուն: Որովհետեւ ինք մէկ հարազատ ծաղկումն է Հայ հոգիին, որ երգ եւ ուրախութիւն սիրող եւ սիրոյ վերանորոգիչ ուժին հաւատացող ժողովուրդին եզած է միշտ, կեանքի հանդէպ չէն ու գրական լուստես հայեացքով, հին-հին դարերու Գողթան Գուսաններու օրերէն ի վեր:

Հայու բնութեան մէկ հիւսքն ու շաղախն է գուսանեղբայրութիւնը:

Ու երբ հայութիւնը բանաստեղծական այդ ցեղային կենսունակութիւնը դուրս է անդամ մը եւս բոցավառուած Սայաթ-Նովայով՝ զայն սիրած է ոմբողջ հողիով, անոր մէջ ճանչցած իր հարազատ ինքնութիւնը, Հայրենի լեռներէն իջնող զով շունչի նման՝ զայն իր էութեան մէջ ընդունած, եւ այնուհետեւ իր բանաստեղծութեան տուած նո՛ր մէկ ուղղութիւն — անկեղծ համարձակութեամբ արտայայտութիւնը անհատ մարդու զգայնութեանց՝ ուրախ քիսած պարզ սողերու բիւրեղ բաժակներուն մէջ:

Ահա այս կատարումով է, որ Սայաթ-Նովան սկիզբ մըն է արդի հայ բանաստեղծութեան, ջնարեղական նոր զպրոցի մը:

Սայաթ-Նովան չմնայ միայն ժէ. վարուն մէջ, կամ չպատկանի միայն Թիֆլիսի ու Երևանի հայութեան, այլ դայ մեր դարերուն, ու պատկանի

բոլոր հայերուն, իր հարազատ ժողովուրդի բոլոր սերունդներուն, ու շատ
բունակէ դեռ երգել մեզի, Յովհաննէս Շիրազի տողերով.

«Դու սիրտ-սիրտ ու դարձ-դար սիրոյ քընար Սայաթ-Նովա,
Դու սիրոյ պէս յաւերժախօս Հայոց քընար Սայաթ-Նովա,
Դու մշտաբաւիս սիրոյ ազբիւր սալերի-սար Սայաթ-Նովա»:

Մենք կը հաւատանք, թէ Սայաթ-Նովան իր մահէն ետքն ալ շարունակ-
կած է իր երգերը տալ, ու ներկայիս ալ կը շարունակէ տալ իր երգերը ազ-
գին եւ աշխարհին, եթէ մեր օրերուն Շարա Տալիան մը, կամ Շարլ Ազ-
նաւուր մըն է, որ կը շարունակէ նոյն երգերը — աւելի բախտաւոր, քանի
որ անոնց կենդանի ձայնը կ'արձանագրուի նաեւ ձայներիդի վրայ, եւ ուստի
սերունդներ պիտի կարենան զանոնք լսել իրենց հնչիւն ձայնովը — վաղը եւ
դեռ յաջորդ սերունդներու մէջ պիտի զան ուրիշներ հնչեցնելու հայու օրոյ
երգը աշխարհին:

Սայաթ-Նովայի ձայնը կը հնչէ այսօր ու պիտի հնչէ վաղը զինք եր-
բոց նոք սերունդներու ձայնին մէջ:

Կ'ըսուի երբեմն, իբրեւ յարգանք անմահ հոգիներուն, թէ որքան ա-
ռեն որ ազրի հայութիւնը՝ պիտի ազրի այս գիտնականը, կամ այս բա-
նաստեղծը, այս արուեստագէտը, այս երգիչը, եւ անշուշտ այս պարագա-
յին՝ Սայաթ-Նովան... Աւելի ճիշդ պիտի ըլլար սակայն այդ բոլորին հա-
կառակը ըսել, Մանուսնդ Սայաթ-Նովայի պարագային՝ բացարձակ է այս
չրջուած ճշմարտութիւնը, թէ

— Որքան ազրի Սայաթ-Նովան, որքան հնչեն անոր երգերը՝ հետը
պիտի ազրի Հայութիւնը, յաւերժական հանճարը Հայութեան, միշտ ըմ-
պելով անոր անմահական գինիով լիցուն Ոսկի Թասէն:

(Շար. 3 եւ վերջ)

Անթիլիսս

Բ. Ե.



Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

ԸՆԹԱԳԻԿ ԲԱՆԱՎԷՆԵՐ
Ազգային Հարցերի Շուրջ

Գ.

Մոսկովեան «Վոպրոսի Իստորիի»
ամսագրի նախաձեռնած բանավէճին
Անդրկովկասից եւ ընդմին Հայաստանից
ուղղակի մասնակցողներ չեղան։
Բայց Անդրկովկասից դուրս ապրող ու
աշխատող հայ հեղինակներ լայնօրէն
մասնակցութիւն ունեցան. հրատարակ-
ւած 15 մեծ յօդուածներից չորսը, ինչ-
պէս արդէն յիշուել է, նրանց գրչին է
պատկանում։ Այս ուսումնասիրութեան
մէջ այդ հեղինակներին առանձին տեղ
յատկացնելը միանգամայն օրինաշարի է։
Նախ՝ հայութիւնից բխած կամ հայու-
թեանը պատկանող բոլոր, մանաւանդ
մտաւոր ուժերի հաշուառումն ու բնու-
թաղարմը տարրական պահանջ է հենց
գիտա-մատենագրական տեսակէտից։
Երկրորդ՝ յիշեալ հեղինակները միայն
մեկականօրէն՝ անուն-ազգանունով չեն
հայ, այլ, դատելով մի շարք տուեալնե-
րից, իրենց աշխարհաճանայման այլ եւ
այլ բաղադրիչներով, եւ վերջապէս՝ ա-
ռաջին անգամը չէ, որ ազգային հարցե-
րի շուրջ հայ հեղինակները հանդէս են
բերում մոսկովեան կենտրոնական մամու-

լի էջերում ու ամէն անգամ աւելի կամ
պակաս չափով նկատուելի է մի ուշադ-
րաւ պարագայ. նրանցից շատ քչերն են
բացայայտօրէն ու անվերադարձ կերպով
կանգնել նիւթիստական դիրքերի վրայ,
իսկ մեծ մասամբ յօդուածադիրները
միշտ էլ ցուցաբերել են դիւստամտու-
թեան մի ինչ-որ «հոգեպահուստ» վերա-
պահութիւն։ Այսինքն, որքան էլ նրանք
կամայ-ակամայ խառնուել են ընդհա-
նուր պղտոր եւ սրբնթաց հոսանքին,
այնուամենայնիւ մի ինչ-որ տեղ գրեւ-
տարիլ են արհարհիւ օրեւէ թումբ կանգ-
նեցնելու եւ նրան յենուելու տրամադրու-
թիւն։ Սա միայն տպաւորութիւն չէ, այլ
հայ հեղինակների յօդուածները ուշադ-
րութեամբ կարգալու եւ նրանց դրոյթ-
ները ուրիշների յայտնած տեսակէտների
հետ ընդհանուր դժերով համեմատելու
արդիւնք։ Այսպէս թէ այնպէս, մենք
նպատակաւորմար ենք դտնում այստեղ
ներկայացնել մոսկովեան բանավէճի հայ
մասնակիցների մտքերը։
Բանավէճի հոսանքուն հրահրողնե-
րից ու բուն յորձանուստւմ գտնուողնե-
րից մէկը եղաւ Սուբէն Տիգրանի Ղալ-
թաղչեանը։ Նա պատմարան է, Մոս-

կուսյի պետական համալսարանի դոցենտ: Նրա յօդուածը կրում է « Ազգ » հասկացութեան հարցի շուրջ վերնագրերը (1966 թ., № 6, 20 էջ): Պէտք է ասել, որ Ղալթաղչեանի յօդուածը ցանկալի աստիճանի խիտ բովանդակութիւն չունի, չափից աւելի մէջբերումներ կան «մարքսիզմ - լենինիզմի կլասիկներէց», եզրայանգումները առհասարակ արժատական եւ կարուկ են՝ առանց համապատասխան փաստանիւթի: Բայց, հակառակ դրան, Ղալթաղչեանի յայտնած մտքերը միւս հեղինակների յօդուածներում ամէնից շատ են վկայակոչւում, ընդունւում կամ մերժւում: Ղալթաղչեանն իր յօդուածն սկսում է այսպէս. «20-րդ դարի համար բնորոշ է ազգերի, նրանց մեկտնջման ուղիների քաղաքականութիւնն ու փոխյարաբերութիւնների քարտուրսը: Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում հարիւր միլիոնաւոր մարդկանց ազգային ինքնագիտակցութեան անհրաժեշտ քայլ է տեղի ունենում: Ինքնուրույն ազգային զարգացման շղթան բաց է նախկինում կախնալ տասնակի ժողովուրդների առջև: Սոցիալիզմի երկրներում ազգերը դարձել կամ դառնում են սոցիալիստական»: Այնուհետեւ նա ընդգծում է խորհրդային պայմաններում ստեղծուած նոր իրադրութեան համաձայն ազգային հարցերը տեսականորէն մշակելու անհրաժեշտութիւնը, որովհետեւ զորեւէ սղջալին խնդիր լուծելն անկարելի է, առանց ազգի էութիւնը ըմբռնելու: Ղալթաղչեանը չի ընդունում ազգի սահմանումը որոշելու ընթացիկ ձեւական - տրամաբանական մեթոդները, զանազան ազիւտակներ կազմելու, ուսումնասիրւող երեւոյթի օրինակները համեմատելու, ընդհանրացմանը հակասող դէպքերն ընտրելու ուղին, որովհետեւ երեւոյթը կազմախօսօրէն մասնատելով, կենդանի կապերը քանդելով եւ տուհալ երեւոյթի կենսական կապերի հիմքը չզարգեցնելով, — նրա կարծիքով, — անկարելի է դառնում բուն էութեանը հասնելը:

Ղալթաղչեանը սկզբում եւ ամէնից շատ դրադուում է ազգերի տեսակները, նրանց ներքին սոցիալ-դասակարգային առանձնապատկութիւնները որոշելու գործով, եզրակացնելով, թէ «տնտեսապէս եւ քաղաքականապէս կենտրոնացուած ազգերը ծագում են կապիտալիստական յարաբերութիւնների երեւան դալու հետ, բայց կապիտալիզմի հաստատումից առաջ»: Ղալթաղչեանը բուն լեզուով հանդէս է գալիս ազգի բնութագրման հողերանական դպրոցների ու նրանց ներկայացուցիչների դէմ, յետեւելով մարքսիզմ-լենինիզմի «հարուստ ժառանգութեան» վրայ: Այդ մտայնութիւնը արտացոլում է եւ առհասարակ ազգի զարթաղչեանական բնորոշման մէջ: Նա գրում է. «Այսպիսով, ազգերի, այսինքն ունէ տեսակի ազգի, բնութագրման համար առհասարակ բաւական է յիշատակել ամէնից բնդհանուր յատկանիշները՝ կենսի տնտեսական հիմքը, հողային ամբողջականութիւնը, լեզուի միատարրութիւնը եւ լեզուական պատկանելիութեան դիտակցութիւնը: Այդ յատկանիշների կոնկրետացումը եւ դրանք որոշելը, նոր յատկանիշներով լրացնելը հրահարուր կը դառնան ազգերի՝ ըստ նրանց դանազան սոցիալ-քաղաքական տեսակների բնութագրման ժամանակ: Ազգի տեսակները ճիշդ որոշելու համար, իր հերթին անհրաժեշտ է ելնել այս կամ այն ազգը կազմող դասակարգների սոցիալ-քաղաքական ճիշդ վերլուծումից: Արդի դարաշրջանում կարելի է տարբերել կապիտալիստական հասարակութեան ազգերը, կազմուած հակադիր տնտեսական շահեր ունեցող հակամարտ դասակարգերից, սոցիալիստական ազգերը, կազմուած բարեկամ եւ գնալով սոցիալապէս աւելի միատարր դարձող դասակարգերից, վերջապէս՝ անցման սոցիալական տեսակի ազգերը, որոնց դիմադիմը կը ձեւաւորուի նայած այն բանին, թէ արդեօք նրանք կ'ընթանան կապիտալիստական կամ ոչ-կապիտալիստական ուղիով»: Այդ հիման վրայ էլ բնութագրում է այսպէս առած սոցիալ-

լիտտական ազգը. «Այսպիսով, սոցիալիստական ազգը սոցիալիզմի յաղթանակի հետևանքով ձևաւորուած մարդկանց ընդհանրութիւն է, որն ունի միասնական լեզու, տեքստորիա, տնտեսական շահերի, պետութեան, մշակոյթի, հոգեկան դիմազօծի ընդհանրութիւն, միահիւսուած միջազգայնական աշխարհաւայելաբան հետ, տնտեսական, մշակութային եւ սոցիալ-քաղաքական կեանքի միջազգայնական ընդհանրութիւնների անող գծերի հետ»: Ինչպէս տեսնուած ենք, եթէ ընդհանրապէս ազգի յատկանիշների մաս, սոցիալիստական ազգի յատկանիշները, ընդհակառակն, թուարկուած են առաւելագոյն ճիշդագրութեանով, թէ՛.՝ դարձեալ բաւական սեղմ ձեւով: Այդ եղբակացութիւններն, ի հարկէ, հենց այնպէս պարտաստի վիճակում չեն հրամցում. Դալթոնի ջանքով է իր տեսակէտները հիմնադրել իւրովի: Այստեղ, բնականաբար, հարկ չկայ այդքան հեռուներ դնալու եւ մանրամասնութիւնների մէջ խճճուելու:

Մկրտիչ Յովհաննէսի Մնացականեանը պատմարան է եւ Մոսկուայի մարզի Օրբիտովո - Չուլիովոյի մանկավարժական ինստիտուտի աւագ դաստիս, մասնագիտացած «ԽՄՄ աշգային յարաբերութիւնների պատմութեան» դոկ: Եւ յատկապէս քննութեան է առնում «Ազգը եւ ազգային պետականութիւնը» (1966 թ., № 9, 10 էջ): Մնացականեանը նախ «Երկրի պետական կեանքում նշանակալից իրադարձութիւն» է համարում մոսկովեան ամսադրի բացած բանավէճը ու ապա աստիճանաբար ծաւալում իր մտածումները: Եւ գրում է.

«Ո՛չ տեսութեան մէջ, ոչ էլ գործնականում կասկածներ չի յարուցում այն հարցը, որ որոշակի կապ գոյութիւն ունի մարդկանց էապակեան ու ազգային ընդհանրութեան միջեւ, ազգի ու պետութեան միջեւ: Անվիճելի է եւ այն, որ պետականութեան գործօնը որոշակի դեր է խաղում ազգերի կեանքում եւ նրանց փոխադարձ յարաբերութիւնների

մէջ: Ամբողջ հարցն այն է, թէ ինչպիսի՞ն է այդ կապի բնույթը. ինչպիսի՞ն է պետականութեան գործօնի ազդեցութիւնը ազգերի ամրապնդման ու նրանց զարգացման ընթացքի վրայ եւ, վերջապէս, ի՞նչ տեղ է բռնում պետականութեան կատեգորիան ազգի տեսութեան մէջ»:

Մնացականեանը վկայակոչումներ է անում Մարքսից ու Լենինից, Էւրոպական ազգերի պատմութիւնից, այսօրուայ աշխարհի իրադարձութիւններից, եւ գրում հետեւեալը, թէ՛.

«Այսպիսով, կարելի է եզրակացնել, Վ. Ի. Լենինը, ինչպէս եւ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, ազգային պետութիւնը դիտում էր, առաջին, որպէս կապիտալիստական տնտեսական յարաբերութիւնների բնականոն զարգացման, ներքին տնտեսական կապերի զարգացման գործում, այսինքն՝ որպէս բարձրագույն հասարակութեան ազգերի ձեւաւորման կարեւոր պայման, եւ երկրորդ՝ որպէս ազգի բազմազանացիչ տարր, նրա յատկանիշ: Իսկապէս, ազգային պետութիւնների դերը ազգերի կեանքում բացառիկ կերպով մեծ է»:

Այնուհետեւ Մնացականեանն ասում է.

«Պատմական իրադարձութիւնների զարգացման վերլուծութիւնը, սկսած կապիտալիզմի ծագման ժամանակաշրջանից մինչեւ մեր օրերը, թայլ է տալիս հաստատելու, որ աշխարհում ոչ մի ազգ երկար ժամանակով չի գրկուել իր պետականութիւնից: Պետականութիւն ունեցած եւ յարձակողական պատերազմների հետեւանքով այդ պետականութիւնը կորցրած ազգերը ազգային-ազատագրական յամառ պայքար են մղել՝ իրենց պետականութիւնը վերականգնելու նպատակով: Ձի կարելի աշխարհը անել այն պարագան, որ կապիտալիզմի պայմաններում հնարաւոր են ազգերի ձեւաւորման գեղեցիկ՝ մինչեւ նրանց պետականութեան ձեւաւորումը: Սակայն, նախ, դրանք բացառիկ դեպքեր են և բոս Վ. Ի. Լենինի՝ ոչ տիպական: Եւ երկրորդ, ինչպէս ցոյց է տալիս պատմու-

քեան վերադր, այդ ազգերի ձեռնարկման ընթացքը, ըստ էության, հանդիսանում է նրանց ազգային-ազատագրական պայքարի ընթացք՝ յանուն իրենց ազգային պետության ստեղծման»։ Հետևապէս՝ «Բացառապէս է մի անվիճելի Ֆլուորտութիւն. ոչ մի ազգ իր երկարատեւ պատմական զարգացման ընթացքում չի խուսափում իր ինքնուրոյն պետական կեանքի կարեւորագոյն պատմական փուլից։ Ազգային պետականութիւնը՝ դա ոչ թէ տարգապէս հսկայական նշանակալիւն ունեցող յառաջիմական գործունէ, որը ազդում է ազգային կեանքի վրայ, ազգային ամբողջմանը նպաստող պայման։ Դա ազգի կարեւոր բաղադրիչ տարրն է, որը բնութագրում է նրա էութիւնը, նրա ներքին յատկութիւնը։ Այս եզրակացութիւնը առանձնապէս ակնբացաւ կը դառնայ, եթէ մենք դիմենք ազգային պետականութեան կառուցման ու զարգացման փորձին՝ սոցիալիզմի պայմաններում։ Սոցիալիստական յեղափոխութեան յաղթանակը հասցնում է ազգային ճնշման ու ազգային առանձնաշնորհումների բոլոր ձևերի ոչնչացման, բոլոր ազգերի ու ազգութիւնների լրիւ հաւասարութեան հաստատման՝ սոցիալիզմի կառուցման ընթացքում։ Դա նշանակում է բոլոր ազգերին հաւասար իրարումներ սոցիալիզմի բոլոր բնագաւառներում եւ առաջին հերթին ազգային պետականութիւն կառուցելու մէջ։ Այսպէս էր հասկանում Վ. Ի. Լենինը ազգային իրաւահասարակութիւնը»։ Այս առթիւ Մնացականեանը տողատակին բացատրում է, թէ «Սոցիալիզմի պայմաններում ազգային պետականութեան խնդիրը, ըստ էության, նախապէս նշուած ազգերի պետականութեան խնդիրն է բազմազգ պետութիւններում։ ԽՍՀՄ-ում դա խորհրդային ազգային պետականութեան՝ դաշնակցութեան եւ ինքնավարութեան վրայ հիմնուած զանազան ձևերի ծագման, զարգացման եւ ազգային խնդիրն է»։

Մնացականեանը այնուհետեւ բանազիւնում է Պ. Գ. Սեմենովի հետ՝ ազ-

գային պետականութեան վերաբերեալ նրա արտայայտած ժխտական վերաբերմունքի առթիւ, եզրակացնելով, թէ «Սոցիալիզմի պայմաններում պետականութիւնն ու պետական սահմանները ժրտելը, ըստ էության, ազգերի ինքնուրոյն իրաւունքը կը վերածէր կեղծիքի», թէ «ազգային պետականութեան դերի նստեցումը առհասարակ և խորհրդայիններ մասնաւորապէս՝ չի կարող ծառայել ԽՍՀՄ ժողովուրդների բարեկամութեան հետագայ ամրապնդման գործին»։

Մնացականեանը ընդամենն անդրադառնում է եւ արդէ արտասահմանեան նորակազմ ազգերի կեանքին ու ընդգծում.

«Նկատում է մի հետաքրքիր երեւոյթ. այդ նոր ազգերի մօտ տնտեսական յատկանիշը արտայայտուած է, որպէս կանոն, թոյլ, իսկ միւս յատկանիշները՝ պետականութիւն, ազգային ինքնագիտակցութիւն, ազատագրական պայքարի աւանդույթներ, խիտ զարգացում են ստացել։ ... Եւ եթէ պատմական նախորդ դարաշրջաններում ազգային անբարեկամ ընթացքը կարող էր զարգանալ ազգային պետականութեան բացակայութեամբ, ապա այժմ նոյն ընթացքը տեղի է ունենում ընդհանուր լիզուի եւ ներքին զարգացած տնտեսական փոխակալութեան բացակայութեամբ»։

Յօդուածագիրը այնուհետեւ շեշտում է, որ «Ս. Ս. Գալպաչեանը ներկայ բանավեճի մասնակիցներից առաջինն է, որ իրաւացիօրէն ազգային պետականութիւնը մտցնում է ազգի չորս էական յատկանիշների շարքը, թէեւ չի տալիս այդ հստակացութեան սահմանումը»։

Մնացականեանը եւս իր հերթին տալիս է ազգի ընդհանուր եւ մասնակի գոյնիստականի բնութագրումը։ Այսպէս, նա գրում է.

«Ազգը մարդկանց պատմականօրէն ձեռնարկուած կայուն ընդհանրութիւն է, որոնք ունեն ընդհանուր լիզու, ընդհանուր տերիտորիա, ընդհանուր տնտե-

սական կապեր եւ ընդհանուր պետական կառուցումով» :

Նա ընդունում է ազգերի երեք տեսակ՝ կապիտալիստական հասարակութեան ազգեր, սոցիալիստական եւ կոմունիստական ազգեր, ընդամենն տալով սոցիալիստական ազգի իր սահմանումը :

«Սոցիալիստական ազգը մարդկանց պատմական ընդհանրություն է, ծագած իր պետականութեան շրջանակում՝ յեզուի, տերիտորիայի, սոցիալ-տնտեսական, գաղափարական-ժառանգական եւ մշակութային կեանքի ընդհանրութեան հիմամբ վրայ» :

Նիկոլայ Աւետի Թաւաքալեանը պատմորան է, հիւսիս-կովկասեան Չեչենա-Դնդուշական ինքնավար հանրապետութեան մայրաքաղաք Գրոզնու երկու բարձրագոյն ուսումնական հաստատութիւններից մէկի՝ Մանկավարժական ինստիտուտի գիտական աշխատանքի գծով փոխ-տնօրէն, մասնագիտացած «ԽՂՄ ազգային յարաբերութիւնների պատմութեան քննադատում» : Նրա « Ազգ» հասկացութեան մի քանի հարցեր» յօդուածում (1967 թ., № 2, 9 էջ) շօշափում են մի շարք յարակից նիւթեր, Թաւաքալեանը ազգի չորս յատկանիշներն, ընդհանրապէս վերցրած, չի միճարկում, թայց գիտակցօրէն կենտրոնանում ու չեչտում է որոշ առաջնակարգ հանդամանքներ : Նա ողջունում է այն, որ Ռուսաստան ու Սեբրդիներ յատուկ ուշադրութիւն են դարձրել «էթնիկական պատկանելիութեան ինքնագիտակցութեան» վրայ, իսկ Ջունուսովը առաջին դիժ է հանել այդ կէտը, ուստի եւ ամէնից առջ գրադուում է ազգային գիտակցութեան հարցով :

Մէջբերենք Թաւաքալեանի այդ տողերը :

«Սակայն կարեւոր է ընդգծել, որ էթնիկական պատկանելիութեան ինքնագիտակցութիւնը ազգի յատկանիշի ուժ է ձեռք բերում միայն միւս յատկանիշների գուգակցումով, փոխներգործութեամբ, այսինքն միայն այն դէպ-

քում, երբ տուեալ ազգային-էթնիկական ընդհանրութիւնը ամբողջովին կամ իր մեշոգ մեծամասնութեամբ անձնաորում է քայքայ չորս յատկանիշների ամբողջութիւնը : Միայն այն ժամանակ է որ այդ ընդհանրութեան՝ այլազգի միջավայրում ապրող առանձին խմբերը կարող են համարուել իրապէս գոյութիւն ունեցող ազգի մասը, որին պատկանելը նրանք գիտակցում եւ ընդունում են : Իսկ եթէ տուեալ էթնիկական ընդհանրութեան բոլոր մարդիկ, ստեղծուած առարկայական-պատմական պայմանների բերումով, ապրում են ցրուած, առանձին խմբերով այլազգի միջավայրում, ո՛չ ամբողջութեամբ, ոչ էլ մեշոգ համայնութիւն գտնուածով չունենալով բոլոր չորս յատկանիշների գումարը, այսինքն ազգ չեն կազմում, ապա էթնիկական պատկանելիութեան ինքնագիտակցութիւնը չի կարող ազգի յատկանիշ լինել և եիմք չկայ այդ խմբերը համարելու ազգի մաս, թէև նրանք գիտակցում են իրենց ընդհանուր էթնիկական պատկանելիութիւնը : Ցատկանիշներից իրաւաբանականորէն որոշիչ նշանակութիւն ունի «ազգ» հասկացութեան համար, քայց եթէ բոլոր յատկանիշների ծագման, ձեւաւորման պատմութիւնն ու գարգացման հետանկարները հաշուի առնելով որոշեմք նրանց յաջորդականութիւնը, ապա, մեր կարծիքով, առային տեղը պէտք է դնել ոչ թէ «տնտեսական կեանքի ընդհանրութիւնը», ինչպէս որ դա սնում են Պ. Մ. Ռուգաչովն ու Մ. Ա. Սեյրալիմը, այլ՝ շեզուն : Քանզի յեզուն, որպէս ազգի յատկանիշ, մայի, բաւական հասուն եւ կայուն տեսքով ծագում եւ ձեւաւորում է ազգի միւս յատկանիշներից աւելի վաղ : Երկարագ՝ նա աւելի դիմացկուն է եւ պակաս փոփոխական : Երբորդ՝ դա կեանքի, կենցաղի եւ գործունէութեան բոլոր ոլորտներում տրուեալ ազգի մարդկանց փոխադարձ հաղորդակցման ու փոխադարձ կայի, փոխադարձ ընդունման ու փոխադարձ ներքափակման գլխաւոր եւ ամէնից առաջնաւոր միջոցն է : Եւ, վերջապէս,

չորրորդ՝ լեզուն ամենից ցայտում և տիպական յատկանիշն է, որը ամենակներև ձևով տարբերում է մեկ ազգը միևնույնից: Լեզուի այդ բոլոր ատանման յատկութիւնները միայն ամբողջութեան մէջ են թայտ ստացիս նրան լինելու ազգի, բոտ թուարկման, առաջին յատկանիշը: Ազգի բնութագրման մէջ երկրորդ տեղը պիտի է դնել հազային ընդհանրութիւնը: Հենց նա է տնտեսական կեանքի յաւաքի հիմք ծառայում, այլ աչ թէ ընդհակառակն, ինչպէս որ կարծում են Պ. Մ. Ռազաչովն ու Մ. Ա. Սևերդլինը: ... Տեսնալ ազգի մէկ լեզուով խօսող, դարձնով միասնական հողի վրայ ապրող և տնտեսական սերտ թելերով կապուած մարդկանց մտ աճխուստիկիօրէն մըջակուում եւ սերմնից սերունդ է փոխանցւում նաեւ միասնական ազգային բնատրութիւնը եւ էթնիկական պատկանելիութեան համապատասխան ինքնագիտակցութիւնը»:

Այդ եւ միւս նկատառումները շարադրելուց յետոյ Թաւաքալեանը տալիս է ազգի իր ընդարձակածաւալ բնորոշումը՝

«Ազգը մարդկանց՝ կապիտալիզմի ու սոցիալիզմի դարաշրջանում կազմաւորուած բարդ, բարձր զարգացած, միատեսակ սոցիալ-էթնիկական կայուն, դիմադիկ ընդհանրութիւն է, որում միմեանց հետ սերտօրէն կապուած են լեզուի, տրիտորիալի, տնտեսական կեանքի եւ ազգային բնատրութեան, հագնական կերտուածքի օրգանական միասնութեան խոր կապերով, ինչ որ դրսևարում է հանրային կեանքի բոլոր ուղղութիւններում, գերազանցապէս եւ աւելի նկատելի է նիւթական ու հոգեւոր մշակոյթի զանազան տեսակների ու ձևերի մէջ, կենցաղում եւ աւանդոյթներում, բարեխում եւ սովորոյթներում»:

Ինչպէս երևում է, սա արդէն սեղմ, յիշողութեան մէջ ամբողջ ու բոլորին մատչելի բնորոշում չէ, այլ բազմաշատը մասնագիտական մենագրութեան մի տեսակ ծրագրային «կոնսպեկտ»: Թաւաքալեանը իր Հերթին ա-

ռաբկում է Ռոզաչովին եւ Սևերդլինին՝ ազգերի տեսակների հարցում նրանց սուած բացատրութեան առթիւ, եւ ընդունում երկու այսպիսի տեսակ՝ բուրժուական ու սոցիալիստական: Այնուհետեւ մէկ առ մէկ կանգ է առնում զսոցիալիստական ազգերի առանձնայտկութիւններին՝ վրայ:

Փիլիսոփայական պիտուելիւնների դոկտոր, «ազգային հարցի եւ ազգային յարաբերութիւնների տեսական խնդիրների բնագաւառի» մասնագէտ Իվան (Յովհաննէս) Պետրոսի Մամերեանը մտկովեան կենտրոնական կուսակցա-գիտա-զարգացման բնագաւառի մասուլի էջերում շատ տարիներէջ ի վեր ամէնից յաճախ հանդէս եկող հայազգի Հեղինակներից է, իր հայրենակից փիլիսոփայ Յոյակ Ստեփանեանի նման (երկուսն էլ Ջաւախքից): Մամերեանը «Վոյրոսի Իստորիի» ամսագրի բացած բանավէճին մասնակցեց իր «Ազգի մարքա-լինինեան տեսութեան հրատապ հարցերը» վերահարով ետամաս յօդուածով (1967 թ., № 6, 16 էջ): Մամերեանն իր յօդուածն սկսում է Հետեւեալ հաստատումով ու միաժամանակ զանդատով.

«Ազգային յարաբերութիւնների խնդրի հետազոտութեամբ զբաղուող խորհրդային գիտնականների հասցէին իրաւացի գիտողութիւններ արուցին ՍՄԿԿ 23-րդ համագումարի բարձր ամպիտից: Այսպէս, սլատուիրակ Ի. Ի. Բողիլը ասաց. «Զի կարելի բնականն համարել, որ վերջին ժամանակ հրատարակուած ուսումնական գրակաւութեան մէջ տրուում են ազգի զանազան սահմանումներ, իսկ բարձրագոյն ուսումնական հաստատութիւնների համար կազմուած «Մարքալիստական փիլիսոփայութեան հիմնաքննութեան» դասագրքում առհասարակ քաց է թողնուած «Մարքալիստիկան ուսումնէք ազգերի մասին» քաժինը: Բարձրագոյն ուսումնական հաստատութիւններում եւ տիլիկլումներում տուեալ հարցերի դասաւանդումն մէջ թայլ է տրուում խառնաշփոթութիւն»:

Ընդգծենք, որ այդ ուղղութեամբ քա-

նայէ՛ճի մասնակիցներէր շատերն են արտայայտել իրենց դժգոհութիւնը, թէ վերջին ժամանակներս ամէն մարդ իր ձեռով է բնութարարում ազգը:

Մամերեանը հարց է տալիս, թէ քարոզք հարկաւոր են գաղչ հատկացութեան սահմանման արժատական փոփոխութիւններ», եւ պատասխանում, որ՝ ոչ: Նա այդ կապակցութեամբ յիշեցնում է բանավէճից առաջ Նոյն ամսագրում երևացած Ս. Ա. Տոկարեւի յօդուածը, որը, «կամայ-ակամայ ընթերցողին այն եղբակացութեան է բերում, թէ մեզ մօտ չկայ ո՛չ ազգի գիտական տեսութիւն, ոչ էլ «ազգ» հասկացութեան սահմանում»: Մեթոդաբանական տեսակէտից սխալ է համարում այն դրոյթը, թէ ազգի սահմանումը կարող է տեղի ունենալ միայն աշխարհի բոլոր առանձին ազգերի ձեւաւորման ընթացքը անմիջապէս ուսումնասիրելու հետեանքով: Մամերեանը ասում է, թէ Տոկարեւը «առհասարակ անօրինաչափ է համարում որեւէ էքզիկական ընդհանրութիւն, այդ քուլտուրայի, որպէս անգայնամ պարտադիր յատկանիշների ամբողջութիւնը բնութագրելը: Լեզուի ու տերիտորիայի ընդհանրութիւնը նա դասում է ամէնից կարեւոր էքզիկական յատկանիշների շարքին, սակայն յայտարարում է, որ նայնիսկ այդ յատկանիշները բնու պարտադիր չեն»: Նա տարկելով Տոկարեւին՝ ազգային յատկանիշների ժխտման հարցում եւ անդրադառնալով նրա բերած օրինակներին, հողային բնահանրութեան իրաւաման կապակցութեամբ, իր կողմից բացատրում է.

«Բայց այդ վաստերը բնու չեն արացուցում, որ կարող է գոյութիւն ունենալ ռեւ ազգ, առանց հոգային ընդհանրութեան: Եթէ ռեւ ազգ բաժանուում է հոգային առումով, նրա միւսանցից անբաժանուում մասերի մօտ ազգային գծերն ու առանձնայատկութիւնները միանգամից չեն անհետանում: Շատ երկար ժամանակ է հարկաւոր, որպէսզի տեղի ունենայ այս կամ այն ազգի ցր-

ւած մասերի լրիւ ձուլում այն ազգերի հետ, որոնց միջավայրում ապրում են նրանք: Ընդամեն յատուկ նշանակութիւն ունի ազգի այդ տարաբնուում մասերի տւելի կամ պակաս համախօսութեան թիւնը: Այսպէս, հայերի զգայի մասը, որոնք ցրուած են աշխարհի շատ երկրներում, 1895-96 թուերին եւ 1915-16 թուերին սուլթանական կառավարութեան կողմակերպած՝ Քրիստոսոստանի բնակչութեան զանգուածային արկունտ ջարդերի հետեւանքով, — բնակչութիւն է հաստատուել աւելի կամ պակաս համախօսութեան: Այդ պարագան, ինչպէս եւ այն, որ բուն ցրում ժամանակից համեմատաբար քիչ տարիներ են անցել, բացատրում են հիմնական ազգային գծերի եւ լեզուի պահպանումը հայերի կողմից: Բայց պէտք է յիշել, որ ոչ ոք քիչ թուով հայեր, որոնք երկար ժամանակ ապրել են տարբեր երկրներում, ձուլուել են այն ազգերի հետ, որոնց մէջ բնակչութիւն են հաստատուել»:

Մամերեանը Նոյն ձեռով առարկում է եւ բանավէճի մասնակից Կողովին, ասելով, թէ քայք հեղինակները, որոնք հոգեբան, խօսում են ազգի տեսութիւնը նորից մշակելու անհրաժեշտութեան մասին. իսկ դրա հետ չէ կարելի համաձայնուել: Նա գտնում է, որ Ռոզաչովի եւ Մեքրդիւնի տուած ազգի բնութագրումը ճշգրտութեամբ, ոչ էլ հարստացում է արդէն յայտնի մարքսիստական սահմանումը: Մամերեանը առարկում է «էթնիկական պատկանելիութեան ինքնագիտակցութեան» դրոյթին: Նա արձանագրում է, թէ պէտք է նշել, որ ինչպէս Պ. Մ. Ռոզաչովի եւ Մ. Ա. Մեքրդիւնի յօդուածում, այնպէս էլ բանավէճային միւս նիւթերի մէջ, հեղինակները շատ են դրում ազգերի դարաշրջանի մէջ նոր փաստերը, նոր երեւոյթները հաշուել առնելու անհրաժեշտութեան մասին, բայց, դժբախտաբար, շատ թույլ են իրազօրծում այդ նիւզ պահանջը: Մամերեանն այդ առթիւ եղբակացնում է.

«Գիտութեանը պակաս վնաս չի հասցընում յարարերու պաշտութիւնը, այդ հարցում, գիտական սահմանումները նշանակութեան թերագնահատումը: Գիտական հետազոտութեամբ մէջ հարկաւոր է զգուշանալ ինչպէս դոգմատիզմից, այնպէս էլ յարարերու պաշտութիւնից, իսկ դոգմատիզմի դէմ պայքարը բնաւ չի նշանակում անպայման հրաժարուել մարքսիստական այն սահմանումներից, որոնք գործնականում դիմացել են քրոնոլոգիային, կամ դրանք ամէն գնով փոխարինել նոր ստիմուլումներով ու ձեւակերպումներով: Վերելում ասուածը հաշուի առնելով, մենք առաջարկում ենք ազգի հետեւեալ սահմանումը: Ազգը մարքսիզմը՝ կոսյոտայիզմի ու սոցիալիզմի դարաշրջանի էթնիկական ընդհանրութեան պատմականօրէն բարձրագոյն ձեւն է, որը բնութագրուում է տնտեսական կեանքի, տնտեսութեան, լեզուի եւ ազգային բնութարարութեան ընդհանրութեամբ, ինչ որ դրսեւորուում է նրա մրջակայթի իւրայատուկ առեմնայատուկութիւնների մէջ»:

Մամերեանն այնուհետեւ քննութեան է առնում ազգերի պատմական տեսակների հարցը, շեշտելով, որ սոցիալիստական ազգերի մօտ արժանապէս փոխւել է երկու յատկանիշների՝ տնտեսական կեանքի ընդհանրութեան եւ հոգեկան կերտուածքի ընդհանրութեան կամ ազգային բնութարարութեան բովանդակութիւնը, մինչդեռ միւս երկու յատկանիշները, այսինքն լեզուն եւ տեքստորիան, էական փոփոխութեան չեն կրել: Նա աւարկում է նրանց, ովքեր կոսկածի տակ են դնում շարք յատկանիշները սոցիալիստական ազգերի մօտ, կամ թողնում են միայն մէկը՝ լեզուն, իսկ միւսները զատապարտում աստիճանական մարմանու ճեման պնդումները, — ասում է Մամերեանը, — մեր տեսակէտից, հեռանում են իրականութիւնից: Մամերեանը եզրակացնում է.

«Քրոնոլոգիան առնելով խորհրդային սոցիալիստական ազգերի բոլոր յատկանիշների բովանդակութիւնը, մենք սեւեռում ենք, որ դրանց մէջ չկայ մէկը, որը մի ազգի հակադրէր միւսին կամ անհաշտելի հակասութիւնների աղբիւր ծառայէր նրանց միջեւ: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ այժմ դեռ վաղաժամ է խօսել որեւէ հիմնական յատկանիշի ճարտարան» մասին՝ սոցիալիստական ազգերի մօտ: Մեր բարոնուումը, նրանցից եւ ոչ մէկը չի անհետանում ու ոչ մի նոր յատկանիշ չի գոյանում սոցիալիստական ազգերի մօտ: Բարձրական ազգերից նրանց տարբերութիւնը կայանում է նրանում, որ ազգի հիմնական յատկանիշները սոցիալական այլ բովանդակութիւն ունեն»:

Վերջապէս, Մամերեանը անդրադառնում է ազգը եւ ազգային պետականութիւնը՝ նիւթին, անելով այլեւայլ հաստատումներ ու աւարկութիւններ, պաշտպանում հենց իր՝ դրանից առաջ արդէն արտայայտած դրոշմները: Այդ հարցում Մամերեանը հասնում է հետեւեալ եզրակացութեան.

«Խորհրդային դաշնակցութիւնը, ազգային խորհրդային պետականութիւնը գոյութիւն է ունենալու, զարգանալու եւ կատարելագործուելու, ընդհուպ միջին խորհրդային պետութեան՝ կամ միատեսակ հասարակական ինքնակառավարման վերածուելը: Կամուկիզմի յազթանակից յետոյ ազգային տարբերութիւնները դեռ երկար ժամանակ գոյութիւն կ'ունենան, իսկ սոցիալիստական ազգերը կը վերածուեն կամուկիստականի: Կարելի է ենթադրել, որ դա արտացոլում կը գտնի նաեւ կամուկիստական հասարակական ինքնակառավարման մարմինների մէջ, մինչեւ որ տեղի ունենայ ազգերի լրիւ ձուլումը»:

Մրանց են մտկոլեան բանավէճին մասնակցած չորս հայ հեղինակների հիմնական մտքերը:

Լ. Մ.

ԳԱՅԼԸ՝ ԳԱՌԱՆ ՄՈՐԹՈՎ



Այս ամսոյն, արտասահմանի մեր իրականութեան կարեւորագոյն իրազարձութիւնը եղաւ թրքական զեռպանատան բողոքին հետեւանքով քաղաքիս երկու օրաթերթերուն՝ «Ազգակ»-ի եւ «Ջարթօն»-ի դէմ բացուած դատը, այն ամբաստանութեամբ, որ անոնք, իբր թէ, հրատարակութեան տուած են թուրքիոյ նախագահը նախատող յօդուածներ:

Եւ որովհետեւ խնդիրը կը վերաբերի մամուլին, «Բազին» պարտք կը համարէ արձանագրել կարգ մը փաստեր ու ասպարտութիւններ:

Թուրքերուն զիւրազգացութիւնը վրդոված խնդրոյ առարկայ յօդուածները ստորագրած էին Նշան Պէշիկթաշլեան, Արամ Հայկազ («Ազգակ») եւ Վեր. Ե. Գ. Ծոնաղեան («Ջարթօն»), առջի եւ անցեալ տարիներուն: Յաջորդող էջերուն արտագրուած այդ գրութիւններուն տոջեւ՝ թուրքերուն թրքաթիւնը բացայայտող աւելի ուժեղ յօդուածներ մտաբերելով՝ ընթերցողը հարկաւ վերստին պիտի զարմանայ ու առաջին վայրկեանին պիտի դժուարուայ կռահել ջարդարարներու նոր ժառանգորդներուն յետին միտքը: Արդարեւ, հայ թէ միջազգային մամուլին մէջ, ինչպէս նաեւ թուրք ոգիին անդրադարձող առանձին հատորներու էջերուն՝ ջարդարարներու քնազըլ յայտնարիւղը քնորոշիչ շատ աւելի ծանր յօդուածներ կարելի է գտնել, կան, բայց թուրքերը անոնց հանդէպ այսքան զգայուն երբեք չեն գտնուած, գատական հետապնդումներու քնաւ հարկ չեն տեսած, բայց որ ահաւասիկ զիրենք մանրանկարող մանրանկար արտանայումներու դիմաց ա՛յն աստիճան կ'անհանգստանան, որ չեն վարանիր մինչեւ իսկ սոնձգութիւններու դիմել՝ խոցուած արժանապատուութեան սուտ ու փուտ պատրուակներով:

Ի վերջոյ ի՞նչ ըսած են զմեզապարտք նկատուած գրութիւններուն հեղինակները, եթէ ոչ այն՝ որով միշտ յիշորտացած են թուրքերը: Բացայայտած են անոնց հապէս արիւնտոս ուխտը ու տուած արեան ուխտադիրներուն հասարակաց անունը եւ նաեւ ա՛յն ճշմարտութիւնը, թէ կարգ մը կենդանիներու մօտ աւելի զգալի են մարդկայինական սպրումները, քան մարդ ու ժողովուրդ յօռտելու վայրագ բնազդներով ապրող մէջնիղիւսնի հարազատներուն արտին:

Թուրքերու վերադրուած դրպարտութիւններ չեն ասոնք, թուրքերու շարհիւն, հատարին սահմանումը կատարող ճշգրիտ արտանայումներ են, որոնք, յամենայնդէպս, խոտոր չեն համեմատիք իրենց առհասական ժառանգութեան, իրենց հոգին կազմող տարրերուն, արարքներուն, յայտարարութիւններուն: Իրենց մշակոյթը, եթէ ունին, բարձրացած է արիւնտ այդ հնչեղին վրայ եւ իրենց բանաստեղծութիւնը նորէն մարդակեր նոյն ոգիին

բխումն է: Գիշատիչի մը աշխոյժ բնագոյնները խոտացնող հետեւեալ տողերը
կը պատկանի թուրք բանաստեղծի մը:

Արդարութիւնը պիտի կապեմ ուրիս ծայրը,
Քաղաքակրթութիւնը ձիւս պայտերում,
Պիտի կործանեմ ամէն բան,
Քար քարի վրայ պիտի չթաղանմ,
Պիտի չմնան ա՛յ կանգուն ծառ, ա՛յ ալ կանաչ տերեւ,
Եւ այնպիսի աւերակներ պիտի սփռեմ,
Որ գանձեմ տեսնողները բւե՛ռ.— Հասկէ թուրքեր եմ անցեր:

Այս խօսքերը ըսողը թուրք մըն է ու թուրքերու մասին այլոց բաձը
տարբեր բան չէ: Տարբերութիւնը միայն ա՛յն է, որ քաղաքակիրթ աշխարհը
նման տարբերներ գործող, այսինքն աւեր, արհաւիրք, արեւի սփռող արա-
բածներուն միայն թուրք անունը չի տար, ունի եւ հոմանիշ ուրիշ բառեր եւ
երբեմն կը դիմէ հոմանիշ բառերուն...

Հոմանիշ նոյն բառերով է, որ էր մասին խօսած են մարդկութեան շքե-
րագանցուած հանճարները, Շէյքսպիրէն մինչեւ Մերվանդէս ու Տաօթայե-
վըսկի: Թուրքերը ինչպէ՞ս կը մեկնարանեն արդեօք հանճարեղ Շէյքսպիրի
կերտած նախ հերոսին երգումը («Թուրք ըլլամ, եթէ ճիշդ չեմ»)։ Իրենք
իրենք էին, թուրք էին Շէյքսպիրէն առաջ, Շէյքսպիրի օրերուն ու մտացին
նոյնը, թուրք՝ Շէյքսպիրի թոռան թոռներուն օրօք, պահելով նախնի եր-
գումին թարմութիւնը եւ ստիպելով մարդ էակը, որ շարունակէ թուրք ը-
լլալը համարել նախատիքներուն ամենէն անկրեկին: Նոյնքան պերճախօս է
Շէյքսպիրի միւս գործին, «Մակպէթ»-ի վհուկներուն ելոյթը, հազար զար-
չութեան հետ կաթսային մէջ թուրքի քիթ խտնելու անոնց անդուպ պար-
հանջը եւ Օթէյլի «Ալէպոյում» տեսած «քլիպատում քուրք շունը»։
Արդարեւ, թուրքերը ինչպէ՞ս կը հասկնան արդեօք այս բաները, կամ ինչ-
պէ՞ս կը կարդան Տաօթայեվսկիի «Քարամազով եղբայրներ» հատորէն աջ-
տաղրուած ու քիչ անդին գտնուող հատուածը, որ մեծաւշակ դրաղէտին
հերոսը մինչեւ անգամ կը խղճահարի անասունը բաղդատել թուրքին հետ...:

Շէյքսպիրի աւ Տաօթայեվսկիի կողքին, «Բագին»-ի այս թիւին մէջ
ընթերցողը կը գտնէ նաեւ թուրք հոգին պեղած Յ. Օշականէն բնորոշ հատ-
ուած մը, որ նոր փորձառութիւններու լոյսին տակ ու թափանցումի բա-
զառիկ շնորհի մը բերումով տարբադարձուած ու լոյսին հանուած է այդ
մտայլ տիպարին հոգեխոսարանական մտայլ կատոյցը:

Մինչև քանի մը տարի առաջ, մինչև ցեղասպանութիւնը անժամանցելի
ոճիւր համարող օրէնքին մշակումը, թուրքը իր բարբարոսութիւններով յոխոր-
տացող տարր էր. կ'ապրէր արեան բողբոջներու իրականութեամբ կամ յիշա-
տակներով, աւերակելու եւ աւերներու, ջարդելու եւ ջարդուածներու վախն
խօսելով կը հետանար: Յիշեալ օրէնքին մշակումէն ու մեր պայքարին ստա-
ցած նոր թափէն ի վեր, մանաւանդ Եղեռնի Յիսնամեակէն ետք՝ բոլորովին
փոխեց ան իր ոճը, սկսաւ դառան մորթ հաւելլ, դաւարիլ, բղաւել, սպառնալ
ա՛յն մտքով, թէ հայ ժողովուրդը լսեցնելով կրնայ ջնջել ցեղասպանի ան-
ընթելի իր խարանդ եւ խուսափել արդարութենէն:

«Ազգակ»-ի եւ «Ձարթօմէ»-ի դէմ բացուած դատը կը բխէր այդ մտա-
դրութենէն ու ատոր դէմ էր, որ մեր ժողովուրդը ծառայաւ իր բոլոր խա-

չկրով, վրասակցութիւններով ու ժիւթիւններով, երեսփոխաններով ու պարզ արհեստաւորներով, մտաւորականութեամբ եւ ուսանողական շարքերով, ծերերով ու կիներով, ամէնքով ու ամէնբարձէկ մարդու պէս ուղի ելուն ու բացուած դասին առաջին նիւտին, Մայիս 20-ին, քսան Հոգարով խոնոտեցան Արդարութեան Պայտօտին ներսն ու դուրսը, իրենց կամքը պարտադրելէ աւելի՝ արդարութեան խօսքը լսելու պապակով: Մեր ժողովուրդին հետ հոն էին եւ մեզի հետ էին մեր դատը ստանձնած լիբանանցի մեծանուն փաստաբանները, յրապրողները, մտաւորականները, երեսփոխանները, որոնց կամքը, ողին, արդարութեան ըմբռնումը խապուց Մէթր Մոհակն Սլիմ, ատենանիւն ձուլեւ յայտարարելով:

«Լիբանանը միջազգային բնմ զրն է արդար ու մարդկային բոլոր դատերուն համար: ... Այս բողոքը ուղղուած է խօսքի ազատութեան սկզբունքին դէմ, որ կը կազմէ հիմէն Լիբանանի յանրժականութեան: Արդ. մենք կը յայտնենք, թէ ո՛չ Թուրքիան, ո՛չ քուրդերու կառավարութիւնը եւ ո՛չ ալ որեւէ պետութիւն, Արեւելէն թէ Արեւմուտէն, չի կրնար կաշկանդել լիբանանեան ազատութիւնը և ինքզին պարտութեան և ազատութեան խօսքը»:

Յաջորդ օրերուն ու շաբթներուն, Լիբանանի մամուլը անսխալ թաց ներկաչանկութեամբ մը մէկ կողմէն խտորէն ձողկեց Լիբանանի ներքին դժբերուն մէջ փորձուած թրջական ստնդլութիւնը եւ միւս կողմէն՝ շուրջ դաժբեր ընծայեց Արդարութեան Պայտօ փութացող մեր քսան Հոգարին, որ եղաւ ու մնաց դուստ, կարգապահ ու լուրջ՝ դասին ամբողջ հոլովոյթին:

Երեսօյթին մասին ամբողջական դադար մը տալու համար, ստորեւ կը ներկայացնենք նշան Պէշիկթաշեանի, Արամ Հայկազի եւ Վեր. Ե. Գ. Ճոնսպեանի դրութիւններուն «ճեղաւոր» նկատուած մասերը եւ թուրքերուն թրջութեան մասին վկայող ա՛յն փաստերը, որոնց մասին խօսք եղաւ վերը:

ԹՐԲԱԿԱՆ ՎԻՐԱՐՈՒԹՈՒԹԻՒՆ

«Թուրքիոյ մէջ ալ կ'ուզեն կատարել ազատաւստում արտի: Թորթին գլուխը կեցած է վիրաբոյժ Տոքթ. Սիլամի Էրսէֆ, աջակցութեամբ իր օգնականներուն:

Հայտարարաշայի հիւանդանոցին մէջ, 34 հոգիէ բաղկացած բժշկական խումբ մը, կազմ ու պատրաստ է, անցնելու համար գործիս:

Բարերար որոշում մըն է այս: Պէտք է բոլոր բուրքերուն սիրտերը տեղէն հանել ու տեղը տնկել նոր սիրտեր:

Անուրամալի է որ բուրքերը ղզմն, սիրտ գալոյի > Գոնէ: շան սիլտի տընկելու է անոնց կարծքին տակ, զանոնք ընտանեցնելու համար»:

Այնուհետև, շան սիրտերով՝ բող հազեմ կամ գիրար խածնեն: Բայց հանգիստ բող բողուն հովիւները եւ ոչխարները:

Եթէ շան սիրտ ունենամ, հաւանաբար անկի կը սիրուին ամերիկացիներուն կողմէ, որոնց մէջ շնագաշտները շատ են, շնագաշտները շատ հարուստ են եւ յաճախ մեծ ժառանգութիւններ կը բողուն իրենց ամենասիրելի շուններուն:

Թուրքերը անկի պիտի սիրուին նաեւ համայնավարներուն կողմէ, որոնք գիրենք կրնան մարզել ու գործածել սահմաններու հսկողութեամբ համար, որպէսզի ոչ ոք չփախչի դրախտէն, զժոխք մտնելու համար:

Ուրեմն այս գործէն ալ պիտի շահին բախտաւոր բուրքերը: Բարոյապէս ալ պիտի շահին, զառքելով գայլ ըլլալէ, զառնալով շնասիրտ, հաւատարիմ՝ իրենց ուտելիք միսերուն ու ռսկերներուն:

«Ազգակ», 14 Հոկտեմբեր 1968

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՊԱՇԼԻԱՆ

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՏՕՆԸ



«Ճրանստն բուրքերուն յանձնեց մեր կիլիկիան, ու Անգլիան ազատ արձակեց իր գերեզմարած 65-000 բուրք գինուարներն ու Մալթայի սնորհ-գործներուն վահմակը:

Յետոյ նստեցան Նիւրեմպերկ խաղալու:

Իրաւ որ միւս ազգերը ռննցան իրենց Նիւրեմպերկը:

Մենք էր որ մնացինք բացը:

Ստիպուած եղանք մեր Նիւրեմպերկը մեր ձեռքով սարքել:

Խան հոյսկի, Զիւանչի, Թայաաթ, Սայիտ Հալիւ, Պեհաւտսին Շա-ֆիւր, Ճեմալ Ազմի, Բանի մը ուրիշ մանրութներ...

Ի՞նչ բնիմք... Ստիպուած էինք... Պարտի-պահանջի տեսլակին մէկ կողմը բաց էր մնացած:

Պէտք էր հաւասարակշռել:

Ու հաւասարակշռեցինք:

Մեզք մե՞րն էր...

Ու այն գրիչները, որոնք դարերով այս ժողովուրդին մարտիրոսագրութեան պատմութիւնն էին արձանագրած, նոր էջ մը բացին ու հպարտութեամբ գրեցին.

ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

ԲԱՇ ԱՐԱՐԱՆ

ՂԱՐԱՔԻԼԻՍԷ

Դրօ, Սմբատ, Սեպուհ, Անդրանիկ:

Անկախ Հայաստան:

Յարութիւն առինք:

Այսօր, կամք՝ ու վազը նորէն պիտի ըլլանք:

Մենք կուշտ ենք, իրենք, մեր դասիները՝ անօրի:

Մենք առողջ ենք, իրենք, իրենց վկայութեամբ՝ հիւանդ:

Մենք քաղաքակրթութեան պատմութիւն ունինք, իրենք՝ ոճիրի:

Մենք ոգորմութիւն կու տանք, իրենք յախտնական մտրացիկ են դարձած:

Մեր հայրենիքն ու իր սահմանները լոյսերու մէջ կը շոգան, իրենց երկիրը խուարի մէջ է:

Մենք համաշխարհային համբաւով գիտնականներ ունինք, իրենք՝ համաշխարհային համբաւով ոճրագործներ:

Այլ բռն՝ մ...

Կարծեմ կը բաւէ:

Բայց արդար ըլլալու համար, պէտք է նաեւ ընդունիլ, քէ իրենք ալ բան մը տուած են աշխարհին.

ՅեղձԱՊԱՆՈՒԹՅԱՆ գիտը իրենցն է:

Իրենք եզած են գայն առաջին անգամ գործադրողները, երբ դեռ այդ բառը գոյութիւն իսկ չուներ բառարաններուն մէջ»:

«Ազգակ», 23 Ապրիլ 1969

ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

ԻՆՉՈՒԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆԷ



1.— «Որովհետեւ թուրքերը ծոյլ, անպաշար, անհասարիմ, ազտուտ եւ գաղ էին, իսկ հայերը՝ աշխատասէր, հասարակիմ, մաքուր եւ ազնիւ:

2.— «Իտալացի, թուրքին ձեռքին սակ ապրած են քրիստոնեայ եւ մահմադական շատ ազգութիւններ՝ հայեր, յոյներ, պուլկարներ, սերպեր, սառքիներ, արաբներ, ֆուրտեր, տիւրքիներ... Բայց անիկա անուցովէ ո՛չ մէկուն հետ կրցած է խաղաղութեամբ ապրիլ. անոնց ամենքն ալ հալածեց, կողակտեց եւ զարդեց: Իրականութեան մէջ թուրքը մարդկութեան անէծքն է: Արիւն ծծող ստրուկն է:

3.— «Իսկ եթէ բարեշրջութեան օրէնքով մարդը կենդանիէն յառաջ եկած է, չեմ կրնար դասաւորել, քէ որ գազանէն յառաջ եկած է: Որովհետեւ գազանը աւելի գուր ունի, քան թուրքը:

4.— «Շան չափ զգացում չունեցող այս ցեղը ուսկի՞ց յառաջ եկած է: Չգա՛ր չարով»:

«Զարթօնք», 24 Ապրիլ 1969

Վ.Ն. Ե. Գ. ՃՈՆԱԶԵԱՆ

ՕՏԷԼԼՕ

ԱՐԱՐՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ, ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

ԵԱԿՕ

Iago

Հաւ է, լաւ, գիտենք,
 Դուք դուրսը բանակակ, տան մէջ
 զանգակ էք,
 Խոհանոցի մէջ՝ վայրենի կատու,
 Ուրբ էք ուրիշին վիրաւորելիս,
 Ինչ էք, երբոր ձեզ վիրաւորում են,
 Տեսնուածքեան մէջ սիրում էք խաղալ
 Եւ անկողնու մէջ տնտես ձեռնալ:

Come on, you are pictures out
 o' doors;
 Bells in your parlours; wild-cats
 in your kitchens;
 Saits in your injuries; devils
 being offended;
 Players in your housewifery;
 and housewives in your beds.

ԴԵՏԵՄՈՆԱ

Desdemona

Թո՛ւն էք, բամբասող:

O, fie upon thee, slanderer!

ԵԱԿՕ

Iago

Ճիշդ է, թորք դառնամ, թէ սուտ եմ
սասում:

Nay, it is true, or else I am a
Turk.

ԱՐԱՐՈՒԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԴ, ՏԵՍԱՐԱՆ ԵՐԿՐՈՐԴ

ՕՏԵԼԼՕ

Othello

Գրեցէք այսպէս եւ անշարժ էք,
 թէ Ալեքսանդրի
 Մի փառքազատը շարագործ տաճիկ
 մի օր ծեծում էր
 Մի վենետիկցու եւ հայտնում էր մեր
 պետութեանը,
 Իսկ ես բռնեցի այն քլփառուած
 շան կոկորդից եւ քան
 Ջարկեցի, այսպէս:

And say besides,
 That in Aleppo once,
 Where a malignant
 And a turban'd Turk
 Beat a Venetian
 And traduc'd the state,
 I took by the throat
 The circumcised dog
 And smote him, thus.

ՄԱԿՊԷԹ

ԱՐԱՐՈՒԱԾ ԶՈՐՐՈՐԴ, ՏԵՍԱՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ա. ՎՆՈՒԿ

1 WITCH

Կարայի շուրջ պտոյտ գործենք,
 Թունաւ աղի մէջն անհեղձ:
 Գորս, որ սուր խալի՛նակ
 Տի ու գիշեր երեսունն է
 Թայն եւ թարի շարունակ,
 Մեր կարայում ճախ՝ եւ եկ:

Round about the cauldron go;
 In the poisoned entrails throw:
 Toad, that under cold stone
 Days and nights has thirty-one
 Sweltered venom, sleeping got,
 Boil thou first i' th' charmed pot.

ALL

ԱՄԷՆՔԸ Պ Ի ՎԷՂ

Double, double, toil and trouble:
Fire, burn; and cauldron, bubble.

Դիւթուիր, դիւթուիր, սամանք,
Որիւթուիր:
Կարսայ, փրփրա', բոց, վառուիր:

2 WITCH

Բ. ՎՆՈՒԿ

Filet of a fenny snake,
In the cauldron boil and bake;
Eye of newt, and toe of frog,
Wool of bat, and tongue of dog,
Adder's fork, and blind-worm's sting,
Lizard's leg, and howlet's wing,
For a charm of powerful trouble,
Like a hell-broth boil and bubble.

Նահնի օտի մէջքի միս,
Կարսայի մէջ հաւ' դու,
Մոլէսի աչք, գորտի բութ,
Չղջիկի բուրդ, շան լեզու,
Կլէզի սառ, բուի բետ,
Իծի լեզու երկժանի,
Կայր օտոտնի խայրոցն էլ,
Որ բովչանքը պինդ լինի,
Որպէս սպուր դժոխքի,
Լաւ հոսցէք, փրփրացէք,
Ամեն դիւթի, յառուրքի
Զօրեղ խառնուրդ կազմեցէք:

ALL

ԱՄԷՆՔԸ

Double, double, toil and trouble:
Fire, burn; and cauldron, houble.

Դիւթուիր, դիւթուիր, սամանք,
Որիւթուիր:
Կարսայ, փրփրա', բոց, վառուիր:

3 WITCH

Գ. ՎՆՈՒԿ

Scale of dragon, tooth of wolf;
Witches' mummy: maw, and gulf,
Of the hemlock, digged i' th' dark;
Liver of blaspheming Jew;
Gall of goat, and slips of yew
Slivered in the moon's eclipse;
Nose of Turk, and Tartar's lips;

Վիշապի բեփ, գայլի ստամ,
Վհուկների մաւխաներ,
Մովի անյագ շնատգան,
Կակորդը եւ աղիքներ,
Մքուրեան մէջ գեանից համուած,
Մուլխիների դառն արմատ,
Բոզ մօր ցկնած, փոսում բարուած
Երեխայի ձեռքի մատ,
Այծի լեղի, գեղճի ստ,
Լեարդ հայհոյիչ երեայի,
Թաքարի շուրք, բուրբի ջիթ,

Թ Ո Ւ Ր Բ Ե Ր Ը

— Ի միջի այլոց, վերջերս, Մոսկուայի մէջ, համդիպեցայ Պուլկարացիի մը. — շարունակեց ի վան, ըստ երեւոյթիմ շլտելով եզրօրը խօսքերը, որ պատմեց թուրքերուն եւ չեքէզներուն գործած ռեփրմները ամբողջ Պուլկարիոյ մէջ, վախճալով պատմերու ընդհանուր ապստամբութիւն: «Անոնք կ'այրին գիւղեր, կը սպաննեն, կը բռնաբարեն կիներ եւ մանուկներ, ակամբներն կը գամեն բանտարկեալներ, այդ վիճակի մէջ ձգելով զիրենք մինչեւ առաւօտ եւ առաւօտան կը կախնն:

«Մարդիկ երբեմն կը խօսին անասնական անգթութեան մասին, բայց ատիկա մեծ անարդարութիւն եւ անարգանք է անասնանկերուն: Անասուն մը երբեք չի կրնար այնքան անգութ ըլլալ, որքան մարդը, որ արուեստագէտ է անգթութեան մէջ: Վագրը միայն կը բզկտէ եւ կը կրծէ — միակ բաները, որ կրնայ ընել: Անկա երբեք պիտի չմտածէ մարդերը իրենց ակամբներէն զամել, եթէ նոյնիսկ ի վիճակի ըլլայ այդ արարքը գործելու:

«Այս թուրքերը հաճոյք կ'առնէին մանուկներն ալ չարչարելէն, անջատելով մօրը արգամդէն դեռ չծնած երեխան, գոր օդին մէջ նետելով՝ կը բռնէին իրենց սուրբներով, մօր ներկայութեան:

«Մայն արարքը մօր աչքին առջեւ կատարելն էր, որ թուրքին կու տայր անասնական հաճոյք:

«Երեւակայեցէք դադողուն մայր մը՝ երեխան գրկին, շրջապատուած բշտամի թուրքերով: Թուրքերը ծրագրած էին ժամանց մը: Կը շոյեն երեխան, կը խնդան՝ գայն խնդացնելու համար եւ կը յարողին. երեխան կը խրնգայ: Այդ վայրկեանին, թուրք մը կ'ուղղէ իր հրացանը երեխայի դէմքին՝ չորս մասնաչափ հեռաւորութեամբ: Երեխան անմեղ խնդուքով վտիտ ձեռքեր կ'երկարէ հրացանին եւ այդ պահուն, թուրքը կը քաշէ փլթակը ու կը պայթեցնէ մանուկին ուղեղը: Ասիկա արուեստի գլուխ-գարծոց մը չէ՞»:

(«Քարամազոֆ եղբայրները») ՖԵՆՏՐ ՏԱՍԹԱՅԵՎՍԿԻ



...Անոր դեռ թարմ, անկազմ հոգիին մէջ, թուրքերուն սա նամազը, չարդէն կամ սպանութեան առաջ, կտաւ էր պայծառ, սարսափահիւս, տարօրէն իրական, ետքաբէն ինկած իր մէջ, կամ աւելի ճիշդը՝ Հայաստանէն հրաշքով իրենց գեղը հասնող բեկորներուն բերանէն, որոնք 96-ի ջարդերը կը պատմէին ակամատեսի իրենց ցնորեցնող սառնութեամբ, պատերուն մէջէն, ուր պահուած էին, երբ մեծափաթոց մոլլաներ կը կապէին պատանիները, չորսը-հինգը նոյն չուսով, գոր անոնց մայրը կը բերէր իր շորմալիք օճաքերով, ու կը շարէին պատին դէմ, անոնց աչքին տակ երկարելով սուրբը ու կը նստէին նամագի, այս անգամ անձնապաշտ բարիքի մը մեծ վայելելու խաղաղութեամբը, ու կ'աւարտէին արարմունքը գանդաղ, յորանցումն, առանց ծունկերուն լարուածքը արելու, կէս շրջան մը դառնալով ետ, զըլուխով, իրենց սուրբը հրամայելով բերել գահերուն, զանոնք ձգելով գետին ուրիշներու բազուկներովը, ճիշդ առջեւը այդ նամագի սէճեատէին, ու կը մօթէին, այսքը այսքին հասցնելու ուշադիր, գտնելով արիւնէն ու քսելով գայն իրենց կաշի մեթերուն (հողաթափ) ...: Այս բարքերն են ահա, գոր թուրքերը կը յաւակնին ներկայացնել աշխարհին իբր ինքնատիւ քաղաքակրթութիւն:

(«Մնացորդացի», Գ. Հասորը) Ե. ՕՇԱՎԱՆ

«ԲԱԳԻՆ»Ի ՖՈՆՏԻՆ

Տիկ. Ռօզ Փիլիպոսեան (Գալիֆոբիա) 500 տոլար կը նուիրէ «Բա-
դին»ի ֆոնտին:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ԱՏԱՑԱՆՔ

Պատմութիւն արար. գրականութեան եւ մշակութի (ուսումնասիրու-
թիւն) Տոբ. Գ. Ասքարնեան, Պէյրութ, 1970
Հարսնաղբիւրի գեղուհին (Իրավէպ) Սարգիս Ղազարեան, Պէյրութ,
1970

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«Գ. ՄԵԼԻՏԻՆԵՑԻ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ»-ին արժանացած
ՆՇԱՆ ՊԵՇԻԿՔԱՇԼԵԱՆԻ

«ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ» Ը

Ընտիր քուղք, պատկերազարդ, մաքուր տպագրութիւն, 1150 մեծադիր էջ

Գին՝ 15 լ. ոսկի
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ 5 Տոլար

Ստանալու համար դիմել՝ «Բագին»-ի եւ «Ազդակ»-ի խմբագրատուններուն,
լինջպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի գրախանութիւն:

Ա Ր Ա Մ Ը

Ընտիր քուղք, մաքուր տպագրութիւն, պատկերազարդ, ոսկեկազմ

Գին՝ Լիբանան 12 լ. ոսկի
Արտասահման 5 տոլար

Սօսեաց Տղան

ԱՔՄՈՐԱԿԱՆԻ ՄԸ ՅՈՒԹԵՐԷՆ

Ընտիր քուղք, մաքուր տպագրութիւն, լաթակազմ

Գին՝ Լիբանան 5 լ. ոսկի
Արտասահման 2 տոլար

Ն. Ազրայեանի երկերու Դ. հատորը, Պատմութիւն Հայոց Գրականու-
թեան, ընտիր քուղք, մաքուր տպագրութիւն, ոսկեկազմ:

Գին՝ Լիբանան 10 լ. ոսկի
Արտասահման 4 տոլար

Տպարան
ՀԱՄԱԳՊԱՅԻՆ

ՏՈՒՐՈՒՆ ԲՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

ԷՖԵՐԱՆՆ 22 Լ. 000Թ
ՈՐ. ԱՌՈՒՆԴՈՒՆ 8 ՏՈՒՐՈՒՆ
ՀՈՒՏՈՒՆՆԻՔ 2 Լ. 000Թ



Վարչություն
G. SASSOUNI
Rue Sélim Boustani
Beyrouth - Liban